

ԺԲ. ՏԱՐԻ

ԹԻԻ 3

ՄԱՐՏ 1973

R.A.R.@

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

...	Աղասի Այվագեան
ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ	Բոլերո
»	Ձիերին յատկացուած ցանապարիը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Անհանդարտ արմատ
»	Տիրութեան դրան վրայ
»	Սուսերս ըրած ինծի շնկեր
»	Քսանըհինգերորդ ժամ
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Սրբազան անպարարութիւն
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Լուսարձակ
Բ. ՄԸՔՆԱՄԱՐԱ	Ի՞նչ է տաղանդը՝ առանց արտայայտութեան միջոցի
Ն. ՍԱՐԱՅԵԱՆ	Խոստովանութիւնը գրականութեան մէջ 11
Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ	Ն. Սարափեանի «Միջերկրական»ը
Մ. ԷՍԼԻ	Սամուէլ Պէֆէր (Հայացուց՝ Ք. Չինպաշեան)

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ո. ՊԱՐԻ. ԹԻՒ Ձ

Մ Ա Ր Ց 1 9 7 3

ՊԷՑՐՈՒԹ



Ա Ղ Ա Ս Ի Ա Յ Վ Ա Ջ Ե Ա Ն

Քաղցինձի նախորդ թիւով ներկայացուցած էինք «Գրական քննքքի իւրճադրական կազմին կողմէ մրցանակով պատկուած շարաթափերթին 1972 թրւականի աշխատակիցները, որոնց կարգին մրցանակ շնորհուած էր նաեւ

Սեղանի Այվազեանին՝ «Բուրբուր» (թիւ 1) եւ «Ձիւնի կրկար ճանապարհը» (թիւ 15) պատմութեան շնորհիւ:

Մրցանակի արժանացած բանաստեղծական լարջէն (Մարտ Մարտիան) եւ, Հետաքրքրութեան համար՝ կ'ար-

տագրենք նաեւ Այվազեանի երկու պատմութեանը, որոնցմէ առաջինը ուշադրու է իր մթնոլորտով, եւ երկրորդը՝ խորհրդանշաններով, տարածով ու զաւգարական նպատակաւարութեամբ:

Աղանի Այվազեան ծնած է 1925ին, Վրաստան: Հրատարակած է նորովէպերու եւ երգիծական գրութիւններու մէկական ժողովածու: Իր անունը լայն ճանաչում գտաւ «Եւսանիւնի» խորագրուած գործով, որ Հետազային վերածուեցաւ ժողովուն: Կը համարուի Հայաստանի երկրաւարական արձանի լուսագոյն ներկայացուցիչներէն մէկը:

ԱՂԱՍԻ ԱՅԿԱԶԵԱՆ

Բ Ո Ւ Ե Ր Օ

(ԱՄԱՆՈՐԵԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ)



Սոփին լարում էր իր յոգնած մկանները, հաւաքում-ձգում մարմինը՝ աշխատելով պահպանել նախկին ուժի մեծ զգացողութիւնը եւ շարժումը բեմահարթակի վրայ... Հնարաւար պահերին հազիւ հասցնում էր սրբել պարտնոցի եւ թեւերի քրտինքը, քիչ յետոյ նորից նրա յոգնած մարմինը դառնում էր խոնաւ, լպրծուն... Տհամ էր յատկապէս, երբ էլզարը՝ պարբնկերը, գրկում էր Սոփի իրանը, բռնում էր նրա թեւը, նրանց խոնաւ մատները իրար մէջ էին մտնում. Սոփին աւելի էր զգում իր յոգնածութիւնը: Այդպէս յոգնած էին բոլոր զոյգերը: Ներկայացման վերջն էր: Վերջացնելու ցանկութիւնը, յոգնածութիւնը մի տեսակ ղդայնացնում էին նրան, ու այդ զրզուածութիւնը, ի հեճուկս մարմնի, ի հեճուկս յոգնածութեան, աւելի էր ուժ տալիս նրան, ու նրա շարժումները առաւել կտրուկ ու ողկնչուած էին դառնում եւ ուզում էին պոկել մարմինը բեմահարթակից: Սոփին զգում էր իր հարթ, սիրունիկ պարնկերով յոգնածութիւնը եւ նրա պաշտօնական-մասնագի-

կան քաղաքավարի վերաբերմունքը: Ու երբ նա բռնում էր Սոփիի գոտկատեղից եւ ժպտում էր պատրաստի, միջնորմում ժպտում, աշխատանքային ժպտում, Սոփին աւելի էր զգում, որ իրենք մէկմէկու օտար են... Եւ Սոփին մենակ էր պարում քալերան, այդ միասնութեան, տղամարդու եւ կնոջ ի սկզբանէ միաձույլ, մի մարմին ընկու հիւմնը: Սոփին աչքի պոչով տեսնում էր միւսներին ու նրան երեւում էր, որ բոլորն են այդպէս պաշտօնապէս, իւրաքանչիւրն իր հոգսերով, իր մէջ ընկզմուած, իր յոգնածութիւններով, իր օտարութեամբ պարում: Սոփին պարում էր մենակ ու մարմնի ամէն մի շարժումով ասում էր. «Տեսէ՛ք, մե՛նք ենք, մե՛նք ենք, տղամարդ եւ կին միասին: Աշխարհի ուժը, մի մարմին, աշխարհի սկիզբը, ո՛ւժ, ո՛ւժ, ո՛ւժ... Մենք միասին ենք ու ոչինչ մեզ չի կործանի: Մենք միասին ենք, եւ մենք մեծ ենք, մենք ստեղծում ենք... Տեսէ՛ք, ինչպէս իրարից են ծնւում մեր շարժումները, մի մարմնի շարժումներ են: Գալի՛ս ենք... Գալի՛ս ենք... Չկայ աւելի

բարձր բան, աւելի իմաստուն բան... Տղամարդ եւ կին միասին... Ամբողջական, ամբողջական... Մի ներդաշնակութիւն»:

Սոֆին նայեց էդգարի աչքերին ու վերջնականապէս զգաց իր թուլութիւնը, նայեց նրա քաղաքավարի ժպիտ ցուցադրող աչքերին, ճինշո՞ւ եւ այդքան քաղաքավարի, ինչո՞ւ եւ այդքան մենակ:

Պմբի պարուհի Լենան թերեւս ուրախ էր, որ ներկայացումից յետոյ Գառնիկը իրեն չի սպասելու փողոցում. Գառնիկին ասաց, որ իրենց իւեռայի 70ամեակն է եւ որչի՛ էն ներկայացումից յետոյ մնալ, անյարմար է, մի կոլեկտիւում են, իրենք էլ են դառնալու եօթանասուն տարեկան, չէ՞... Աստուած իմ, եօթանասուն տարեկան պարուհի: Լենան բռնեց իրեն այն մտքի վրայ, որ եթէ իրեն լաւ է զգում այսպէս, էլ ինչի է պէտք, որ ընդհանրապէս Գառնիկը սպասի... Յետոյ Լենան մտածեց, որ Հիմա ամուսինը իր աղջկայ Համար ձուածնդ է անում եւ պատրաստուած է նրան քնեցրնելու: Ինչո՞ւ է այսպէս, Աստուած իմ... Եւ մի՞թէ մեղաւոր է ինքը, ի՞նչ անի, ինչպէ՞ս անի...

Իւեռան, այդ ծեր, փոքրամարմին եւ թուշնաման կինը, մէկ անհանգիստ կանգնում էր բեմի կուլիսների ետեւում, մէկ վազում էր վերեւ՝ մեծ փորձասենեակ, որտեղ սեզան էին սարքում տիկին Արտեմիսը, Վարդուհի Նիկիտիչնան եւ ուր կամաց-կամաց հաւաքում էին բեմից ազատուողները:

Երբ Լենան ամէն պտոյտին նկատում էր իւեռային վարագոյրին կպած, ժըպտում էր նրան, վախենալով, որ իր հայրեացքը չքերծի փխրուն Իւեռային:

Տիկին Արտեմիսը, Հին պարուհի, Եւրոպայի կէսը ստնասակ արած, Պետերբուրգի թատրոնի մենակատար, այժմ լլիւ ճերմակած, ու, չնայած ութանասուն տարիներին, դեռ պահպանում էր պարուհու կեցուածքը: Երբ նրա շարժումները մատնում էին նախկին պարուհուն, տիկին Արտեմիսը շատ երիտասարդ էր թոււում, երիտասարդ ու միամիտ, կա-



Գծանկար՝ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

րելի էր մտածել, որ ընդհանրապէս մարդ ոչ թէ ձերանում է, այլ ուղղակի մաշուում:

Թէպէտ նա միշտ երկրպագուներով էր շրջապատուած, եւ կրտսեր Մանթաշովը նրա կօշիկով կենաց էր խմել, նա դժգոհ է եղել իր կեանքից. նա այդպէս էլ մենակ մնաց. փայլուն ու մենակ, գեղեցիկ ու մենակ, կարծր ու մեծուկ... Նա ոչ ոքի չէր մեղադրում, ո՛չ նրանց, ովքեր թողնում-պնում էին, ո՛չ նրանց, ովքեր զուգուրէին կպում էին իրեն՝ իտե՛նց թուլութեան պատճառով: Նրանք իրար արժէին, եւ այդ լաւ զիտը տիկին Արտեմիսը: Նա ժպիտով էր նայել այդ բոլորին եւ համարել կեանքի օրէնք: Աւ թէպէտ մենակ, բայց առանց յատուկ աստապանքի էր ապրել նա, հուսաարժատանց երջանկութեան, առանց վիշտ զգալու: Տիկին Արտեմիսը չէր դժգոհում, որ խաբել են իրեն, նա գիտէր, որ դրանք ուղղակի նրա՛նք չէին, եթէ մնային էլ, նրանք պէտք չէին, նրանք ա՛յն չէին... Աւ ճերանք այն չէինն՞ էր նրա բնատրութեան Հիմնական նկարագիրը: Վարդուհի Նիկիտիչնան, հակասակ

տիկին Արտեմիսի, մի ներքին ընազդով ցանկացել էր այդ երջանկութիւնը: Մի-րեւէ էր մոլեգին, նախադրման, ինքնասպանութեան աստիճան: Ուր ասես դնացել էր տղամարդու հոտելից. զնացել էր ազգածակաւ, վիրաւորուել էր ազգրից, որովայնից եւ էլի պարել էր, էլի կառչել էր իր ուզածին: Ջղայնորէն որոնել էր, հիստերիկ եւ ճակատագրականօրէն բոլոր իր ուժերը շարել էր այդ ուզու-թեամբ... Ու միշտ փութել էր ամէն ինչ: Եւ այդ մղումը վերածուել էր մի կերպ նուաճելու, նոյնիսկ խելու ցանկու-թեան: Այդ թոճուրոճից մնացել էր մի ազդիկ եւ միակ նեցուկը նա էր դարձել: Իր այդ ցանկութեան ահաւոր չափից նա անասելի յոռնել էր... Ու մէկ-մէկ, երբ մտածում էր, իր յոռնածութեան հիմնա-կան պատճառը չէր կուսում, ինչպէս չէն կուսում շատ կանայք իրենց յոռնու-թեան հիմնական պատճառները:

Փորձասենեակ սկսեցին իրուել պա-րուհիները բնական ճանաչմանը: Ենթակայացումը վերջացել էր:

— Արագ նստէք... — կանչեց տի-կին Արտեմիսը, — մեզ օգնել պէտք չէ:

— Եւ ոչ մի տղամարդ, — աւելաց-րեց վարդուհի Նիկիտիչան՝ նայելով դրան կողմը, որտեղից ճանդերձարան զնացող տղամարդիկ ներս էին նայում:

Հայկուհին մտեցաւ տիկին Արտե-միսին.

— Բա Ադամի հետ ինչպէ՞ս վար-ւենք, — ասաց նա:

— Ի՞նչ Ադամ, — չհասկացաւ տի-կին Արտեմիսը:

— Դուլլիի Ադամը, — ասաց Հայկու-հին:

— Ոչ մի տղամարդ, — ասաց տիկին Արտեմիսը: — Մենք որոշել ենք, չէ՞, մեր շրջապատում...

Հայկուհին կմկմաց, ուզում էր շուտ գալ, չկարողացաւ:

— Ի՞նչ անենք, — կրկին հարցրեց նա: — Բա Դուլլիին:

— Դուլլիին:

— Դուլլին... Ադամը... — ասաց Հայկուհին եւ, տառնապելով, իրար ե-

տեից շարեց. — դիտէ՞ք ինչ է նշանու-կում Ադամը Դուլլիի համար... Նա տու-ջին փեսացուն է... Իսկ Դուլլին քառա-սուն տարեկան է... շտեմուած է, չէ՞... Դա մեծ բան է Դուլլիի կեանքում: Դուլ-լիին շատ են խաբել: Քառասուն տարի, խաբե՛լ են, խաբե՛լ են...

— Ո՞ւմ չեն խաբել... — մեղմա-ցած արտաբերեց տիկին Արտեմիսը:

— Ձէ, ախր, սա ուրիշ է, բոլոր-վին ուրիշ... Մենք էլ էինք կարծում, որ Դուլլիին չի կարելի հաւատալ: Եւ Ադա-մը հաւատում է:

Տիկին Արտեմիսի աչքերը մի դիժ դարձան, նա այդ դժերի միջից հայեացքն ուղղեց Հայկուհուն: Նրա այդ արտա-յայտութիւնը պարուհիները անուանում էին «պետերբուրգեան»: Այդ դիմախազը նշանակում էր՝ «Ես այնքան էլ չեմ հա-ւատում, բայց հետաքրքրական է, եւ ու-րովհետեւ ես կրթուած եմ՝ կ'աշխատեմ հասկանալ մի ինչ-որ ուրիշ մտքով, որ դուք չգիտէք: Բայց չկարծէք, որ ես այդքան պարզունակ եմ»:

— Այս օրը կարեւոր օր է Դուլլիի համար... — Հայկուհին էլի շատ բան էր ուզում ասել, բայց ասելիքը բովան-դակութեամբ միագիծ էր, իսկ գրանից եկող յուզմունքը՝ բազմատեսակ:

— Ընկերե՛ր, — դարձաւ տիկին Ար-տեմիսը պարուհիներին. — Եթէ մի տը-ղամարդ ներկայ լինի մեր յորելեանին, ոչի՞նչ...

Պարուհիների մի մասի համար տհաճ էր, բայց սակուցին, որովհետեւ յոգնած էին եւ միայն թէ շուտով վերջանար, ա-ւելորդ խօսակցութիւնով չձգձգուէր դի-չերը, իսկ միւսների համար ուղղակի միեւնոյն էր, թէ ով կը լինի եւ ինչու կը լինի...

— Ես կարծում եմ՝ ոչինչ, — աւե-լացրեց տիկին Արտեմիսը:

— Ո՞վ է, — հարցրեց պրիմա-բալե-րինա Նարինէ Ծուլուկեանը:

— Դուլլիի փեսացուն... — հումորով երանդաւորելով՝ լուրջ ասաց ինչ-որ մէ-կը:

— Էլի՞ է ճարել:

— Դուլի, Դուլի... — սենեակը լըցուց և ճայնարկութիւններով: Գրիմարար Դուլիին լուրջ չէին ընդունում եւ չփեսացուք բռն էլ արդէն ճիծաղելի էր թւում: Ղրա մէջ ինչ-որ էթնոգրաֆիկ հումոր կար: Դուլիին ամէն շաբաթ մի նոր տղամարդու հետ էին տեսնում, բայց չէին հետաքրքրւում, թէ ո՞վ է դա: Բուրբի համար հաճելի էր Դուլիին իր թեթեւութեամբ, իր անհոգութեամբ: Բարեւի հետ համարում էր, գրիմ անելու ժամանակ շտալ հաճոյախօսութիւններով էր համեմում պարուհիներին: Մի խոսքով՝ Դուլիին էր եւ նոյնիսկ հետաքրքրական էր նայել նրա փեսացուի վրայ:

— Բերէ՞ք փեսացուին, — աշխուժացան պարուհիները:

Իւետան ժպտում էր... Փորձասենեակում ամբողջ բալետի կանացի կազմն էր, օգուժ՝ յոգնած գրոյց, քրտինքի եւ օծանելիքի հոտ, գիշերուայ սահուն, հեռացող ժպիտ, սեղանի զլխին՝ դաշնամուրի ծօտ՝ Իւետայի ափիչը...

Երբ Դուլիին եւ Աղամը ներս մտան, ամբողջ սենեակը շրջուեց նրանց կողմը: Դուլիին մի պահ չփոթուեց, բայց ոչինչ չփոխուեց նրա դէմքին եւ կեցուածքում: Նա ամուրի բռնել էր Աղամի թեւը ու արագ եւ ուրախ նայում էր շուրջը: Նայում էին Աղամին, որպէսզի որոշեն, թէ ո՞վ է նա, ի՞նչ մարդ է, իրենց գիտցած տղամարդկանց ո՞ր տեսակին է պատկանում: Նայում էին նրա դէմքին, մտովի բռնում նրա գարկերակը, ուզում էին գտնել նրա ճակատի, քունքերի, պարանոցի, ձեռքերի վրայ ճիւղաւորում արիւնատար անոթների սկիզբը եւ վերջը: Իւրաքանչիւրն իր համար նախօրօք որոշել էր Աղամի տեսակը՝ գիտենալով միայն Դուլիին: «Հերթական ծանօթն է, որ ուղում է ամուսնացնել իր հետ: Նեղն է գցելու, թատրոնը որ իմացաւ, քաղաքը կ'իմանայ... Իր ցանկութիւնը փաստ է դարձնում... Ա՛յ, Դուլի, Դուլի... Օգտագործում է խեղճ Իւետայի յորելծանը... Ոնց էլ ճարել է: Շլացնել է ուզում իրը, տես, ինչ շրջապատ ունեմ»:

Նրանք ունէին բոլոր կաղապարները,

ընթացքին մէջ դունուող բոլոր շափուկուութիւնները, գիտէին յարարերութիւնների տարբեր դործակիցների օրէնքը: Բայց հիմա, հեռզհետէ, վայրկեան առ վայրկեան, բոպէ առ բոպէ աննկատ, անհասկանալիօրէն ինչ-որ բան էր կատարւում պարուհիների հետ: Նրանք աշխատում էին Աղամին յարմարեցնել իրենց պատկերացրածին եւ ոչ մի կերպ չէր օտարւում, ու ինչքան աւելի ժամանակ էր անցնում, այնքան աւելի կորցնում էին հողն իրենց ոտքերի տակ, շեղւում, մտնում էին մի անյայտ, խորհրդաւոր ոլորտ...

Դուլիին արագ-արագ ուղեկցեց Աղամին եւ ստացուեց այնպէս, որ նրանք նստեցին Իւետայի տեղը, սեղանի գլխին, ափիչի տակ...

Աղամը երկար պարանոց ունէր, ճերմակ մազեր եւ խաղաղ աչքեր: Դէմքին ժպիտ կար, շէ, դա աւելի շուտ անձանօթ մի արտայայտութիւն էր. դեռ նա չէր հասցնում ժպտալ՝ արդէն տիրում էր, չէր հասցնում տիրել՝ արդէն ժպտում էր: պարզապէս նա դեռ գաղափար չուներ ուրախութեան եւ տխրութեան մասին: Պարուհիները զիտակցութեամբ եւ փորձով հասկանալ այդ չէին կարող, սակայն վարակուած էին մի խորհրդաւոր կարօտով, ասես շատ հետուից ինչ-որ մի կորած բան էր դանդաղ մօտենում իրենց՝ մէկ շատ ծանօթ, սիրտ ճմլող, հի՛ն, հի՛ն մէկ անձանօթ, շատ նոր իւր կրկին վախեցնելու չափ սիրտ ճմլող: Հրաշքի էր նման: Իւրաքանչիւրին թւում էր, թէ դա յոյնածոթիւնից էր, գիշերուայ այս ժամից, ներկայացման շարուածութիւնից, երազի պէս մի քան էր, ճիւղաւորի մի պահ, որ կ'անցնի, կը շքեմայ թէլ անց...

Սոֆին նայեց Օլիային եւ զգաց, որ Օլիան նոյն վիճակում է, ուզում էր ժողատալ, կատակի տալ՝ շտապուեց, որովհետեւ Օլիան ոչ մի ներդրով չկապուեց նրա կատակի ցանկութեանը, նրանք ներքին վիճակներով աւելի կապուեցին, աւելի լեզու գտան: Սոֆին նայեց Դուլիին եւ իր յնգնածութիւնը, գիշերը, Աղամը, իր զգայական հրաշքի խառնուեցին իրար,

Թւում էր՝ Աղաժը այսքան պարուհիների մէջ միայն իրեն է նայում, ինչպէս լուսանկարների վրայի մարդիկ, որոնց որ կողմից էլ նայես, նրանց հայեացքը քեզ է ուղղուած...

Դուլին երջանիկ էր ու չէր հասցնում իմաստաւորել կատարուածը: Նա թեթեւակիօրէն երկիւղում էր, որ յանկարծ Աղաժին շատն էր անցեալի մասին:

Սոֆին նայելով Աղաժի կողմը, լուռ բարձրացաւ տեղից, ելաւ, կանգնեց դահլիճի կենտրոնում եւ ծնեց շարժումներ... Նա դեռ չէր հասնել պարի կօշիկները եւ ասեա թռչում էր յատակին չգիպչելով: Երաժշտութիւն չկար, ու պարուհիներից մէկի մօտ սկիզբ առաւ մի ձայն, յետոյ տարածուեց, տարածուեց, բոլորի բերանն ընկաւ ու առաջացաւ մի երաժշտութիւն, ասեա մարմնի ձայն էր, շարժման ձայն, լոյսի ձայն...

Թատրոնի փորձասենեակը շարժուում էր, լոյս ու մարմին խառնուել, հիւսուել էին իրար: լոյսը փաթաթուում, շոյում էր շարժումին, շարժումը մտնում էր նրա մէջ, ցանկանում պատառոտել լոյսի թաղանթը, բայց կորչում նրա բարի, համատարած իտրութեան մէջ... Պարում էին բոլորը, հրաւիրում իրար...

Հեթանոսական մի պար էր սկսուել, ու Աղաժն էլ ասեա կուռք էր, կրակ,

սրբապատկեր... Լոյսի առատութիւնից Աղաժի դէմքն ասեա կորցրել էր իր ծաւալը, հարթապատկեր էր թւում, սահմաններն անորոշ ու ահա ուր որ է, կը չքանայ դէմքը, կը լուծուի լոյսերի մէջ...

Ու պարուհիները վախենում էին, որ յանկարծ, երբ շուտ դան զէպի սեղանի զլխավերեւը՝ Աղաժը այլեւս չի լինի, որովհետեւ, ի վերջոյ, նա շատ էր իւրաքանչիւրինը, եւ ոչ մէկը չէր հարցրել միսին՝ արդեօք, իսկապէ՞ս գոյութիւն ունի այդ մարդը, թէ՞ միայն ինքն է ասեանում...

Այնուամենայնիւ, գտնուեց մէկը, որ հարցրեց.

— Իւետա՛, — ասաց նա, — չեմ հասկանում՝ թո յորելեա՞նն է, թէ Դուլիի հարսանիքը:

— Ոչինչ, — ասաց Իւետան եւ աչքերը կկոցեց, այսինքն՝ զու մի նեղանայ, աշխարհը մեծ է, ներդաժիւ եզրը եւ կրկին ասաց.— զարմանալի հարսանիք է... Հազուադէպ... Դա ամենալաւ նուէրն է ծննդեանս առթիւ... Տես ինչ գեղեցիկ է, ինչ մեծ բան է... Սա մեր հարսանիքն է, բոլորիս... Նայի՛ր Աղաժին... Իու կարծում եմ՝ նա միայն Դուլիին է հուստում... Ո՛չ, նա մեզ՝ բոլորի՛ս է հուստում...

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ

ՉԻԵՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ

ՃԱՆԱՊԱՐ ՀԸ

Ճանապարհն ունէր երկու ծայր, մէկը Բորժոմի կառքերի փոշոտ, աղմկոտ հաւաքատեղին էր, միւսը՝ կառքերի Ախալցխայի հաւաքատեղին:

Ոլորապտոյտ կովկասեան ճանապարհ, մերթ ձախ եւ մերթ աջ կողմից դեար, կառքի նստիքին կառապան Եուզանը, եւ առջեւում՝ դուրսնեցող կախ երկու ձի: Իջնում էինք զնայցքից, դըրսում Եուզանի կառքը եւ շարժում դէպի Ախալցխա, դէպի պապիս դով տունը, դէպի բալենու եւ վարդի խտացած բուրմունքով փոքրիկ այգին, դէպի սուլուխի եւ համեմունքների հոտով տամուկ «քիւլարը» եւ էրզրումից բերած պղնձեայ իւրերը: Այդպէս ամէն տարի՝ սկսում էին զպրոցական արձակուրդները ու հօրս կամ մօրս հետ, կամ, ուղղակի յանձնուելով մի որեւէ արծաթէ գօտով ախալցխացու տնօրինութեանը, մեկնում էի պապիս «Երզրումեան տունը»:

Նայում էի դետին, նայում էի ճանապարհի եզրերին, նայում էի կառապան Եուզանի մէջքին, նրա շարժումներին, լսում նրա ծպպոցն ու մտրակի շա-

չիւնը: Եուզանը մեզ զուարճացնելու համար կատակում էր, ծիծաղելի երգեր երգում: Մի երգ համարեա՛ միշտ երգում էր, ամէն երկու բառից յետոյ իր ճերմակ բեղերի տակից ցոյց տալով՝ արծաթ ատամնաշարը:

- Գալիս է Սիմոնը,
- Ֆերում է լիմոնը:
- Վա՛յ, վայ:
- Ընկաւ Սիմոնը,
- Կորաւ լիմոնը:
- Վա՛յ, վայ:
- Լալիս է Սիմոնը,
- Չկայ լիմոնը:
- Վա՛յ, վայ:
- Մի լար Սիմոն,
- Կ'առնեմ լիմոն,
- Վա՛յ, վայ, վայ:

Եուզանի մէջքի ետեւից աշխատում էի տեսնել ձիերին: Մէկ՝ մի ձիու կէսն էի տեսնում, մէկ՝ միւս ձիու կէսը: Բարձրանում էին նրանց ոտքերը, իրենց հետ բարձրացնելով փոշի, ու այդ արթ-



Գծանկար՝ Լ. ԽԱՆԱՄԻՐԵԱՆԻ

նացած ու շփոթուած փոշին շղիտէր ուր
 դնար, վե՛ր, ԹԷ՛ վար, ինչ անէր, շարժ-
 ւում էր անկանոն, կպչում նրանց ոտքե-
 րին, ցանկանում դրանց կարծր ձեւերը
 փոխել, լուծել իր անորոշութեան մէջ...

Ոտքերն իրենց քայլերով էին զրադ-
 ւած ու շարժւում էին, յաջորդում իրար
 փոշու յուզմունքի միջով՝ աշխատունակ
 ու զործարար... Ու միայն ոտնամայ-
 ներն էին յիշեցնում ճանապարհի կարծ-
 րութիւնը. «Տըկըլ-աըկըլ, աըկըլ-աը-
 կըլ»:

Երկու ձիերին էլ լաւ էի ճանաչում:
 Մէկը Է՛ւ ձիծաղելի էր, Է՛ւ տխուր,
 բարձրահասակ, ոտքերը բարակ, վիզը
 երկար... Աչքերը Թախճոտ էին, յան-
 կարծ արցունքներ էին երեւում... Իսյց
 գա միայն ինձ թւում էր, որովհետեւ,
 երբ նա բացում էր ատամները եւ վերին
 շուրթը ետ տանում ատամներէ վրայից,
 նոյն այդ Թախճոտ աչքերն արդէն Թախ-
 ճոտ յէին թւում:

«Նօ՛, Կուռկա, եօ՛, Մարուսիա —
 դուում էր Եուզանը, — ձեր ցաւը տա-
 նեմ», — ու իջեցնում մտրակը նրանց
 մէջքին:

Միւսը՝ Մարուսիան, մոխրագոյն էր,
 աւելի փոքր ու մաշուած, մաշկի վրայ
 անկանոն պուտուտակներ:

Մէկ-մէկ Եուզանը ինձ նստեցնում
 էր իր կողքին, եւ շքապատը բացւում
 էր: Ճանապարհը ոտքերիս տակ, ասես
 ինձ ենթակայ, Կուռկան ու Մարուսիան
 էլ ջթիս տակ: Ես ցնծում էի, զոգում
 հաճոյքից, եւ ցանկութիւններ էին առա-
 ջանում-արթնանում ներսս, Թափ վերջը-
 նում, երես առնում եւ մտնում վայրի
 պտոյտի մէջ: Ես զուլում էի նրանց հու-
 քը՝ վախենալով նրանց գեղեցկութիւնից,
 վախենալով նրանց պայծառութիւնից,
 վախենալով նրանց անեղբրութիւնից...

Որ կողմը կարող էին դնալ նրանք, ինչ
 կարող էին դառնալ: Ես հաճոյքի ու վա-
 խի թրթրում էի զգում նրանց ու խցա-
 նում, պահում էի այդ ցանկութիւնները
 «յետոյի» համար: Ես դիակի, որ այդ
 «յետոյն» գտնւում է առջեւում, անվերջա-
 նալի է, անմահութիւն է, եւ այս ճանա-
 պարհը տանում է դէպի այդ «յետոյն», եւ
 մեծ երջանկութիւն է: Այդ երջանկութիւ-
 նը ինձ երեւում էր ինչպէս փողային նը-
 ւազախումք՝ ծննդաներով, թմրուկնե-
 րով, պարկապզուկներով, ինչպէս կար-
 միր դոյն, ինչպէս եղեւնու կեղեւի հոս,
 պետից բարձրացող շունչ, պապիս «երզը-
 րումեան» տունը, եւ ամենազլխաւորը՝
 մի անծայր ճանապարհ, դնում ես, զը-
 նում եւ չի վերջանում...

Ներքեւում վազում են Կուռկան ու Մարութիւն: «Հօ՞», — գոռում է Եուզանը եւ մտրակը իջեցնում Կուռկայի մէջքին: Ջգում են ձիու մկանները: Մարութիւն լարում է, ինքն էլ է սպասում հարուածի, նրա մաշկը մի տեսակ ոզորկ է դառնում, ձգում են կնճիռները: Մարութիւնի աչքը հիմա խկապէ՞ տխուր է: Նա նայում է Կուռկային երեւի միութարելու, ցաւի չափը զգալու, եւ վախնում է, ե՛ւ սպասում հարուածի, որպէ՞զի թեթեւացնի Կուռկայի ցաւն ու վիրաւորանքը: Բայց Եուզանը խփելու փոխարէն ձգում է սանձը, եւ Մարութիւնի դէմքը թեքում է դէպի մասն, ու նա այլեւս Հնարաւորութիւն չունի Կուռկային տեսնելու:

— Մի՛ խփիր, ջեռի Եուզան, — շքուկով ասում էմ Եուզանի ականջին: Նա չի լսում եւ հենց իմ խփելու ժամանակ ծպպացնում է, մտրակը իջեցնելով Մարութիւնի մէջքին: Թուում է՝ Մարութիւն ուրախանում է, հարուածը այնքան էլ ուժեղ չէր, իսկ սպասումը հարուածից էլ ծանր է...

— Ի՞նչ առիր, — հարցնում է Եուզանը:

— Մի՛ խփիր, — կրկին շնջում էմ ես:

Եուզանի կարմրած աչքերը ժպտում են.

— Լաւ, կամաց կը խփեմ... Կուռկան ինձ է ուզում նայել. լսեց, ի հարկէ, լսեց:

Եուզանը ձգում է սանձը, եւ Կուռկայի գլուխը շեշտակի առտլ է թեքում: Կարծես Եուզանը չի ուզում, որ նա ինձ նայի: «Հօ՞...»:

Ձիերը կրկին վազում են: Մանօթ տեղեր են երեւում ճանապարհին: Ետտով պապիս տանը կը լինեմ:

— Ետևո արէք, — ասում էմ Կուռկային: — Դու ինձնից մի՛ նեղանայ, չա՛ւ, — շնջում էմ նրան, — ընկերուհուդ ասա, որ նա էլ չնեղանայ, ինչ ասես, որ երկաթդ չկայ... Սպասէք, կը գոյ ժամանակ եւ ես կը դառնամ իշխան, չէ՛՝ ես կը դառնամ թագաւորի պէս մի.

բան, պրեղիզենա կամ պրեմիէր-միլիտարը ու հրաման կ'արձակեմ, շնտել ձիերի վրայ...»

Յաճախ այդ վազող զոյգը ինձ շատ ծիծաղելի էր թւում, ծիծաղելի եւ խըղճուկ... Ծիծաղից խղճում էի, խղճալուց ծիծաղում: Ծիծաղելի էր թւում նրանց սէրը, նրանց հաւատարմութիւնը, նրանց բարութիւնը: Մարափելի էր այդ ծիծաղելին: Ես սկսում էի վախենալ: Յանկարծ ուզում էի, որ նրանք չախրեն իրար, խարեն իրար, մեռ առնեն իրար, աջացի ասան, բարձրաճայն ծիծաղեն մարդու նրման, լեզու ցոյց տան իրար, մեզ, Եուզանին... Երեւի այդ ժամանակ այլեւս չվախենայի: Բայց նրանք հաւատարիմ ու միասին վազում էին, խեղճ ու բարի ամուսինները՝ Կուռկան ու Մարութիւն: Ու շրջապատը դրանից տխուր էր դառնում...

— Քեռի՛ Եուզան, Ախալցխայում ի՞նչ էք անելու:

— Ես ենք զալու, — ասում է Եուզանը:

— Հենց էսօ՞ր... — զարմանում էմ ես:

— Հենց էսօր, — ասում է Եուզանը:

Ես վախեցած նայում էմ ձիերին ու կրկին հարցնում Եուզանին:

— Յետո՞յ...

— Ի՞նչ յետոյ...

— Յետոյ ի՞նչ էք անելու: Եուզանը ծիծաղում է.

— Նորից զալու ենք:

— Ուրիշ ոչի՞նչ:

— Ուրիշ էլ ի՞նչ... Իրենց ճանապարհն էդքան է:

Իսկ ես նայում էմ ձիերին այնպէս, որ նրանք չնկատեն իմ հայեացքը:

Այստեղից-այնտեղ, այնտեղից-այստեղ: Նրանք գնում են եւ ետ դառնում: Երկու պատ է կանգնեցրած, այստեղից-այնտեղ: Գնում են, նորից ետ զալիս, նորից են գնում... Բա յետո՞յ... Ճանապարհը... Ձեր երկար ճանապարհը...

Դուք ինչպէ՞ս էք ապրում առանց անծայր ճանապարհի... — ես մտքումս դառնում

եմ Կուռկային եւ դիտեմ՝ նա ինձ լսում է: Վնչո՞ւ չէք փախչում, ինչո՞ւ չէք պոկւում այս կառքից, ինչո՞ւ չէք շարունակում ճանապարհը... Լսո՞ւմ ես, Կուռկա՛... Վերցրու ընկերուհուդ եւ այլեւս մի՛ կանգնի, դնա՛ ու դնա... Ճանապարհը երկար է, երջանիկ, բարիք:

Կուռկան գլուխն ուզում է թեքել իմ կողմը, բայց վախենում է Եուզանից: Ես էլ այնպիսի արտայայտութիւն եմ ընդունել, որ Եուզանը չհասկանայ, թէ ինչ եմ ասում:

«Գնացէ՛ք, մի՛ կանգնէ՛ք, հենց հասաք տեղ, այլեւս չկանգնէ՛ք... Դու հօ ինձ լսո՞ւմ ես, Կուռկա, սե՛ւ ձի... Աղաչում եմ, մի՛ վախենայ... Դու հօ լաւ ես վազում... Եուզանը քեզ չի հասնի... Դու Եուզանից ուժեղ ես: Գնա՛, բանի տեղ մի՛ դիր Եուզանին: Ի՞նչ կարող է անել... Բա էդպէս ապրել կարելի՞ է... Ի՞նչ ես դիմանում... Ինչի՞ համար... Զէ՞ որ այս ճանապարհը ծայր չունի... Գնա՛ ու դնայ՝ ինչքան ուզում ես...»:

Կուռկան նայում է Մարուսիային օտարին ջնջում:

«Դու ինձ հասկանում ես... Գնացէ՛ք մինչեւ դուրս կը դաք ճանապարհից, դընացէ՛ք այնքան, մինչեւ ճանապարհը կը մանի յաւերժութեան մէջ...»:

Ես ծածուկ նայում եմ Եուզանի կողմը:

«Իսկ եթէ չէք համբերում, հենց հիմա շեղուէ՛ք ճանապարհից... Քիչ յետոյ կեռման կը լինի, հենց այդտեղից թեքէ՛ք ու դնացէ՛ք, մտէ՛ք անտառ, դնացէ՛ք մարգագետին, քի՞չ տեղ կայ, ինչ է...»

«Գնացէ՛ք ու ինձ սպասեցէ՛ք... մի՛ ամիս յետոյ ես կը գամ ձեզ մօտ ու միասին կը դնանք այս ճանապարհով...»:

Եուզանը գլխի չի ընկնում, չի լսում իմ շուրջը: Կեռման անցնում ենք: Կուռկան ու Մարուսիան վազում են, բայց նըրանք յուզուած են, նրանց վրայից գորշի է ելնում:

«Զատացուեց, հա՞... Ոչինչ, էլի մի շարժար տեղ կայ... Այնտեղից կը փոխէ՛ք ճանապարհը, ես ստորով էլ կը դնամ...»

Արդէն քիչ է մնում... մի՞ թէ պիտի ես դատնաք, յետոյ նորից՝ ես...»

Այդ շարժար տեղում Եուզանը կարծես յանկարծ արթնացաւ իր թմբած վրեժակից:

— Հօ՞՛...»

Երեկոյեան փոշոտ, շմած հասանք պապիս «Երգրումեան տունը»: Եուզանը արձակեց ձեռքին եւ տարաւ շէնքի հետաւը, որտեղ խոտ կար: Ես մօտեցայ նըրանց:

— Այս անգամ չյոջողուեց... Մնաց միւս անգամ: Կը սպասէ՛ք ինձ...»

Նրանք ինձ լուռ լսում էին եւ ամէն ինչից երեւում էր, որ մեր զաղանձիքը կը մնայ մեր մէջ:

Երկու ամիս յետոյ ես նորից եկայ կառքերի հաւաքատեղին: Հօրեղբորս հետ ջարդոտած կառքերի, անիւնների, չուխաւոր, փափախաւոր եւ խանջաւոր մարդկանց մէջ սպասում էինք Եուզանին: Եուզանը եկաւ: Բայց կոռքին միայն Կուռկան էր լծուած:

— Ո՛ւր է Մարուսիան, — հարցրի ես:

— Ստակեց:

— Ինչպէ՞ս...»

— Ձին մարդուց թոյլ է, չի դիմանում, — ասաց Եուզանը:

«Կարծես չդիտես, թէ ինչու է սատակել», — չարութեամբ մտածեցի ես:

Մօտեցայ Կուռկային:

— Բարե՛ւ... մեր պայմանը հօ չե՞ս մոռացել... էլի՞ ես համբերելու...»

Մենք ճանապարհ ընկանք: Ես այլեւս ոչինչ չէի նկատում, միայն Կուռկայով էի զբաղուած: Ամէն շարժար պահին խօսում էի, սիրտ տալիս Կուռկային:

«Այստեղ շարժար է, դէ՛, վազի՛ր...»: Կուռկան լսում էր ինձ, ուզում էր թեքուել, սակայն ինչ-որ մի բան նրան ներսում լարում էր, եւ ինչ-որ մի յիմար, անհասկնալի բան կաշկանդում էր նրան: Ոչ մի կերպ չէի հասկանում պատճառը, ոչ մի բան ախր չի կարող խանգարել, ոչ մի բան...»

«Գնա՛, դնա՛, դնա՛... Հիմա՛՛ դը-

նայ...»: Կուռկան նայում էր իմ կողմը
և և կրկին մնում էր տեղը:

Երբ հասանք՝ ես տխուր էի և ջար-
դուած:

«Անշնորհք, վախկոտ, անշնորհք...
Գլուխդ կախած վազում ես... էլի չկո-
րողացար, ի՞նչ դժուար բան է... վախ-
կոտ...»: Յետոյ նայում եմ նրա աչքե-
րին և խղճում. «Դէ լաւ, միւս ան-
գամ...»:

Մի տարի յետոյ Եռւմանին հանդի-
պեցինք շուկայում:

— Այստեղ ի՞նչ գործ ունես Եռ-
վան, — հարցրեց հայրս:

— Երկաթգիծ են շինել, — ասաց
Եռւմանը: — Հիմա այստեղ եմ ապրում:

Միանգամից վեր թռայ, ներսս խառ-
նրեց իրար, ցանկութիւններ խուժեցին,
մարդագետիներին, անտառներին, ձորերին
մէջ երեւաց անվերջանալի ճանապարհը,
ու ես մտածեցի. «Երկաթգիծը պատըր-
ւակ է, մին ուղղակի փախել է»:

— Կուռկան փախե՞լ է... — չա-
րախնդորէն հարցնելով հաստատեցի ես:

— Ո՛ր պիտի փախի, — ասաց Եռ-
վանը:

— Երկար ճանապարհով մինչև
վերջ...:

— Ձին ո՞նց պիտի փախի, — ժլպ-
տաց Եռւմանը:

— Եսիմ... Կառքով-բանով...:

— Ձէ՛, — հաստատ ասաց Եռւմա-
նը:

— Բա ի՞նչ է անում, — ստուգելու
համար դրոյշ հարցրի ես:

— Գիւղ են տարել՝ Մուրդութ...:

— Ի՞նչ է անում, — չէի հանդուս-
նում ես:

— Գնում-գալիս է...
— Ինչպէս թէ՛ գնում-գալիս է...:

Ես ու առաջը:
— Ես ու առաջը:

— էլի էլ չա՞ն ճանապարհ է:

— Ձէ, կարճ: Հիմա հեշտ կը լինի
Կուռկայի համար:

— Հե՛շտ, — զարմացայ ես, — ինչ-
պէ՞ս թէ հեշտ: Աւելի դժուար կը լինի,
դժուար... Մի՞թէ մոռացել է իմ խոս-
քերը... Ես կը գնամ Մուրդութ, կը ղըտ-
նեմ Կուռկային և նորից կ'ասեմ:
Կ'ասեմ՝ Կուռկայ, լսե՛ր...

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ



Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վերջին երկու-երեք տարիներում, Սփիւսի մամուլին մէջ երեւցող նոր ամուսններու շարքին քերեսս դժուար է յիշել ուրիշ երկուստարգ մը, որ գրելու արտքին հանգէպ այնքան հետեւողական եղած քլայ ինքն իրեն, որքան եզու «Շագին»ի մէջ սկսած ու հոն շարունակապէս Սարգիս Կիրակոսեան:

Ներքին քելագրումքի մը արդիւնք այս հաւատարմութեան հետ, անոր սուգերը կը մասնին նաև շունչ մը, աղբուած տագնապներ էր բանաստեղծութեան համար խիստ կենսատու խորհարդի զգայնութիւններ: Կիրակոսեանի բանաստեղծութիւններում անդրամիկ հատարը լռյա կը տեսնէ շատով, «Այս է արեւն իմ» խորագրին տակ:

ԱՆՀԱՆԴԱՐՏ ԱՐՄԱՏ

Պինդ մկաններէս կը ծորի արիւն
Մաշած ասֆալթի անգոյն շրթներուն:

Պէտք է ազատիմ այլեւս քեզմէ
Գիշերս հրկիպող ով մոզակա՛ն հող,
թէն ես գիտեմ
որ առանց քեզի

Օրերս են անշուք,
Բառերն իմ՝ մոխիր,
Իսկ ներաճայնիս վրոյցը՝ աղմուկ...

Դուն՝ օրերուս բեռ՝
իմ արիւն ու տուն
իմ արեան երզում
իմ արիւն ու բանտ
իմ արեան դահիճ

Մազնիս շղթայէդ պիտի վերջապէս ալ ազատիմ ես:

Ով ազատութիւն, օչնէ ազատիմ իմ այս հողապո՛ւրկ ազատութենէս...

...ՍՏՈՒՆԵՐՍ ԸՐԱՄ ԻՆՏԻ ԸՆԿՆԻՐ

I

Հազար մարտ կայ իմ սրտին մէջ,
 Հազար մայթ կայ թաց, դաւադիր,
 Հազար ժպիտ կայ մշուշոտ,
 Հազար տեսակ սէր ու վառող,
 Եւ աղջիկ մը հազարադէմ՝
 Ի՛մ սրտին մէջ, ի՛մ սրտին դէմ:

Դուն ինչպէ՛ն թոյն եւ քու եսիդ տիղմը կրցար ըլլալ, ըսէ՛,
 Կրակի չափ հազարամեայ, ջինջ, գեղեցիկ
 Եւ մերկ սրտիս շշուկները խնկատորոզ
 Խորհրդաւոր խոովարար...

Քու չգործած յանցանքներն իսկ կը սիրեմ,
 Որովհետեւ
 Թուղթերէս եւ բառերէս աւելի,
 որ թերեւս ստուերդ է,
 Կեանքն ես իմ դուն
 Եւ անկարելի օրերս բեղմնատորոզ
 Օրինեալ բոցերն արեգակի...

II

Սառնամանիք,
 Խաւար գիշեր յոգնեցուցիչ
 Երակներուս գիշերուան մէջ,
 որ վիրաւոր վիշապներու թոքերուն
 դրոտումն է, արնակիզում.

Եւ հեռուն՝
 կարաւաններ օրերու՝
 Կ'ըլլան բիրբերն իմ կոխկոտող
 Սմբակները ժամանակի,
 Սմբակները գիտութեան
 Եւ դուն՝
 ժամադրութիւն անժամանակ,
 Իմ արինիս հանքէն խլուած
 պտղաւորում,
 գունալառում,

այգեկութք
 Եւ առաջին այգեկութքի գինիին պէս
 Խօջ նախերգանջ յախտենականութեան աւետարանի...

Թարթիչներըս արցունքներ են շթաքարի պէս...

Սառնամանիք պոռպոռան,
 Խաւար գիշեր եւ աղջամուղջ գիրկընդխառն
 Իսկ աներակ երակներուս՝
 Խաչելութիւն յուշերու,
 եւ անաւարտ ճամբորդութիւն...

Ես այն աստղն եմ, որ տակաւին ճամբորդութիւնն իր չսխաւ:

III

Հազար մարտ կայ իմ սրտին մէջ,
 Հազար մայթ կայ մութ, դաւադիր
 Հազար ժպիտ կայ մշուշոտ,
 Հազարամեայ տենչ ու կարօտ,
 եւ աղջիկ մը հազարադէմ՝
 Որուն միայն արիւնը վառ
 Իմ սրտին մէջ եղաւ շղթայ,
 եղաւ
 Ներկի հազար ճիւղեր ծլարձակող մետաքս անտառ,
 Մինչդեռ այսօր,
 Ի՛մ սրտին հետ, ի՛մ սրտին դէմ... կ'ըլլայ պայթար:

IV

Առաւօտուն, միջօրէին, կէս գիշերին՝
 Առած սրտիս հազար պատրանք
 հազար տենչանք
 հազար սերեր
 Կը քալեմ՝ կոյր ճակատագիրս ըրած ստուեր...

ՔՄԱՆԸՀԻՆԳԵՐՈՐԳ ԺԱՄ

(Առաւօտեան ամէնօրեայ երգ)

Յդի գիշերէն տառապանքի
 ծնայ պզտոկութեան
 իբրեւ տարտամ արշալոյս:

dj@... A.R.A.R.@

Գոյն ու ձայներն իմ շաղոտ
 թափառեցան
 երկնի անհուն ձորերուն մէջ,
 Եղան շոգի արնագոյն,
 Եղան շոգի արնամոյն
 իմ տենդահար կապիճներուն,
 Ու դուն՝
 լոյսերուն հետ կորսուեցար
 իմ բիրբրոս անձաններուն:

(Մայրամուտին, մայթերուն հետ կրկնուող յաճախանք)

Կը տեսնեմ քեզ:
 Դուն կը քալես
 արիւնիս մէջ
 Կ'ըլլաս մշուշ
 ու կը լեցուիս սրտիս մէջ
 ալիք-ալիք էջերով:
 Կ'արձանանաս
 պահ մը ապա
 ճակատագրի ջրվէժին նման հեղուկ գոյներուն,
 որոնք յանկարծ դարձած են տիղմ մխացող՝
 Յար եւ նման
 մեր դիւահար էութեան...

(Գիշերային մենութիւնն ու իր ռատիոհաղորդումը)

Յի՛ր գիշերէն տառապանքի
 ծնայ պզտորութեան
 իբրեւ հաշմանդամ ամպ...

Ու բարձրացայ, բարձրացայ
 խառնիխուտն գոյներուն ու ձայներուն,
 ուր ծփծփաց արիւնը սոթ
 Եւ անհունի հեռաւոր տարածութեան ընդերքէն
 Աշխարհի դարձեալ հասաւ ինձի՝ պատկերիդ պէս յարաճուն:

ՍԵՐ, ԳՈՒՆ ՀԵՂՈՒՄ ՋԵՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐԵՐՈՒՄ ԷՈՒԹԻՒՆ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

Ե Եւ Աստուած ըստ, մեր պատկերին ու մեր նմանութեան պէս
Ի մարդ ընենք (զլ. Ա-28):
 Եւ Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը եւ անոր անունը
 բուն կենդանութեան շունչ փչեց (զլ. Բ-7):
Ա Եւ Տէր Աստուած իր ամէն ջրածը տեսաւ, որ անա շատ բարի էր
 (զլ. Ա-31):
Ս Եւ Տէրը երկրին վրայ մարդ ստեղծելուն զգոյց եւ իր սիրտին մէջ
 տրտնեցաւ (զլ. Զ-6):
Տ Եւ ևս անա երկրի վրայ շինեց զիստի բերեմ (զլ. Զ-17):
Ո Եւ Ազամ բոլոր անասուններուն եւ շաշտի բոլոր գազաններուն
 մէջ... իրեն յարմար սգնական մը չգտաւ (զլ. Բ-20):
Ի Եւ Տէր Աստուած Ազամէ տատծ կողի սակարը կին շինեց, ու գա-
 միկա Ազամի բերաւ (զլ. Բ-22):
Ա Եւ Ազամ եւ իր կինը երկուքն ալ մերկ էին, ու չէին ամչնար
 (զլ. Բ-25):
Մ Եւ Տէր Աստուած ըստ, անա Ազամ մեզմէ մէկուն պէս եղաւ՝ բո-
 րին ու շաքը գիտնալաւ. եւ երբ ըլլայ որ իր մեքը երկնցնէ եւ կե-
 նաց ծառէն ալ անէ եւ ուտէ (զլ. Գ-22):
Ը Եւ Կայէն Տիրոջ առջեւէն հլաւ, ու Ծղնի տրեւելեան կողմը Նա-
 յիկ երկիրը բնակեցաւ (զլ. Գ-16):
Ս Եւ Կայէն իր կինը գիտցաւ, ու ամիկա յղացաւ (զլ. Գ-17):
Ա Եւ Ազամ հարիւր երեսուն տարի ապրեցաւ եւ իր նմանութիւնովը՝
 իր պատկերին պէս սրգի ծնաւ եւ անոր անունը Մէք դրաւ (զլ. Ե-3):
Ի Եւ Աստուած յիշեց Նայը (զլ. Ը-1):

«ԻՒՐ ՄՆՆՈՒՄ»
(Աստուածաշունչ)

ՍՐԲԱԶԱՆ

ԱՃՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

«Սկիզբին Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց. ու երկիրը անձեռ
ու պտրապ էր» - կ'ըսէ «Գիրք Ծննդոցը» - եւ կ'աւելցնէ - «Աստուած Հրո-
մայեց եւ ըստ՝ խորութիւնները ջուրով լեցունք երկրի վրայ. ու ցամաքը
մէկ կողմ մնայ, ջուրը իր շուրջը ըլլայ. ու կանանչութիւն ըլլայ ցամաքի եւ

րեսին. խոտ ու ծառ բուսնին եւ սերմ ունենան. ու շնչաւոր ասուն եւ անասուն անալ գան եւ սաղմ կրեն իրենց մէջ, տեսակ-տեսակ ու ազգի-ազգի, որպէսզի, ամէն ինչ յաւիտենական ըլլայ, թէ՛ բոյսին եւ թէ՛ անասունին մէջ...

Եւ այդպէս ալ եղաւ:

Ու վաղնջական, անյիշատակ ժամանակներէ ի վեր, գոյութիւն տաւ երկիրը, որ ըստ տեղի ու պայմանի՝ կրեց ցամաքամաս, լեռնաշխարհ, անապատ կամ դաշտանայիտ, սարահարթ կամ ծովեզերք՝ յատուկ եւ հասարակ անուններ: Ու ամէն տեղամասի մէջ, իր իսկութիւնը եղաւ հողը, փխրուն կամ խոպան, ժեռոտ եւ անժայռ, ոտիկոխան ու անկոխ գետին... Ու երկրին դէմքը ալիքաւոր էր, վէտովէտուն, թանձրացեալ դար-վար. տեղ մը, գետատի կնոջ երես-քողի նման՝ թաւիչ-արրում, ու շատ անգամ, քաւթառ պտտաւի անձեռագործ, ճճութիւնած փէշ ու շալ կամ հասուն մարդու կնճռոտած երեսկաշի...

Ու երկիրը ունէր տեղ մը փափիկ հող, մէկդի նետուած չոր խոպան, անդին՝ ձորամէջ քարքարուտ, ջուրին քովը՝ կանանչ արտ, վերեւ ինկած սարալանջ. հետուէն տեսնուող միրաժածին անապատ, կամ ձիւնածածկ պսպրղան դագաթ՝ Արարատ:

Ու երկիրը ստեղծագործեց ճգնութեամբ, ու շինեց իր աշխարհը, պոթկալով սրցունք ու քրտինք, որ տեղ մը եղաւ սառն ու վճիտ աղբերակ, այլուր՝ դառնահամ ազի լիճ: Եւ ջուրի ակերը եղան հոս հոն՝ յաճախ հոտոջ առու, կաթիլիթ, բխան, գլղիլ, որը ժայռի մը երախէն, որը ըլլաւտափով, շատեր՝ լեռնադռչէն, իրենք իրենց համար մէկ-մէկ ինքնութիւն — կեանարար շունչ կամ երկնային պարգեւ — որոնք իբարու գալով, խառնուելով, մեծնալով՝ կը վերածուէին մերթ հարկատուի խոշոր գետի, ո՛րն ըստ տեղի ու առիթի՝ կը դառնար ցատկոտան, վարար, խեղդող կամ խնջ-խաղող՝ հովիտին մէջ փալիլան, ձորին խորը՝ փրփրարար, հանդին վրայ՝ օձագալար, հաստաքամակ, միշտ կապտապոյն, արծաթափայլ, մթին անդունդ, սակայն, օրին՝ ըմբոստացած, հեղեղածին:

Ինքն ցամաքն էր, անշարժ քարեղէնութիւն, ունեցաւ շարժուն ալխարհ մը իր վրայ. եւ ի՛նչ որ խարսխուած չէր իր մէջ, իրմէ՛ ծնաւ, բայց՝ մնայուն չեղաւ: Ի սկզբանէ կոյս էր երկիրը, կոյս աղլկայ մը պէս. յղացաւ ինքն իրմով եւ ահա սերմեր պայթեցան ծոցին մէջ. ու արմատ ու ծիլ արծակեցին ծառն ու խոտը, որ կանանչցաւ՝ փռուելով իր ասրածքին: Ծառերը բուն տուին, բունով աւելը առին հողէն եւ ուռճանալով պերճացան ու պտղաւորուեցան: Քանդի, ի սկզբանէ, արեգակն եղաւ իր արուն, որ լոյստփն ու ջերմութեամբ բեղմնաւորեց զայն. անձրեւարեր ամպեր բարձրացուց ծովերէն ու քամիլ տուաւ զանոնք երկրի երեսին, վառնդի լոյսի ու ջերմի տարփանքէն յաճախ, երկիրը ուշազնացութիւն կ'ունենար, որմէ երաշտ առալ կու գար ու կը մեռնէին խոտն ու ծառերը...:

Առատ անձրեւներն ու երաշտը երկնային պատուհաս կը դառնային երկրի գլխուն. թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը պատճառ կը հանդիսանային սիրախառնուքին, որուն ախտանիշերն էին շարժերն ու հրաբխային պոթկումները, քանդի կրակ կար արգանդին մէջ. ու անիկա ետք մըն էր, մետաղային նիւթերու խառնուրդով առաջացած «Հալոցք» անունով: Ու բաւ էր, որ երկրին երեսը ճաթառէր եւ ջուրը կաթիլ-կաթիլ իննար, կաղերով ծածկուած հալոցքին վրայ: Խիթերը կը դառնային անտանելի. կը պայթէին կապերն ու կը գլղգար երկրին արգանդին մէջ կտրապարի մտած հալոցքը, որ ետալով դուրս

կը ժայթքէր լեբան մը ծայրէն, իբրեւ Թարախոտած վէրքի հասունցած փըշտիկ: Շարժէն՝ աւեր կ'առաջանար. իսկ զահափիժող լաւան կը տարածէր մահ ու ամառութիւն հոն, ուր թաւալ կու գար. քարացած լաւային վրայ այլեւս բոյս ու կանաչութիւն չէր բուսներ, ինչպէս սպիտի վրայ՝ մաղ:

Ու երկիրը հողի, ժայռի ու մետաղներու խառնուրդ կառոյց մըն էր, գոնա ու կլոր մոլորակ մը, որ դրուած կը թուէր ըլլալ «հսկայ ցուլի մը պիտուն վրայ» . ու կը կարծուէր, թէ երկրային շարժերը հետեւանք էին տնոր զիտու ցնցումներուն, երբ ծանր բռնան տակ կ'ըած՝ ցուլը կը պարտաւորուէր ստքերը տեղափոխել...

Նախամարդու բանականութիւնը երբ բանիլ սկսաւ, երկիրը կրող ցուլին եղջիրները անկարելի թուեցան. ու խելացի մարդիկ երկիրը զետեղեցին անյրպեակի մէջ, անտեսանելի շղթաներով բռնուած: Թէ ո՞ր մասերուն կեանքնուած էին շղթային ողակները, ոչ ոք գիտէր. ու այդ անդիտութեան դատնիքը մերտդրուեցաւ անտեսանելի ուժի մը, որուն ետքէն տրուեցաւ Ատտուած յորջորջումը: Ու Ատտուած ստեղծեց երկինքն ու երկիրը. ու զատեց ջուրը ցամաքէն. եւ ցամաքին վրայ՝ ինքնարոյս, ծլան ու ծաղկեցան ծիւն ու արմատը, խոտն ու ծառը, սրունք կը սերմնաւորուէին, քանզի այն՝ ինչ որ գոյութիւն կ'առնէր, ծնունդ էր սերմին. ու սերմը տեւելու միակ միջոցն էր՝ ի՞ր տեսակին...

Եւ Ատտուած ուժ էր. ու նախախնամութիւնը՝ անոր միակ դործակալը, այս աշխարհին վրայ: Ան էր, որ ի սկզբանէ, զբաւ երկիրը հոլանման հորովոյթի մը մէջ եւ արեգակնային շառաւիղի մը վրայ. ու այս կարգադրութիւնը ըրաւ, որպէսզի ծնէին օրն ու տիտները եւ տարին չդառնար, երբեք, միօրինակ ու անլարժ անխմաստութիւն մը: Երկիրը մնաց դուռ, քանզի անփոփոխ չեղաւ իր գոյութիւնը, որ անխմաստ սլիտի դառնար անշարժութեամբ:

«Գիրք Մննդոցը» լուսթեամբ կ'անցնի այս բոլորին վրայէն, վստայի, Եհովան աստուած մըն էր, բայց Ատտուածը չէր: Աստուած մէկ էր ու անտեսանելի եւ համբ. ու իր զէմքը տեսող չեղաւ, քանզի Ատտուած էր: Իսկ Եհովան խօսեցաւ, հրամայեց, պատուէրներ թելադրեց ու եղաւ կողմնակալ, դաժան, յեղրամոլ եւ ինքնահաւան, այնպէս, ինչպէս պիտի ըլլար բռնակալ իշխան մը, երկրի մը զահին բազմած...

Բ.

ՍՐԲԱԶԱՆ ԱՃՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ու երկիրը, իր քարեղէնութեամբ իսկ, կը շնչէր ու կը տնջար. իրմէ դուրս ժայթքող ջուրերն իր արցունքն էին, տեղ մը վճիտ, տեղ մը պղտոր. խոտն ու կանանչը՝ անհոգ եւ անարամադրութենէ առաջ եկած պիտամօրութի պէս երկարած, եւ ահա, խոտին ու կանանչին ինկած տեսաւ միջլատ-զեռուններու անկող եւ անստեղծազոր ջեղեր, տեսակ-տեսակ ու ազդի-ազդի: Ուրկէ՞ Եկան նորածին այս մակարոյժները, որոնք ստուն-տեղ կողոյնբու պէս կը ծամէին ծիւլ ու տերեւ. ու կը մերկացնէին ցօղուն եւ ճիւղ...:

Այդ պատահեցաւ, երբ ամպերը ելած ու ծածկած էին արեւը. սեւցած, խոժոռած երկնքի մէջ, կայծակնային սուրնամարտը սկսաւ. դոռացին ձայն

Նանօթները ու փայլուկներ ճեղքեր բացին մութ պատին վրայ: Ու անձրեւնե-
րը տեւեցին օրեր ու շաբաթներ: Երկիրը պիտի խեղդամահ ըլլար, եթէ ա-
րեգակը չպատռէր ամպաշղթան ու չզրկէր դայն: Այն ատեն, ելաւ ուժեղ քա-
մի, սրբեց-քշեց կայծակնակիր ամպ ու անձրեւ: արեգակին ժպտը տաք ե-
լաւ, զրկանքը՝ տարփոտ: ու երկիրը խայտաց հաճոյքէն, քանզի գտաւ զայն
կրկին իր զլխավերեւը, որբեւայրիութեան սարսափ սպրոզ եւ յանկարծ աշ-
րբ տեսնող կնոջ մը պէս՝ հրճուելով...

Ու իր հրճուանքը երկար չտեւեց. խոնաւութեան, ցեխի ու փոսովի
դաշնակութենէն ծնան մանր մակարոյծներ, որոնք սկսան շարժուելի կանա-
չին վրայ ու խրթիւրթոցով ծամեցին ծիւ ու տերեւ, եւ որքան որ կերան կա-
նանչը, այնքան մեծցան. եղան թրթուռ, միջատ, ճիճի ու սողադան որդեր...

Միայն երկրին սիրտը, մանկամահը զրկող մօր մը սրտին պէս՝ ու չոր-
ցաւ վճիտ արցունքը. եղաւ համատարած գեղնութիւն եւ ա՛ւա, ա՛ւր որ էր՝
մահատարած աւեր ու ամայութիւն պիտի իջնէր երկրի երեսին: Ու երկիրը
բարձրացուց քարեղէն անդոյ աչքերը՝ առ ամենակալն Աստուած, որ ամէն
տեղ էր, քանզի երկրին կլոր-գունտ ըլլալը կը փաստուէր ա ու բարբառեցաւ
այսպէս.

— «Ո՛վ դուն, Տէ՛ր Աստուած. զատեցիր ինձմէ ջուրը, բայց ջուրով
ուղեցիր խեղդել զիս. ըսիր՝ բուսցո՛ւր խոտ ու ծառ, որ երեսիդ կանանչու-
թիւն ըլլայ. մերկատմայի շնաս. եւ ա՛հա, ինձի զրկեցիր այս դեռուն-սո-
ղուն մակարոյծները, որոնք ժանտախտի նման տարածուեցան մարմինս չորս
կողմը: Այս բոլորը վա՛ն ինչո՞ւ ըրիր, դուն, ո՛վ Տէ՛ր»...

Սպասման ու մղձաւանջին պահը տեւեց տիւ եւ զիչեք. արեւը կրակ կը
թափէր վերէն՝ մակարոյծները ոչնչացնելու համար. սակայն, խոտն էր, որ
կայրէր. եւ երբ արեւը մարը կը մտնէր, զլ՛նհրաշքիկ աստղերը կը մաղէին
ցողի մանր-սպիտակ մարգարիտներ. ու կ'արթննային հիւանդ ծիւերը եւ կը
ժրէին որդնազգի մակարոյծները: Ու գոյութեան պայքարը կը շարունակ-
ւէր. իսկ ժամանակը կը սահէր...

Աստուած լսե՛ց երկրին դանգաւար. գուցէ. քանզի, կախարդուած ստո-
րին աշխարհ մը մէկէն կը լուծէր իր կախարդանքը եւ կը շարժուէին ծառե-
րուն վրայ, ծաղկափերթերուն մէջ մանր ու մեծ թեւեր, որոնք կը լիցքա-
ւորուէին միտով, փետրաղարդ, կոցաւոր, մազիտակիր, տերեւածին՝ կը յար-
ձակէին, երամ առ երամ՝ կանանչին մէջ, հողին վրայ ու ջարդ կու տային
մակարոյծներու սերունդներուն. ապա՝ գետնէն կը բարձրանային քառաճանկ,
փոքրամարմին գազանիկներ ու թեփամորթ սողուններ. ու երկիրը կը լեց-
ւէր շարժումով, ճիւղ-կունջիւններով: Ու հետզհետէ խոտը առաւ իր կանանչ
գոյնը. ծառերուն վրայ ծլեցան նոր բողբոջներ, որոնք ուշացած ծաղիկներ
բացին: կանանչի, ծաղկման եղանակն էր. գարուն անունը կրեց եւ ամէն ինչ
փթթումի մէջ մտաւ. եւ գարունը եղաւ ամենազեղեցիկ եղանակը... վասնզի
երկինքը դարձաւ դաշտայն ու օդին մէջ պարեցին ու շրջա՛ն-շրջա՛ն պտուտք
եկան երփներանգ դօշի ծաղիկ-թռչուններ, որոնք թառ եկան ծառածիղկե-
րուն եւ հոն գրին իրենց առաջին բոյնը:

Թէեւ թռչունները, իրենց գեղատեսիլ փետուրներով, խոյանք-թռչե-
ներով եւ ուրախ ծլւրլոցով՝ շունչ եւ կեանք աուին վերեւի աշխարհին, թէեւ
անոնք ջարդ ասրով գետնաքարը սողուն-որդնազգիներուն՝ վերադարձուցին
կորսուած կանանչութիւնը խոտին ու ծառին, սակայն, անոնք չչփուեցան
երկրին հետ. անոնց նրբին մագիլները նիստի համար ստեղծուած էին. չէին
կրնար քորը մեղմել կեղեւ կապած հողին, որ կ'ուշէր շնչել ու փխրիլ ու զգալ

դոփեմները քայլերու, որոնք պիտի զբօսեն կարծրացած գետինը: Գիշերներու թանձր լութիներ պատուող ձայներ չկային, բուին չարաչուք ձայնը անիծւած եղանակ մըն էր, որմէ թառ եկած թռչունները՝ ծառերուն վրայ, մահա- սարսառ դողով կ'անցընէին: Իսկ երկիրը շուտով մոռցաւ իր առաջին աղա- պատանքը ու ձանձրոյթով եւ դժգոհանքով՝ ինկաւ կրկին Աստուծոյ ստօքին:

— Վեհեղեցիկ են թռչունները, Տէ՛ր. թիթեռ, առած ծաղիկներուս երկներանդր թևերուն՝ չի լուսցներ օրը, այնքան կա՛րճ է իր խողն ու պա- րը. ու որդնազգի սողուն-ղեռունները պժգայի են: Մարմինս ցոր կու դայ եւ ես չունիմ ձեռքեր. ստեղծեցիր զիս դուստ ու կլոր. չըջապատել տուիր ան- նիթ եթերով, տիեզերային անջրպետի մը մէջ. եւ չկայ շուրջս ոչ մէկ կարծր բան, որուն ջրուիմ ու վերջ դանեն շերտերու քնքերս: Եթէ չտուիր ինձի ձեռք ու ստք, տո՛ւր ստք ու ձեռք շնչաւորներու, որպէսզի ստքով կոխկոտեն մար- մինս, ու ճանկերով զբօսեն հողը. բանան մորթային ծակտիկներս. շնչե՛լ կ'ուզեմ ես. ու շնչել կ'ուզեմ սալ ծիլ եւ տրմատի, որ ուռճանայ ու զեղեց- կանայ ընտթիւնը:—

Աստուած լսե՛ց երկրին աղապատանքը. թերե՛ւս...

Անցան կրկին մղձաւանջային երկար օրեր: Գարունը առաւ կանանչ խո- տը ու տարաւ հետը: Երկիրը զեղնեցաւ. ջուրերը կարճցան ու սրելը խան- ձեց հողն իսկ, որ կը մնար խոպան: Թռչնազգիները լաացան, քանդի ծիտեր եկան աշխարհ ու մեծցան: Մեծցան ու հասունցան միրգերը ծառերուն վրայ: Տօթ էր, կրակ կը մագուէր երկինքէն. ու պտուղներ փլխած՝ կ'իյնային հոտ դին. կը տրտփէր երկրին սիրտը: Եւ ահա, կատարուեցաւ հրաշքը: Երկիրը աչքեր չունէր, որ տեսնէր, թէ ամպերէն վեր, երկնի կապոյտ ու խոր ֆո- նին վրայ՝ ձեռք մը կը զծէր անպարարական պատկերներ, ու ամէն անգամ երկրին վրայ կախարդանք մը կը քաղէր իր քարացեալ վիճակը...

Ու ամենակալն Աստուած, անտես եւ անյայտ՝ իր անզոյ դա՛հին բաղ- մած, որ ստեղծներ էր երկինքն ու երկիրը. ու երկրին վրայ փռել տուեր էր կանանչութեան թաւիչը, ուր յայտնուեցան ինքնածին մակարոյծներ. ապա՛ անոնց աճը նուազեցնելու համար, երկրին խնդրանքով, տերեւներէ ու ծա- ղիկներէ ծնած՝ թռչնազգիներ ու թելաւոր միջատներ պարզուեց աշխարհին. ու անոնք յարձակեցան ու ջարդ տուին դեանաբար սողուններուն. ու այս ս- մէջը ըրաւ գարնան եղանակին... Այժմ, ամբայ տաքին, Ան, ձեռքի անպա- րարական մէկ շարժումով, կը լուծէր կախարդանքը դաշտային ու լեռնային մանր ու միջակ քաղան-անասուններուն. եւ ահա, քարաբեկորներն ու ծառա- կոճղերը լունչ առած ու ոգի, մէկէն ստքի ելած՝ կը վազվզէին դաշտերուն վրայ եւ լեռներուն մէջ, անթիւ ու անհամար քառաթաթ եւ ճիրանաւոր զա- զաններ, կը սլանային նախիրներ կազմած կճղակաւոր եւ եղջերակիր անա- սուններ, քանդի մտակերութեան բնազդով դիտուած էին: Կճղակաւորները դուռն անէին եւ վլխուն վրայ կը կրէին եղջիւրներ, վասնզի ասոնք խոտակեր էին ու որոճացողներ: Ու այս երկու ցեղաբաժանուններուն միջեւ եղան քա- ութաթ ճանկաւորներ, որոնք ցտուկ ունէին եւ խոտակեր էին. ու գունչ ու- նէին եւ քառասմբակաւոր էին. ու խոտակեր էին, սակայն ո՛չ եղջիւր կը կը- րէին եւ ոչ ալ որոճացողներ էին: Աւ մտակեր եւ խոտակեր եզան անհաշտ թշնամիներ իրարու. վասնզի առաջինները սկսան որսալ մանրակազմ խոտա- կերներ եւ թուփերու տակ պահուրտած ու բոյն դրած թռչնազգիներ, որոնք ծանրամարմին էին ու թռչելու մէջ՝ անփոյթ:

Եւ այսպէս, ծնունդ առին միջահասակ դազաններն ու անասունները. ու ամէն տեսակ ու ազգի-ազգի եղան, արու եւ էգ, ինչպէս թռչնազգիներու

մէջ կային, ինչպէս զետնաբարչ սողուններուն տրուած էր: Եւ արունները կը մտնէին էգերուն: ու էգերը կը յղանային, ամէն մէկը իր տեսակին ու աղդին սողմն ընդունելով իր մէջ: Եւ այս բաները կը պատահէին, երբ արեւին շերմը իջնել կը սկսէր եւ միբարբը կը չորնային ծառերուն վրայ: երբ խոտը, կանգունահասակ՝ կը փութէր հողին, սերմին ծանրութեան տակալ չկարենալով: Ու չոր, դեղնած խոտերուն մէջ կը վխտային օձազգի սողուններ, որոնց վրայ կը խոյանային օրաշուի երկայնակտուց թռչնազգիներ: ու պահ եկած՝ զազանիկներ փետրախեղդ կ'ընէին զանոնք: Երամը զուճ մը տուած, թեւաբախ օւ ծրծրաւիչ կը նետուէր օդին մէջ ու կը լեցնէր զայն կոկիչ-ծիչելով: Ու խոտակերներու նախիրը, գլխիւր խոտէն վեր բարձրացնելով, վախաւորիկ՝ կը դիտէր շորս բուրբը եւ յանկարծ, նետահարածի պէս՝ կը սլանար զէպի անտառ, միշտ զուճ մը ձգելով զազանի մը ճերաններուն տակ:

Ու երկիրը զգաց, որ աշուն էր. քանզի դեղնած տերեւներ պար գալով սահ կ'իջնային ծառերէն, որոնք տակաւ առ տակաւ մերկանայ կը սկսէին փշուղ հովերուն առջեւ... Ետքէն, անջրպետէն փրթան պաղ քամիներ, որ բերին երկրին վրայ կախեցին մութ-մութ ամպեր. թուխ պղաւ ու իջնաւաջին անձրեւները: Գաղան եւ անասուն, թռչնազգի կամ զետնաբարչ սողուններ զտան որջ ու ծերպեր եւ սթրուեցան, ով ինչպէս որ կարող եղաւ. ու այդ՝ առաջին սթրուելին էր՝ տուն-տեղ ըլլալու համար: Ու երկիրը զգաց, որ իր մէջ կենդանութիւնը կը խլրտէր. հողը կը ծակծկուէր ու կը քրքրուէր, քանզի հողաբնակներ իրենց որջը դրին ու շտկեցին զետնին տակ:

Եւ եղաւ համատարած ձմեռ. ու իջնա անձրեւները տեղ մը. ու ինկաւ այլ տեղ ու փութեցաւ զետնատարած ձիւնը՝ սպիտակ, պսպղուն...

Յարձր զարուներին, առատացաւ կանանչը. ծաղկեցան ծաղիկ ու ծառ. ու ծնան առաջին յղութեան պտուղները ու լեցուցին ժանկակաւն ճիւղ ու աղ՝ մուկով կենդանական աշխարհ, որ դեռ պակասաւոր էր, վասնզի չկային մեծ չափի զազաններ ու անասուններ... Ու երկիրը կրկին դժգոհեցաւ. կ'ուզէր տեսնել ու իր վրան կրել ծանրամարմին կենդանիներ, որոնց վաղքն ու խոյանքները, պայքարները կը ստեղծէին իր մէջ մտնուկի հետաքրքրութիւն եւ սնդամալոյծի խոնդն ու դառնութիւնը: Զէ՞ որ ինք ձեռքով ու ոտքով անդամալոյծ մրն էր...

Ու մեծցան եւ լիցքաւորուեցան բոլոր տեսակի ու աղդի շնչաւորներուն նորածինները՝ կաթնածիծ կամ ձուաստեղծ, քանզի խոտը առատ էր. ու որսամտով կերակրուող մայր զազանին ծիծը՝ լիքը: Եւ երբ խոտը դեղնեցաւ ու ստինքները չորցան, արեւը հասունցուց ծառապտուղները. զետնաբարչ թութեր մէջտեղ ելան. ու սոթը կոխեց երկրի երեսին. շերմացան ժայռերը ու աւշաւորուեցան ծառարունները: Այն ատեն, երկնքի վրայ, խորը կապոյտին, երեցաւ կախարդանքը լուծող անտես ձեռքը, որ զծեց պատկերներ ու ճիւղայի պատկերներուն պէս՝ ժայռերէն բաժնուեցան բեկորներ, որոնք շնչաւորուեցան, հաղան թաւամորթ, եղան քառաթաթ, ճիրանաւոր խոշոր զազաններ, որոնք ունայնով, կաղկանձելով ու մոնչելով այս ու այն կողմ նետուեցան, քանզի զարաւոր սովածութեան քաղցը ունէին իրենց ստամոքսին մէջ: Ու ծառերու երկնեղ բուներէն ծնունդ առին խոշոր եղջերաւորները, որոնք կը կրէին փոճաղոյն ծորթի. կնդակաւոր էին ու սմբակակիր եւ կը կոչուէին խոտակերներ: Ու խոտակեր-ամենակերները կը քալէին քառաթաթի վրայ. զանդազաւարժ էին եւ լքրկամարմին: Եւ ահա սկսաւ ուժի եւ սարսափի շրջանը, վասնզի ամէն շնչաւոր գիտուած էր ինքնապաշտպանութեան յատուկ միջոցներով. ու առաջ եկաւ զգուշաւորութեան, դարանընկալ ըլլալու եւ ա-

նակնկալ յարձակումի բնազդը մէկուն թէ միւսին մօտ: Ու դադան եւ եղջե-
րաւոր, քառաթաթ Հսկայ կամ թեփաւոր հրէջներ — ամէն մէկը՝ եղան ազ-
գի-ազդի ու տեսակ-տեսակ, արու եւ էգ. ու արուները մտան իրենց տեսակի
էգերուն, որ յղացան, երբ աշունը իր դեղինով ներկեց դաշտ ու ձոր, լեռ ու
անտառ:

Սակայն, աշխարհը, որ ստեղծուած էր երկրի երեսին՝ անկասար էր
դեռ... Կը բացակայէր մարդը:

Պ.

«ԲԱՅԱԿԱՅ ԷՐ ՄԱՐԴԸ...»

Ու Աստուած, առաջին տարուան մէջ, ստեղծեց երկինքն ու երկիրը. ու
բաժնեց ջուրը ցամաքէն. եւ ցամաքը ծնաւ խոտն ու կանանչը, ծնաւ մակա-
րոյծներ, որոնք մեծնալով ծնունդ տուին որդնազգիներու եւ այլ ցեղի սողուն-
ներու: Ապա՝ Աստուած կախարդանքէ արթնցուց ծաղկածիւնները, որոնք լեց-
ւեցան միտով ու փետրազարդուեցան ու զայլալելով սէր ըրին ու կոնչելով
յարձակում դործեցին մակարոյծներու ցեղին վրայ եւ սնանեցան անոնցմով:
Ետքէն եկան քարածիւնները, դաշտային ու լեռնային ու միջաւանակ դազան-
անառունները: Գազանները սնուեցան թռչնամիտով ու խոտակեր-կծղակա-
ւարներով: Այս կը պատահէր երկրորդ տարուան ամառը: Ու աշունին, արու-
նէր մտան իրենց տեսակի էգերուն. ու էգերը յղացան ու երրորդ տարուան
գարունին ծնան իրենց ձագերը: Եւ ձագերը մեծցան ու Հասան բեղմնաւորման
յրջանին, որ աշունին մէջ պիտի կատարուէր: Սակայն, ամբան, Աստուած
կիանքի կոչեց խոշորակզմ գազաններն ու անասունները, որոնք յարուժին
սահն ժայռաբեկորներէ ու ծառակոճղերէ: Ու այդ պահէն սկսաւ երկրին վը-
րայ ուժի ու սարսափի մթնոլորտը, քանզի գազանները կը սնանէին խոտա-
կերներով եւ խոտակերները սուղի շէին կրնար ծախել իրենց մորթը. ու պա-
քարը եղաւ սաստիկ, կենաց եւ մահու սասիճան վտանգաւոր: Աշխարհ լե-
ցաւ անիրաւութիւններով, անարդարութեամբ: Ու գազանները կը մնային ան-
պատիժ. անհամեմատ անոնք կը բազմանային: Յաջորդ տարին, չորրորդը,
աշխարհի ստեղծումին՝ նոր ծնածները, ազգի-ազգի ու տեսակ-տեսակ, արու
եւ էգ եղան եւ քաշուեցան, որջարնակ դարձան... Ու անոնք, որ թեւ ունէին
թառ եկան ծերպերու մէջ կամ ծառերու վրայ: Յատկատող եւ գետնաբարձ սո-
ղունները, անոնք, որ կարծրամորթ կամ խեցաքամակ էին, սիրեցին արեւա-
տակ ըլլալ. անողնայար, սառնարիւնները, լպրծուն իրենց մաշկով ծակեցին
գետինը ու մտան Հողին տակ, ծակեցին ծառաբունները ու մտան կեղեւին մէջ.
Իսկ ոճանք, որ անուժ էին եւ ոչ մէկ կերպ չկրցան տեղաւորուիլ հոս ու հոն,
ինքզինքնին նետեցին ջուրերն ու ճահիճները եւ դարձան ջրարնակ:

Ու դարձաւ, դարձաւ ու թաւալեցաւ երկիրը՝ ինքն իր վրայ. ու աշ-
խարհի ստեղծագործութեան սկիզբին կապուած դարերը, կարաւան առ կա-
րաւան, ելան ու դիմեցին միշտ զէպի նոր դարերը: Ու սկիզբը եղաւ վաղըն-
ջական ու մութ, քանզի չկար բանաւոր կենդանին, մարդը, որ գիտնար զը-
րել դարերու արձանագրութիւնը: Ու կենդանական աշխարհը սպրեցաւ ինքն
իրեն Համար: Բարձրացան ու Հնամենի եղան կոյս անտառները, խճողուեցան
ու փորթամցան ծառերը: Ու հրէշատիպ գազաններ ահուղողի մատնեցին եր-

կիրը, վասնզի ոչ մէկ ուժ կարող եղաւ թեփաւորները ծունկի բերել: Ու շարունակուեցան յօշոտումն ու անարգարութիւնը, սակայն, անեցան ու բազմացան բոլոր շնչաւորները. ու դերակշռող ուժ մնաց դազանութիւնը: Ու Աստուած խոկաց եւ ըսաւ ինքնիրեն.

— «Մեր պատկերին եւ մեր նմանութեան պէս շինենք մարդը. եւ թող ան իշխէ ծովի ձուկերուն վրայ, երկնքի թռչուններուն վրայ. իշխէ՛ ցամաքի բոլոր շնչաւորներուն վրայ, որպէսզի աշխարհ կատարեալ ըլլալ. ու անիշխանութիւն շտիրէ երկրի երեսին եւ անարգարութիւններ չգործուին կենդանիներու միջեւ...»

Ու Աստուծոյ խոկումը տեսց երկար. դիւրին չէր լուծումը, քանզի Աստուած դիմանկար չունէր. աներեւոյթ ու անտեսանելի ուժն էր եւ այդ ուժը ինքը՝ Աստուածն էր, որ կախարդական ուժով ու երկրին ընդոճին նախանխով եւ օտանդակութեամբ՝ շունչ եւ շարժում ու ձեւ տուած էր կենդանական ու բուսական աշխարհին: Եւ մարդը տարբեր պիտի չըլլար, իր կազմութեամբ ու բնոյթով, երկրին վրայ դոյութիւն առած շնչաւորներէն, որոնք, ամէն մէկը իր տեսակին պէս՝ ունէին Ֆիզիքական ձեւաւորում: Ղրտխով, իրանով եւ ունդամներով զինուած եւ զատ-զատ՝ կաշապարի մտածի պէս, իրրեւ ամբողջութիւն: Կենդանիներուն մօտ, ամէն զգացում իր զոհացումը եթէ կը գտնէր բնազդով, մարդուն մէջ, բնազդը պէտք էր առաջնորդէր բանականութեամբ: Անասունը թէեւ կը տեսնէր դիմացը, սակայն իր աչքերը կողմնակի կը նայէին ու սրատես չէին, վասնզի զինք անաջնորդող ընկալչային ուժն էր եւ Հոռատութիւնը: ու շատ քիչ տեսակներուն արուած էր վեր նայելու կարողութիւն: Մարդուն աչքը ամենատես պիտի ըլլար, ինչպէս բնոյթով՝ ամենակեր ու միտքը՝ կշռադատող, քանզի իշխանութիւն կիրարկելու համար, ան պիտի ճակատէր իրմէ գերիվեր ուժով՝ դազաններու հետ: Ահա թէ ինչու Աստուծոյ խոկը կը տեսէր երկար ու անլոյծ կը թըւէր...

— «Ուրի՛շ միջոց չկայ. պէ՛տք է զօրաշարժի ենթարկեմ անջրպետային բոլոր ոգիները եւ զրկեմ զանոնք երկիր. թո՛ղ մտնեն, ամէն մէկը մէկ տեսակի արու եւ էգ զազաններու, անասուններու եւ թռչնազգիներու վերնախաւի անդամ-նիրկայացուցիչներուն մէջ: Թո՛ղ անոնք ջննեն, ուսումնասիրեն, ամէն մէկուն ֆիզիքական եւ բնազդային բնոյթը. անոնն թող կենդանիներուն դիմանկարները, աչքի, ականջի, զիթի եւ ձեռք ու ոտի կենդանագիւրները, զործարանային դրութիւնը եւ իւրայատուկ, մասնակի առաւելութիւնները... Ողիներու տուած տեղեկութեանց վրայ հիմնուելով միայն, կրնամ մարդակազմութեան վճիռը կայացնել: Քանզի մարդը պէտք է ըլլայ կատարեալ ամբողջութիւն մը, որ իր մէջ կարենայ կրել աստուածային շունչը. վասնզի, առանց իմ շունչիս՝ անոր պիտի պակսի բանականութիւնն ու դատելու կարողութիւնը»:

Խոկաց ու վճռեց Աստուած. ու զօրաշարժի ենթարկեց երկնային բոլոր ոգիները եւ զրկեց զանոնք, առ առաքելութիւն, երկրին վրայ...

Երբ անջրպետային ոգիները տեղաւորուեցան կենդանիներուն մէջ, աշուն Ժամանակ էր. ու դազանները իրենց տեսակին պէս, անասունները իրենց տեսակին պէս, արու եւ էգ, զիրար կը գտնէին ու արուները կը մտնէին էգերուն, որ կը յղանային. ու զազանը կը գտնէր կնգակաւոր ցեղին արուն, որ կրթոտելէն կուրցած՝ չէր տեսներ զազանը. ու զո՛հ կ'երթար անոր յօշոտող բնազդին: Ու բրդոտ այլ զազան մը, որ ետեւի երկու սոքերուն վրայ շօբօբ զաւլով կը քալէր, կը բունէր, ահա վրան նետուող գիշատիչին մէջէն, կը

Զարգէր անոր ողնաշարը: Ապտ՝ պոռպոռոցով ծառը կը բարձրանար, մեղուաբոյնը կը խառնէր եւ պարսէն դիւահալած, կը փախչէր: Մտաբանակ ու ճիւղէ-ճիւղ ցատկոտող, պողակներ անասուններ բաղեղներէ կտրուած՝ կը հեզնէին ծառերուն տակ զոյսահեման պայքարի մտած, եղջերակիւր երկու խոտակերներու: Ու վերասլաց խոշոր թռչուն մը, ահա, կը սաւառնէր գէպի հեռակայ բարձունք մը, մագիչներուն մէջ տանհրով մանրակազմ անասնիկ մը: Կ'երգէր թռչուն մը տերեւներու տակ պահուրտած. կը գոռար չորքոտանի մը դաշտավայրին վրայ. կը ճղճղար հսկայամարմին կնճիթաւոր կենդանին. կը մռնչէր անտաններուն սարսափ ազդող մէկ ուրիշ դաղան. ու հուաքորը թուփին թռած, զի կը կանչէր...

Երկնառաջ ոգիները, ցուրտերուն հետ ետ դարձան, իրենց Տիրոջ ներկայացնելու տեղեկագիրը: Ամբողջ ձմեռը, իր անյայտ գահին վրայ բազմած, ուսումնասիրեց տեղեկագիրները, որոնք շատ լաւ էին պատրաստուած: Ու Աստուած տեսաւ, որ կը պակսէին ոմանց ստորագրութիւնները եւ շատեր՝ ոգիներէն, չէին վերադարձած երկրէն: Ու այդ քայցակաները բարձրացոյցին Աստուծոյ տրամադրութիւնը, քանզի Աստուած գտած էր մարդը կերտելու դաղտիքը: Այն անասունները, որոնց մէջ տուն-տեղ ըլլալով երկնային ոգիները կը պահէին զանոնք սիրով, պիտի ըլլային նախամարդուն տիպարները: Միայն թէ՛ անոնք նոր կազապարի մէջ պիտի առնուէին, որպէսզի առաջ եկող մարդկային տիպարը ունենար իւրայատուկ կերպարանք:

Ու Աստուած իրազեկ եղաւ, որ բոլոր կենդանիները պոչ կը կրէին. ու պոչը ոմանց մօտ՝ ձեռքի դերը կը կատարէր, միջատներ զօր՝ չ'ընելու կամ վազը ղեկավարելու համար: Կը քայքայուէին քիչեր. ու այդ քիչերուն մէջ կը դռնուէին յարմարադրոյնները՝ բրդոտ մեղրակերը եւ ամէն ինչով սնանող ծառաբնակներուն մէկ տեսակը: Հետագային յայտնի պիտի ըլլար, որ բլրոտ մեղրակերը արջ կը կոշուէր եւ միւսը՝ կապկազգիներու ցեղին պատկառնող՝ չէմփանդէն: Արջն ու չէմփանդէն կը կրէին այժմ, իրենց մէջ երկնային ոգիներ. գիտէին նստոտիլ յետնամարմինին վրայ ու առջեւի երկու թաթերը կ'օգտագործէին ձեռքի տեղեակ: Արջը ցռուկով էր եւ թաւամազ, թուփ, սպիտակ կամ սեւ ստեւով: Շէմփանդէն դաւնչը դէպի ներս քաշուած, ունէր կլոր աչքեր, դիմացը նայող, ձեռքերու արտայայտութեամբ դէմք. թաւամազ էր արջի նման ու վազքի պահուն շորքթաթ կ'ըլլար, ինչպէս արջը: Երկուքն ալ ունէին ոչ գոգիտի տեսք. չէմփանդէնի երեսը նայել կարելի չէր, քանզի տգեղներուն տգեղն էր:

Ու շարունակելով քննութիւնը հասած տեղեկագիրներուն, Աստուած կը ստորագծէր կողմնակի բնութագրիները, տարբեր-տարբեր ցեղերուն եւ իր ստացած տպաւորութիւններով՝ կը սկսէր որոշակիորէն պատկերացնել ապագայ մարդը: Դիմանկարներուն մէջ, Աստուած յարմարագոյնը գտաւ առիծիներ, որ կլոր էր, գունչը ոչ-ցցուն, աչքունքը՝ տպաւորիչ, ախանջները՝ ոչ-խոշոր, իր ամբողջութեան մէջ՝ վեհագոյն տպաւորութիւն թողաղը: Զանց ըրաւ վագրային վայրագութիւնը վագրին, որ նոյնպէս գեղեցիկ դաղան մըն էր: Հաւնեցաւ Տէրը շունին բնգոծին հաւատարմութեան եւ թիչ մը քծնող նկարագրին: Ու մէկդի շարունակ գային ոչ-բարի, անազնիւ բնոյթը. ու բուրնին, որուն մէջ չէր կրցած երկար մնալ երկնառաջ ոգին, դարչելի իր դիւակերութեամբ: Կարմիր գիծ քաշեց անոր անունին վրայէն, քանզի եկած տեղեկագիրն իսկ նեխածութիւն կը հոտէր: Փիղը աճեւ էր, անհամայնափ մարմնամասերով, հսկայ եւ դանդաղաշարժ. սակայն, անոր ուժը նկատի ունեցաւ Աստուած, որ ուղտին վրայ սապատներ նկատեց ու զարմացաւ, թէ ինչո՞ւ

այնքան մանրիկ գլուխ ունէր ծուռ վիզի մը վրայ: Ընդզօնց անոր ռիսկալ ընտրութիւնը: Եւ ապա, Աստուած, գոհանալով քաղած տպաւորութիւններէն, զանց ըրաւ խոտակերները, թէեւ սիրեց միտքը պահել եղնիկին սրունքները, որոնք կրնային օրինակ ծառայել, մարդակազմութեան պահուն՝ էզին համար: Միակ անպատեհութիւնը այն էր, որ այս բոլոր կենդանիները ստեղծով ծածկուած մորթ ունէին, քանզի, ցուրտին թէ տաքին, անոնք ի ծնէ, այդպէս պիտի մնային ու ոչինչ աւելորդ ծածկոց պիտի կրէին: Ու Փիղիքսպէս, արու-էդ փոխարարութեանց մէջ, ամօթի զգացում պիտի չունենային, վասնզի անասուններ էին ծնած...

Ստեղծագործական վերջին ու կարեւորագոյն ծրագիրը կազմելէ ետք, տիկերքի Տէր, ամենակալն Աստուած սպասեց յաջորդ աշունին, երբ զազանները պիտի կրքաւորուէին. եւ արունքը պիտի մտնէին էզերուն... Այն ժամանակ ինք խառնել պիտի տար բոլոր արունքու սերմին ու էզերու սաղմին մէջ՝ մարդուն ծնունդ տուող իւրաքանչիւր բջիջներ, այն յատկանիշներով, զորս քաղած էր ողիներու տեղեկագիրներէն: Ու պիտի հրամայէր անջրպետի բոլոր ողիներուն, որ կրկին իջնէին՝ կենդանիներու մէջ՝ մնային մինչեւ գարնան ծննդաբերութիւնները: Այնուհետեւ, պիտի առանձնացուէին նորածինները արջերու եւ շմփանդէններու, անոնց տալու համար վերջին յղկում մը. ու յատուկ զարգացման պայմաններ: Քանզի Աստուած որոշեց, որ մարդը, արու եւ էգ, եղած ըլլար երկոտանի, ու զեղեցկագոյնն ու վայելչակազմը բոլոր կենդանիներուն, որոնք կը կոչուէին, ի ծնէ, անասուն եւ ոչ-անասուն: Ու մարդը պոչ պիտի չունենար եւ ոչ ալ տեւապէս պիտի ծածկուէր՝ քրտակ մաշկը ստեղծով կամ հիւստուած այծամազով եւ ոչխարի քուրդով, վասնզի այս բաները կրող անասունները պիտի ապրին մարդուն մօտ ու դառնան սննդամիջոց իրեն համար: Եւ տակաւին մարդը կ'ունենայ լուսանալու կամ հաւկթածեւ դիմաշիւծ. այտերը ողորկ, քիթը՝ ցցուն, նայուածքը՝ սուր եւ ամենատես: Սրունքները ծուռիկ պիտի չըլլան, այլ՝ հաստատուն, ուժեղ եւ ձեռքերը՝ ամենակարող բռնիչ ու բռունցք: Ու իր պաշտպանութեան միջոցները խելքով պիտի վճռուին եւ ոտքն ու ձեռքը գործադրողները պիտի ըլլան այդ միջոցներուն...

Ու Աստուած ծրագրելով այս բոլորը, ելաւ-ընաց անջրպետին մէջ շրջապայութեան, քանզի շատ գործեր ունէր կատարելիք: Ու ոչ ոք զիտցաւ Իր գործերը, որոնք կատարուեցան այլ մոլորակներու վրայ: Եւ ամբողջ երեք եղանակ Ան շրջապայեցաւ, մինչեւ որ աշունը կիսուեցաւ երկրին վրայ ու կենդանական աշխարհին մէջ, սերնդագործելու բուռն կիրքը բոբբոցեցաւ զայններէն ներս ու անասուններուն քով: Այն ատեն յիշեց Աստուած Իր ուխտը եւ խառնել տուաւ կենդանիներուն սերմին ու սաղմին ինչ-որ նիւթ մը, որ այլափոխող ուժ ունէր ու կենսունակութիւն: Եւ երբ խառնեց անասուններու սաղմին հրաշագործ նիւթը, արունքը մտան էզերուն եւ էգերը յղացան ու ծնան Աստուծոյ պատկերացուցածին պէս խառնածին ձաղեր, որոնք կատարեալ չէին բոլորովին օակայն, ազնուացած սերունդի մը նախակարպետները պիտի դառնային:

Եւ Աստուած յանձնարարեց ողիներուն, առանձնացնել արջերու եւ կապիկներու ձագերը, զոյգ-զոյգ՝ արու եւ էգ, իրենց մայրերով, իբրեւ ստընտուններ, մինչեւ կաթնակերութեան վերջը: Ու տուաւ հրաման, որ կարելի էր գատել այլ տեսակի զազաններու ձագեր, որոնք բանով մը նմանութիւն ունէին նախաստեղծ մարդ-պատկերին հետ. եւ այս բոլոր նորածինները կըր-

նային սնանկի էգ առիւծի, քածի, ուղտի, փիղի եւ աղուէսի կաթով, մինչեւ կաթնակերութեան վերջը, որմէ ետք՝ ընտրեալ ձագերը պիտի ուտէին երէի միս, ծառի պտուղ եւ բանջարներ: Եւ երբ երկրին վրայ աշունը կիրուէր, նորեղեկ արունքը պիտի մտնէին իրենց տեսակի, բայց տարբեր մօրմէ ծնած կգերուն, որոնք յղանալով պիտի ծնէին քիչ մը աւելի հեռացած նախամօր նմանութեամբ ձագեր, եւ քիչ մը աւելի մօտեկցած ժարդկային նախատպարին:

Եւ ինչպէս որ պատուիրած էր Աստուած, եղաւ ու շարունակուեցաւ դարերով ու դարերով, մինչեւ որ առաջ եկան մարդկային ցեղերը, իրենց տեսակին պէս, արու եւ էգ: Եւ ունեցան փայլուն մաշկ, որ տեղ մը սպիտակ էր, ուրիշ տեղ՝ դեղին, եւ այլ վայրերու մէջ՝ մութ-թխադոյն ու սեւ: Ու այս գոյներով ալ ճանչցուեցան ու իրար պիտոցան: Ու լեցուցին աշխարհը բանականութեամբ ու խելքով զինուած արարածներով, որոնք ինքնապաշտպանութեան իրենց միջոց, գործածեցին նախ եւ առաջ սրուած քարեր, ապա պղինձով պատրաստուած գործիքներով եւ ետքէն՝ երկաթեայ զէնքերով կըսուի մղեցին զազաններու դէմ եւ իրարու դէմ, վասնզի մարդուն մէջ չկորսուեցաւ զազանային բնազդը, զոր ժառանգած էր զազանատիպ նախնիններէն...

Գ.

ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ...

Եւ քանի որ տիեզերքի Տէր, ամենակալ Աստուած անյայտ էր ու անտեսանելի, մարդիկ ուրացան զինք, ի սկզբանէ, ու պաշտեցին կրակը, որ զիրենք կը տաքցնէր ու պէտքերը կը հոգար. ու պաշտեցին ամպադոտոցը, որ թէ՛ վախ կ'ազդէր եւ թէ՛ երաշտը կը կտրէր: Ու պաշտեցին արեւն ու լուսինը, քանզի անոնք լուսաւորեցին ցերեկն ու գիշերը: Եւ ստեղծեցին պաշտեցին իրենց նմանները, որոնք քաջ էին ու բռնապետ: Նախամարդիկ սկսան պաշտել այն, ինչ կը տեսնէին կամ անկէ կ'օգտուէին եւ կը վախնային: Անտեսանելին իրենց համար անգոյ էր ու տեսանելին շօշափելի եւ իմանալի:

Ու պատահեցաւ, որ Եհովա անունով մէկը, որ տէրն էր եւ իշխողը Եղեմ կոչուած երկրին, աստուածացուց ինքզինք եւ ստալին անգամ ըլլալով՝ խօսեցաւ աշխարհի ստեղծագործութեան վրայ. ու անոր ծնունդը գրաւ Եղեմի մէջ, ուր հիւսուեցաւ Ազամ եւ Եւայի առասպելը:

Եղեմը փոքր երկիր մըն էր, Ենով Թափոզ չորս գետերու միացման կէտին կազմուած, տեղալանման հողամասի մը վրայ հաստատուած: Ու բերրի էր հողը. Հեռաւոր լեռնաձորերէն ու սարալանջերէն բերուած պարարտ տիգը մը կը սփռէին չորս գետերը Եղեմի շուրջ-ընդհանր, ուր ինքնաբոյս՝ կ'անէին հողար ու մէկ պտղածառի տեսակներ, արմտիք ու Հարուստ բուսականութիւն մը: Եւ հոն ապրող մարդիկ, որ նախամարդու պարզ կեանք կը վարէին, կը հաւատային բնութեան բարի ու չարի, քանզի ամէն ինչ անձեռագործ էր հոն: Ու այդպէս էր նոսե ամէն տեղ, ուր նախամարդիկ անելով ու շատնալով, կ'յան տարածուեցան եւ Հետզհետէ օտարանալով իրարու, եղան առանձին-առանձին ցեղախումբեր, որոնք ունեցան զատ-զատ՝ իրենց աստուածները, բարիի ու շարի հասկացողութեամբ:

Ու բարութեան ոգին ամէնէն շատ հասկնալի դարձաւ մարդոց՝ քանզի անոնք տեսան, որ բնութիւնը ինքնաճ բերքերով կը սնուցանէր դիրենք եւ ըսին իրարու՝

— Բարութեան օգին աւել-տուած մեզի, գոհանանք եւ փառք տանք իրեն:

Եւ եղան մարդիկ, որ բթամիտ էին եւ հասարակութիւն չհասկցան արտաջիններուն խօսած-յայտնած միտքը. ու հարցուցին՝

— Որո՞ւ պիտի ազօթենք ու փառք տանք:

Եւ գտնուեցան խելացի մարդիկ, որ ըսին՝

— Աստուածին:

Ապա՝ մարդիկ անդադար կրկնեցին ծանօթ խօսքը, որպէսզի բթամիտներուն միտքը բանային ու լեզուն վարժեցնէին՝

— Աստուածին փառք տանք, աւել-տուածին փառք տանք...

Եւ բոլոր շնչաւոր ու անշունչ աստուածները գոհ մնացին, քանզի մարդիկ կը սկսէին հասկնալ Աստուծոյ գոյութիւնը: Ու հաւատալ Անոր իրենց վրայ տարածած առաւելութիւններուն: Եւ աստուածները շատ էին, եւ ունէին ընդարձակ հողեր, զորս կը կոչէին երկիր. ու իրենք անոնց վրայ արարող մարդոց տէրն էին կամ անդրանիկ հարազատը, որ ինքզինք կը պարտադրէր իբրեւ աստուած-առաջնորդ՝ միջնորդային կոիւնքու ժամանակ:

Ու Եդեմի տէր Եհովան մէկն էր այդ աստուած-առաջնորդներէն: Ու եղաւ Եհովա ամենախորամանկն ու խելացին աստուածներուն մէջ. վասնզի ան պիտոցաւ լաւագոյնս օգտապարտել աստուածային անպարարութիւնը... Եդեմը ընդունել տալով մարդկութեան իբրեւ օրրան եւ սկիզբն աշխարհի: Ազոսի եւ Եւայի առասպելը հիւսուեցաւ հոն. ու Եհովան եղաւ «Գիրք Ծննդոց»ի միակ եւ մէկ Աստուածը, որ, ի վերջոյ շարձաւ կողմնակալ, ցեղապաշտ, սխալալ ու նախանձոտ՝ երբայեցիներու կողմէ փառաբանուած եւ պաշտուած աստուած մը: Ու պերճախօս գրիչ մը, որ առաջինը եղաւ բոլոր գրիչներուն մէջ, գրեց ու նուիրականացուց աշխարհի ստեղծագործութեան ու Ազոս-Եւայի առասպելը, անոր տալով «Աստուածաշունչ» կոչումը: Եւ «Գիրք Ծննդոց»ը սկիզբն է երկանց, բոլորն ալ մէկ շունչով գրուած, մէկ նպատակի համար — առաւ երբայեցիներու պատմութիւնը, ազդեցելով անոր սկիզբը ստեղծագործութեան սկիզբին հետ:

Ու եղաւ մարդկութեան սկիզբը ահա այսպէս, ինչպէս գրուած է «Գիրք Ծննդոց»ի մէջ:

Ու Աստուած, որ է Եհովան, ըսաւ՝

— «Մեր պատկերին եւ մեր նմանութեան պէս մարդ ընենք, որ ունենայ բանականութիւն եւ աստուածային շունչ. ու շնորհի ոչ մէկ անասունի. բայց հողէ լինուած ըլլայ, ու անմահութիւն չունենայ, այլ գառնայ հողին, ինչպէս են աշխարհի բոլոր շնչաւոր արարածները»...

Խորհուրդէն գործի անցնելով, Եհովա իջաւ Եդեմայ դեպի արեւմուտի կաւ կար: Առաւ կաւը եւ գլանածեւ ըրաւ ու դրաւ առջիւր. ապա՝ կաւէն ձեւեց թեւեր ու ոտքեր, իր թեւերուն ու ոտքերուն պէս: Ու կպցուց թեւերը գլանածեւ կաւի վերնամասի երկու կողմերուն. եւ փակցուց նմանապէս երկու ոտքերը իրանի ներքնամասի երկու կողմերուն: Եւ երբ պիտի շինէր գլուխը նախամարդուն եւ դէպ անոր ուսերուն վրայ, բարակ պարանոցի մը օղնութեամբ, նշմարեց գլխավերեւի ծառին վրայ տարօրինակ կենդանի մը, որ կապկութիւններ ընելով՝ ծիծաղը շարժեց: Այն ատեն Եհովա ծրարելին մէջ մտցուց կարեւոր փոփոխութիւն մը.

— Վնասները մարդուն մէջ աստուածայինը անասնականին հետ, որ-
պէսզի ոչ ոք փորձուի պարծենալ, թէ մարդը Աստուծոյ պատկերով եղաւ :

Այնուհետեւ մարդակազմ կաւր կանգնեցուց քաջի. տալեց ու յղկեց
ու առաւ իրաւ կերպարանքը մարդուն. ետքէն, անոր մէջ հոգի դրաւ, փշե-
լով անոր վրան: Եւ ահա, ստեղծուած էր մարդը, որ անմազ մաշկ ունէր եւ
թուփ էր ամբողջութեամբ: Գլուխը բարձեւ էր ու ծածկուած խոխ մազե-
րով. աչքերը մեղրադոն էին, քիթը՝ բարձր, չրթունքները՝ հաստ: Ձեռքերն
ու ոտքերը կը կրէին մատներ եւ կպցուած էին ափին ու ներքաններուն: Նա-
խամարզը, որ Արամն ինքն էր, բոլորովին մերկ էր եւ իր մերկութենէն
չամչցաւ, երբ աչքերը թարթելով, տեսաւ իր առջեւ, քարին նստած Եհովան,
որ անպանծան պիտի ու ժորուք ունէր եւ բաց ճակատ էր. ու նայուածքը կի-
ստմարտով օտարուած էր: Արամ զարմացած էր, հարցուց.

— Ի՞նչ եմ ես, ո՞վ եմ դուն...

Ու Եհովան ըսաւ.

— Դուն նախամարզն ես, զոր ստեղծեցի ես. իսկ ես՝ ըստ Տէրոյ եմ.
Ինձմէ զատ ուրիշ տէր պիտի չճանչնաս ընաւ...

Արամ դարձաւ եւ ըսաւ.

— Ես ի՞նչ պիտի ընեմ, Տէ՛ր:

Եւ Եհովան ըսաւ.

— Քեզի տուի խելք եւ բանականութիւն. թու մէջդ գրի իմ շունչս. զոր-
ծածէ այդ երեք առաւելութիւնները, որոնցմէ զուրկ են անասունները, և ամէն
բան կարգի կը մտնէ. ու դուն կը դառնաս իմ փոխանորդս աշխարհի վրայ ու
կ'իշխես բոլոր գազաններուն եւ անասուններուն՝ անխորհրդ. եւ թու բնակա-
լարացի պիտի ըլլայ իմ հաստատած Եդեմս, ուր կը զտնես ամէն տեսակ տղ-
տուղ, ծաղիկ ու ծառ. եւ անտառին մէջ ամէն աղջի գազաններ ու անասուն-
ներ:

Արամ ծոեց գլուխը. քանզի, ծառին վրայ սէր ընող կապիկներ տե-
սաւ.

— Տէ՛ր, մի՞թէ ես առունձինն պիտի ըլլամ...

Ու Եհովան նայեցաւ գլխավերեւը, ծառին վրայ երկու կապիկներուն,
որոնք զիրար զրկած էին. եւ արուն մտած էր էպին: Երկար խոկաց Տէրը.

— Դուն առանձինն պիտի չմնաս. բոլոր կենդանիները թեզի հետ պի-
տի ըլլան. եւ դուն, անոնց մէջէն պիտի գտնես թու ընկերդ...

Եդանակը աշուն էր. ու աշուն էր Եդեմայ գետին վրայ, պտղաստանին
մէջ եւ անտառին խորը, ուր ազդի-ազգի գազաններ ու ամէն տեսակի անա-
սուններ, գետնաքարչ սողուններ ու երկնքի մէջ թեւածող թռչուններ կեն-
դանական դեզանկար աշխարհ մը կը ցուցադրէին: Եհովան թողուց Արամը
դետափին ու ինք անյայտացաւ Եդեմի շուքերուն տակ: Ու մնաց Արամ մի-
նակ, չզիտնալով ընելիքը. ծարաւ դպաց. ու ծոեցաւ ջուրին վրայ ու տեսաւ
իւր պատկերը, բայց խրտչեցաւ անկէ, քանզի դեռ չէր վարժուած իր պատ-
կերին: Խմեց Եդեմայ ջուրէն. ու վճիտ ջուրին մէջ տեսաւ լող տուող ձուկեր,
որոնք տարժով կը թռչէին դէպի վեր: Ու բնագոյօրէն մտաւ ջուրը, ձուկ բըռ-
նելու համար. ու ձուկը անհամ էր ու թեփոտ. չկրցաւ ծամել, թքաւ զայն
ու շարտեց կիսամեռ ձուկը ցամաքին վրայ, ուր քոտաթաթ սողուն մը առաւ
ձուկը բերանը ու գայն կլլեց: Արամ ձանձրոյթ զգալով, քաշեց դէպի անտա-
ռը: Ծամբուն վրայ գտաւ խնձորենի մը, որ ճիւղերը վար կախած էր. փրցուց
կարմիր խնձոր մը եւ խածաւ. քիմքը ախորժեցաւ. քաղցրահամ հիւթէն, որ
ծորեցաւ լեզուին վրայ: Կերաւ խնձորը ու քաշեց: Դիմացը, թաւուտքին խո-

բը, բացառի մը վրայ կուրի բռնուած եղջերուներէն մէկը՝ պարտուած ու շնչահեղձ՝ կ'իյնար ահա, յաղթականի ոտքերուն տակ: Ու յաղթականի շուրջ, անեղջիւր գլուխները ցցած, քանի մը երէներ, դողահար ու սպասողական՝ կը դիտէին արուն, որ հպարտ ու սլացիկ կանգնած էր իր փոշեանին դիակին քով: Աղամ կեցաւ ու պահուըտեցաւ ծառի մը ետին: Եւ ահա արուն, եղջիւրներու ծառը առած զխուն՝ զնաց դէպի սպասող երէները: Եւ Աղամի մէջ արթնցաւ արուն, քանզի եղջերուն կը մտնէր էղբէն մէկուս. եւ միւսները կը սպասէին իրենց կարգին, արուին սերմը ընդունելու իրենց մէջ...

Ու Աղամ միբնուեցաւ անտառին մէջ եւ ամէն քայլափոխին կը տեսնէր զոյգերու խառնուիլը եւ իր մէջ ուժեղանալը կը զգար անասնական կիրքին, քանզի Տէրը այդպէս խմորած էր դինք, որ կարենար խառնուիլ անասունի մը հետ ու զայն ընել իր ընկերը: Ու տեսնելով, որ ամէն մէկ տեսակի արուն կը հալածէր իր տեսակին ու ցեղին պատկանող էղբ, Աղամ չուարեցաւ, վասնզի իր տեսակի կենդանի մը չէր նկատեր զազաններու եւ անասուններուն մէջ: Այն ատեն դործեց իր մէջ բանականութիւնը, որուն թելադրանքով սկսաւ վաղիջել ասդին-անդին, ուր որ տեսաւ էգ մը, ինկաւ անոր ետուէն, զայն բռնաբարելու զրգիտովը լեցուած: Սակայն, Աղամի երկրտանութիւնէն ու անօրինակ տեսքէն խրտչելով, սարսափահար կը փախչէին անասունները եւ Աղամ անկարող էր զանոնք հետապնդելու մէջ, քանզի ընդարձացած էին ոտքերը, որոնք վազքի փորձ չունէին դեռ: Եւ ի դուր անցան Աղամին բոլոր ճիղերը, որովհետեւ ոչ մէկ տեսակի էգ թողուց, որ մարդը մտնէր իրեն, բնազդօրէն, գտնելով անիմաստ նմանօրինակ խառնուիլը, որ սերունդ պիտի չտար իրեն: Ու այսպէս, Աղամ շատ օրեր փնտոնց ու չտեսաւ իր էգը:

Եւ Աղամ յուսահատ ու յողմարեկ, իջաւ ծառի մը տակ՝ կանանչին. երկարեցաւ հոն ու քուն մտաւ: Ու քունին մէջ, թէ արթմնի՝ լսեց օձին ֆըշը-լոցը. ու կանանչ խոտի պատը ճեղքելով Աղամին մօտեցաւ հսկայ սողունը. ու կեցաւ պորտին վրայ, երկնդի լեզուն հանց եւ բարբառեցաւ.

— Դուն, հողածին Աղամ. ինձմէ մի սարսափիր. Ե՛սման քեզ հողէն ստեղծելով, կերած հողս չպակսեցուց. հող շա՛տ եւ իմ կերած հողս՝ քիչ: Ե՛հա վան ըստ իմ ցեղս կրունկի տակ առաւ եւ շատերուն դուրսը ճնճըխեց: Իմ վրէժս իրեն դէժ է. եւ ես քեզի հետ եմ, քանզի քեզ առանձին թողուց: Ան ջու կողէդ առաւ ոսկոր մը, երբ դուն կը քնանայիր առջի օր եւ կի՛ն շինեց ոսկորէդ: Քեզի ընկերուհի պիտի ընէր, սակայն զայն դտաւ շատ գեղեցիկ ու առաւ իր քով, իբրեւ ազախին եւ իբրեւ հարձ...:

Աղամ քունին մէջ սարսափահար եղած էր, քանզի կը տեսնէր, որ օձը պլլուած-նստած էր իր կուրծքին եւ խանդոտ աչքերէն յայտնի կ'ընէր, թէ ինքը էգ օձ էր, եւ զուցէ, Ե՛հա մի կի՛նն էր, որ այլափոխուելով օձի կերպարանք ստացած էր: Աղամին լեզուն բռնուեցաւ: Այն ատեն, օձը զգաց, որ ինք կուրցած էր խանդէն եւ պիտի ոպանէր խեղճ հողածինը: Իջաւ Աղամի վրայէն ու կեցաւ մէկդի, պոչին վրայ օրօրուելով եւ տատանելով, ծովի ալիքի նման:

- Աղամ չունչ առաւ եւ կ'մկմաց.
- Ատուած ըսաւ զտիր քու ընկերդ. փնտոնցի շատ օրեր եւ չգտայ... Եւ օձը ֆըշալից մայնով բարբառեցաւ ու ըսաւ.
- Գու էգդ անտառի անասուններուն մէջ չես գտներ, քանզի, անոնց-մէ ամէն մէկը՝ կը մանչ իր տեսակի էգին եւ էգը իր տեսակի արունին սերմը

կ'ընդունի իր մէջ ու կը յղանայ, վասնզի, օտար սերմը սերունդ չի տար իրեն...

Աղամ ինկաւ փորին վրայ ու սողաց դէպի օձը. եւ այդ ձեւ շարժելը ինքնաբերաբար եղաւ. ու օձը դիտցաւ, որ հողածինը կը պաղատէր իր առջեւ սողալով: Արդարեւ Աղամ մրմնջեց.

— Քանի որ Եհովան առաւ իմ կողակիցս, քանզի իմ սակորէս ստեղծած էր զայն, եւ մերժեց իմ մարդութիւնս, մղելով դիս դէպի անասունները — գտիր, ուրեմն, ինձի յարմարագոյն ընկերը ճարելու միջոցը, տիրուհի. աշուճն է, աշուն բոլորին համար եւ ինձի համար...

— Ե՛ւ ինձի համար, — շարունակեց օձը Ֆլլալով. ու Աղամին արիւնը սասեցաւ երակներուն մէջ, զգալով օձին թունաւոր կրքոտութիւնը:

Եւ Աղամ ինկաւ կրկին անզոյս խոր քունի մը մէջ. ու արթնցաւ ընդօստ, երբ պաղ մարմնի մը սահիլը զգաց մորթին վրայէն: Երազին օձը իրականութիւն էր, քանզի ան սողալով, ահա կ'անցնէր իր ազդերուն կպած մասով ու ամբողջ կուրծքին երկայնքով՝ ուսին վրայէն կ'իջնէր կոնանչին, ներքեւը ակօսելով խօսը: Իր Ֆլլոցէն կը դողային տերեւ ու թուփ. ու մանրիկ անասնիկներ, իրենց թաւ ազին վեր տանելով կը սլանային բուններն ի վեր: Գետին թառած թռչուն մը քիչ անդին մնաց կպած խոտին եւ կուլ զնաց նեւի պէս սլացող օձին: Աղամ կ'անպիտանար անէծքը եւ արդէն միջոց ալ չուներ ճշմտիւ վտանգաւոր օձին գլուխը: Ելաւ տեղէն ու վազեց դէպի հակառակ կողմը ու ծառերը կը շարժէին իր անցքին ու թռչուններ կը պոկուէին իրենց թառէն ու կը սլանային դէպի երկինք: Մանրիկ դազաններ խոյս կու տային իրմէ եւ Աղամին կը թուէր, թէ այդ բոլոր իրարանցումին պատճառը ինքն էր, երբ ահա գէմէն դալը նշմարեց բրդոտ դազանի մը: Գազանը կը քալէր հտուէի ոտքերուն վրայ ու կը թուէր, թէ գինով էր եւ այդիկն նոր ելած էր: Աղամ կանգ առաւ. կանգ տուաւ նոյնպէս բրդոտ դազանը, որ հետագային պիտի կրէր արջ կոշտի մը: Նայեցան իրարու եւ արջը տուաւ տրուահաստը, որ Աղամին վրայ էր: Ու սկսաւ պարել արջավարի կեցած տեղը: Անհունի ձայններ կը հանէր ու պարելով կը մօտենար արջը եւ զարմացած կը դիտէր Աղամ արջին պարը ու չէր զգար թշնամական վերաբերում արջին կողմէ իրեն հոնդէպ: Մօտեցաւ արջը եւ Աղամ ժպտեցաւ անոր. մօտեցաւ արջը եւ Աղամ դիտցաւ, որ անիկա էր էր ու իր մէջ ծնաւ զայն բանաբարելու կիրքը. եւ արջը բնազդօրէն դիտցաւ Աղամին միտքը ու խելագար շարժումներ գործեց եւ երբ հասած էր Աղամին, յանկարծ պլլուեցաւ անոր ու պար դարձաւ արջային կրքոտ ձայնը հանելով: Աղամ զգաց բրդոտութեան խոտոր իր մորթին վերայ ու արջը դիտցաւ, որ ժամանակն էր եւ ինք այրի էր, քանզի ամբան մէջ արուն ճակատելով Վազրին հետ, ջարդած էր անոր ողնասիւնը, բայց գտած էր իր սատակումը վազրէն ստացած մահացու վէրքերուն պատճառով եւ ահա աշուն էր ու արուն չկար: Այն ատեն, այրի արջը ինկաւ մէջքին վրայ խոտին, ու իր գլխին մէջ ունէր Աղամը, որ ճանչցաւ ու մտաւ անոր: Ու մնաց անոր հետ մինչեւ առաւօտ...

Եւ այս դազանիքը ոչ ոք դիտցաւ, քանզի յաջորդ օրը էր արջը զնաց որսի, փորին քաղցը հոգալու համար. ու Աղամ մտաւ Եգէմ, բողոքելու համար Եհովային, որ իրեն յարմար ընկեր չէր ստեղծած: Ու ծածուկ պահեց արջին հետ յարաբերիլը, զայն անպատշաճ համարելով իր մարդկայնութեան սկզբունքին.

— Տո՛ւր ինձի, Տէ՛ր. իմ ընկերուհիս, զոր հանեցիր իմ կողէս, քնացած պահուաւ...

Ե՛հովա պտոյտի ելած էր եղևմական պարտէզներուն մէջ: Ան Հմայ-
լած՝ կը քալէր, արքայական գնացքով մը: Քերովբէներ ու սերովբէներ, որը
առջեւէն, որը յետպահ. ու քովերէն՝ հարի-փերի ազլիկ հրեշտակներ՝ սպե-
տակազգեստ, փետրաթեւ, քղածածկ՝ կը կազմէին եղևմական արքայութեան
չքախումբը: Թէ ի՞նչ առիթով էր կազմակերպուած այդ երթը, ոչ ոքի յայտ-
նի էր չքախումբէն: Քերովբէները կը կրէին իրենց ձեռքին երկաայրի սուր,
խակ սերովբէները փողեր ունէին իրենց ուսերէն կախ: Հրեշտակները կը սա-
Հէին ծփանքի մը պէս հագիւ գետնին դպչելով: Եւ ահա չքախումբին առջեւ
ելաւ Աղամ քոյրորդին մերկանդամ եւ իր թուխկարմիր մորթը կը ճառա-
գայթէր արեւի շողերով ու ամբողջ հասակով ան կը նմանէր գեղեցիկ պրոնդէ
արձանի մը, որ կարծէք, այդպէս դրուած էր ճեմելիքին վրայ, որուն նայո-
ղը Հմայուէր եւ փառք տար Ե՛հովային, քանզի ան էր հնարած ու կերտած
այդ կենդանի արձանը:

Երբ Աղամ ձեւակերպեց իր բողբոջը, ազլիկ հրեշտակները քողերու
տակ ժպտեցան. մինչ քերովբէները ցցեցին իրենց սուսերը, իրքեւ պատրաստ
դաշիճներ: Փողահարեցին սերովբէները, որ նշան էր զգաստութեան եւ պատ-
կասանքի: Աւ Ե՛հովան տեսաւ յիսուն կանգուն հեռուէն անցնող եւ կանանչ
խտերը ոկոտող մարդարտամէջք օձը, որը խոտած էր Աղամին, քունին մէջ
ու ծառին տակ: Անոր սողուն մարմինը կը կոհակուէր օդակ-օդակ եւ այդ
ծփանքին վրայ կը դունաւորուէին ծիածանի հօթը երանգները: Ան հակադ-
րութիւն մըն էր գեղեցկութեան եւ սարսփի:

Հեռացաւ թէեւ ան, սակայն, իր Փշոցը մնաց շրջապատին մէջ, իրքեւ
ողբերգութեան մը բեմադրութեան առթիւ նուագուած ահագրու երաժշտու-
թիւն:

Ե՛հովա, նայուածքը հեռացած օձի դացած ճամբուն ուղղած, բամբ ու
սողդու ձայնով հարցուց.

— Ո՞վ քեզի տուաւ այդ յուրը, Աղամ. միթէ օձը պղտորից մտքերդ է
Եւ Աղամ արձանացած չքախումբին առջեւ, պտտասխան տուաւ եւ ը-
սաւ.

— Ան ինձի երեւցաւ քունիս մէջ, երբ երկար վազվզելէն յոյնած՝
նիրհեցի ծառի մը տակ. եւ ահա, կը լսեմ իր Փշոցին արձագանդը ունկերովս
ու կը դողամ ամբողջ մարմնովս...

Այն ատեն Ե՛հովա մեղմացաւ ու լոյսեց ամպանման մօրուքը.

— Գիացիր, Աղամ, որ երազները բնաւ ճշմարտութիւն չեն, այլ հա-
կառակը եւ դուն զո՛նն ես քու երեւակայութեանդ: Ըսի եւ իմ խօսքս երկնա-
տաք օրէնք է. որ դուն գտնելու ես դազաններու եւ անասուններու մէջ քեզի
յարմար դոյզը, որ եւ ըլլայ քու սերունդիդ նախամայրը...

— Տէ՛ր, ես չգտայ մէկը ինձի յարմար. բոլորը չորքոտանի են եւ ոչ
նպաստաւոր իմ կազմին եւ Ֆիդիբական դրութեանս. ես զո՞վ ընտրեմ ան-
բաններէն... իրքեւ սերնդամայր: Մի՞թէ վայել է ինձի արջացելը...

— Գարունքին հաւաք կ'ըլլայ եւ այդ հաւաքին մէջ կը փնտռես քու
ընկերդ. մինչ այդ, կրնաս խորխափել անոնց տրամադրութիւնները...

Տեսակցութիւնը վերջ դտած էր, քանզի, Ե՛հովա իր չքախումբով, խո-
րացաւ Եղևմին ներսերը, ուր Աղամին արդիւուած էր մուտքը:

Ե.

ԿԱՆԱՐԴԱՆՔԸ . . .

Աղամբ մնաց առանձին ու ամբողջ Եղեմը կորսնցուց իր չքեղութիւնը : Եղեմամբ անտառը դարձաւ որ կեանք մը ունէր . հերարձակ ծառեր ածած ու խոնոզած էին արահետները : Հասարակութիւն էին անոնք եւ անոնց պլլուրած մակարոյժ թուփերը բարձրանալով, թեքած էին յանկարծ գլուխները ու կազմած բաղնիկներ, որոնցմէ կախուած ինքզինքներն կը ձօճէին կապկազ դիմերը, իրենց խլացուցիչ կանչուրտուրով անտառին խաղաղութիւնը պղծելով : Երբեմն անոնք հնդկընկոյզ կը նետէին ծառերու տակէն անցնող գազաններուն վրայ եւ երբ գազանները կատաղած՝ կը մոնչէին, կապկազ դիմերը ահաւոր աղմուկ հանելով կը զուարճանային, քանզի գազանները ոչինչով կրնային փրկուիլ հասցնել իրենց : Մէկ-մէկ վազրազդէ մը կը փութէր բարձրանալ ծառը եւ պատժել անմիտ կենդանիները, սակայն, բաղնիկներէ կախուիլ անկարելի էր ձեռք չունեցողին : Սեւ, բրդոտ արջը նոյն բախտին կը հանդիպէր եւ կը փախչէր կապկազ դիմերու փոքրիկ այդ աշխարհէն գլուխը բռնած ու կոծկոծալէն : Կապկազները կը սարսափէին փեղէն միայն եւ կը զուշանային անվայել ընթացքի մէջ ղտնուիլ, երբ փեղին էր անցնողը ծառատակէն : Ու փեղը երբ ունենար իր պատճառը, կը ցնցէր ծառը եւ ապա կը տապալէր դայն եւ մէկ քանի կապկազներ կամ կը կոխկռտուէին եւ կամ կը բզկտուէին ծոտիկը թափառող գազաններէն :

Ահա այս փոքր աշխարհը գրաւեց Աղամբն ուշադրութիւնը, աշունէն գէպի դարուն ձգուող ժամանակաշրջանին մէջ : Ան չէր ուզեր հանդիպել էգ արջին, քանզի անիկա, իր սիրտին զեղումներուն մէջ իօկ՝ վայրապ էր եւ վտանգաւոր . բայց արջին հակումը գէպի մարդը հին աւանդութենէ մը ծայրում կ'առնէր, վասնզի, վաղնջական դարերուն, մարդը սերեց եւ շրջափոխութիւն անցընելով, Ֆիլիքական եւ Հոգեկան ձեւակերպում ստացաւ արջի ու կապկազեղի միախառնումէն, որուն զօրավիզ պիտի ըլլար զերբնական ուժի մը մղիչ գործօնը : Եւ ահա, երեւոյթ դարձած՝ կը պատահէր, որ արջը արջը, անտառին մէջ առանձին կնոջ մը կամ գիտատի աղկալ մը պատիւը կը բռնաբարէր, դայն առեւանգելով աւ. պահելով որջին մէջ, նոյն բնազդական մղումը անսնուած էր էգին մօտ, երբ անիկա հանդիպէր միայնակ մարդու մը, ու ստիժը ունենար տիրապետելու անոր վրայ եւ ստիպելու, որ մանէր իրեն . . .

Կապկազ դիմերէն բոլոր ահապահները չէին հետաքրքրեր Աղամբը : Անտառին մէջ թափառած պահուն, Աղամբ գլխուն կերտաւ հնդկընկոյզի մը հարուածը . եւ որովհետեւ ծառ մագլցիլ պիտէր, ելաւ բարձրացաւ ծառը, որուն վըրայէն ստացած էր հարուածը . իրեն հետ խաղ ընողը առանձին կապկազ գի մըն էր, որոչ գիծերով՝ մարդանման : Կապիկը կախուեցաւ բաղնիկէ մը . Աղամբ քաշեց վեք բաղնիկը : Ու կապիկը ուզեց սասնել քովի ծառին վրայ, սակայն, աչքը չկտրեց, քանզի վազրազդի մը վարէն իրեն նայեցաւ դըռմուց-մոնչիւնով : Ու կապիկը քաշուեցաւ վեք . իր խաղը Աղամբին հետ պղտիկ ընդհարումով սկսաւ : Աղամբ ուզեց պատժել դայն, հնդկընկոյզի հարուածով մը, սակայն, կապիկը էգ էր ու գլուխը կախեց, ամչկոտ կնոջ մը ձեւեր կեղծելով : Եւ Աղամբ իտրհեցաւ թափառումներու քնայթի մասին եւ մէջը արթնցաւ արուական կիրքը, զոր գոհացնել ուզեց, կապիկին հետ խառնուել փորձելով : ու ծառին վրայ Աղամբ եւ կապիկի կրթապայտարը երկար չտեսեց . կապիկը

կոյս չէր եւ զիմազրիլու տեղ, հետաքրքրութեան եւ սպասողի գիրքի մէջ մնաց. ու երբ Աղամ մտաւ իրեն, գիտցաւ, որ արու էր մարդը, քանզի էգի իր հաճոյքը ստացաւ: Աղամ ըրաւ այնպէս, ինչպէս արու գազանները կ'ընէին. երկրորդ անգամ ճանչցաւ էգ կապիկը, ուպա՛ իջաւ. ծառէն ու հեռացաւ, քանզի անօթի զգաց ինքզինք. ու հետը տարաւ կապիկին իր գլխուն նետած հնդկընկոյցը, զոր ճաշակեց, առաջին անգամ ըլլալով:

Ու Աղամ կը քալէր ու կը վազվզէր անտառին մէջ եւ գոհ էր, իրայ կը հասկնար, որ կապիկը իր ընկերը չէր կրնար ըլլալ. ու կը խորհէր օճի մասին, մտաբերելով անոր ըսածները երազին մէջ: Ու կ'երեւակայէր կնոջ կերպարանքը, որ իր կերպարանքին նման պիտի ըլլար եւ ամբան անտառէն պէս համբարու պիտի չըլլար, այլ պիտի խօսէր հետը...

Մտակուն թառած գեղատեսիլ, երբնորանք փետուրներով զարդարուն՝ մանրիկ թռչուններ անուշ կը դայլայլէին. ու դայլայլին հետ վար կը թափէին դեղին տերեւներ, սրունք, երբ ծառերուն վրայ էին՝ հազար գոյն ու ճաճանչ ունէին միասին. բայց մէկիկ-մէկիկ ինկած պահուն՝ արդէն մտած ու աննշան տերեւ էին: Ու մէկ-մէկ կ'երեւէին զոյգով ու անզոյգ, իրեն պէտ դազաններ, որոնց ամէն մէկուն կու տար յարմար դատած կոշուճը, նայած անոնց վերաբերումին, մորթին, թաթերուն ձեւին, գոյնին ու շարժումներուն: Անտառին մէջ վազբազդիներն էին, որ շէին հանդուրժեք իր ներկայութեան: Պտտակերները վախ կը զգային իրմէ ու մանր գազաններն ու սողունները արդէն, խոյս տալով կը փախչէին ու կը մտնէին թուփերու տակ:

Եւ քանի որ աշնանավերջն էր, Աղամ շատ զիչ կը հանդիպէր յօշոտիչ տեսարաններու: Կենդանական աշխարհը, այդ օրերուն, կը պարզէր խոշաղ կենսակցութեան մը պատկերը. ու այդ պատկերին մէջ շէին պակսեք սիրային Փոլլերիկ տեսարաններ, որոնց ականատես էր Աղամ, քանականութեան մը դած հետաքրքրութեամբ: Ու սն կը տեսնէր անտառին ծառերու կանանց-մութ Փոնին վրայ արուսազդիներու կորագիծ ցատկումներ՝ համապատասխան ցեղի ու ազգի պատկանող էգերու կոնակին: Աղամ հմայուած էր ստեղծագործութեան ինքնատիպ ու չափուած-ձեւուած օրէնքներուն յարմարագոյն կիրարկումներուն վրայ: Ամէն ազգի ու տեսակի գազաններն ու անտառները ունէին իրենց ցեղային իւրայատուկ կերպերը մօտեցումի, ծանօթացման ու յարաբերուելու մէջ: Եւ իր հմայուածութեան առջնութեք, Աղամ կը խլէր թըռչնային դայլայլներէն որոշ նոթեր, սուլել փորձելով անոնց վրայ: Ահա, զովէն վարդով անցաւ բրգոս մաքին, ետեւէն՝ զայն հետապնդող խոյր: Աղամ ընտելօրէն վազեց մաքին վրայ ու ճանկեց մէջքը, սակայն, խոյր հասցուց կոտորել ու ցաւ պատճառել իրեն: Աղամ դարձաւ ու բռնեց խոյին կոտորչեքէն ու պայքարեցաւ անոր հետ, ճիշդ այնպէս, ինչպէս երկու ախոյեան ամբողջ էգի մը շուրջ: Աղամ ծոնկի բերաւ խոյը եւ սակայն չկրցաւ հասնիլ նպատակին. մաքին մայեց ու խոյս տուաւ: Աղամ գիտցաւ, որ մաքին չուէր յարմարութիւն: Նոյն ընդունելութիւնը գտաւ այժին ըով եւ տակաւին շատ մը ուրիշ կճղակաւորներու մօտ: Կովացուլը դեռ հեռուէն սպասնաց Աղամին, որ հմայուած էր անոր զեղեցիկ ու խրոխտ կեցուածքին. ու կանգնած՝ կը դիտէր անոր ցատքը կովին վրայ...

Բացատի մը վրայ, միացեղին արունները բոլորակի մէջ առած էին բորենին, որ հայածուելով դայլայլուներէն, ինկած էր ամբակաւորներու միջուկայրը: Բարենին ժահրոտ երախը բացած՝ ժանիքները կը կճուտացնէր ու կը նետուէր ասզին-անզին. ու յովատակները կը ծառանային իրենց ետեւի ոտքերուն վրայ, ու սպանազին էր անոնց հարուածը, որուն ներքեւէն միշտ

խոյս կու տար պաշարուածը: Երկուտեք կը ստսկույին իրարմէ. եւ հակառակ ձիւղզիներու շատութեան, բորենին կը զսպէր անոնց խոյանքը: Ազամ հան- պիտատես էր երկուքներու շքեղ ու ահաւոր ծառայութիւն: Ու ահա, վերջին հարուած մը իջաւ բորենիի գլխուն եւ ան զգայազիրկ ու վիրաւոր՝ ինկաւ ձիւերու սմբակներուն տակ եւ սատակը փռուեցաւ անշարժ: Ու այն ատեն խորշուլով բորենիին դարշահոտութենէն, ձիւերը կատաղի խրխինջներ արձա- կելով սլացան դէպի մատակածիրը, որոնց մշուշոտ հաւաքատեղին կը թուէր շատ հեռուն:

Իրրեւ հակադրութիւն ձիւերու երամակին, Ազամ նշմարեց դէպի իրեն խոյանքը վազրածիրու: Կեցաւ ծառի մը տակ, երբ հետզհետէ որոշ կը դառ- նար անոնց մօտիկնայր: Անոնք կը հայածէին մատակ էջ մը, որ գիծահայած դէպի Ազամը կը վազէր: Ու Ազամ մեղքեցաւ հայածուողին ու ընդոտտ, դուրս դալով ծառին շուքէն, թեւահարեց ձեռքերը օդին մէջ: Հինգ վազրածիրը մէկէն ծոնցան մէկդի ու սլացան հեռու, երբ մատակ էջը անցաւ Ազամին կունակը ու կանգ առաւ, ոռնգերը լայն բացուած, դողահար: Ազամ դարձաւ ետին ու գնաց դէպի մատակ էջը. ու էջը շարժեցաւ տեղէն: Ազամ բունց ա- նոր երկար ականջէն ու գիացաւ, որ էջը գրասու մըն էր. եւ Ազամ զգաց յոգ- նութիւն. ու նետուեցաւ էջուն կունակը եւ ոտքերով հարուածեց անոր կողմ- բը: Էջը զարմացած էր վրան հեծնող արարածին արարքին վրայ: Բնազգօրէն, ան կը սպասէր գործողութեան մը, որ տեղի չէր ունենար: Ազամ սեղմեց կրկին էջուն կողմը. ու էջը յամառեցաւ իր սպասման մէջ: Քանզի ոչինչ կը կատարուէր իրեն հետ, արհամարհանք ունեցաւ կունակը ելլողին հանդէպ- այն ատեն, իր արհամարհանքը ցոյց տուաւ՝ յետոյքը վեր նետելով ու օդը սքայացահար ընկելով: Ազամ, որ չէր սպասեր նման վարձունքի մը, էջուն կող- մէ, ինկաւ վար ու գլուխը զարկաւ ծառի կոճղի մը, մինչ էջը կը զոգտար փախելով:

Ազամ մարած էր. ծանր ջուռն իջաւ վրան, որ անշարժացուց զինք ծա- րին տակ:

Եւ ահա, կրկին տեսաւ երազին օձը...

Ու օձը կեցած էր ոլորուն պոչին վրայ ու կը շարժէր երկճղի լեզուն. ու Ազամ կը հասկնար, այժմ, անոր լեզուն, որ կը բարբառէր.

— Կիսն է ջուռն էգը եւ կը կոչուի Եւա: Դուն ծանօթ ես անոր, քանզի, ան քեզի հետ էր, երբ փախուտ տուիր քաղաքէդ, վասնզի դուն առեւանգե- ցիր զինք եւ մարդիկ էլան, որ սպաննեն երկուքդ: Եւան թագաւորի աղջիկ էր, ոլորեց քեզ. ու դուն աղքատ տան ճրագն էիր. մայրդ շատ լացաւ ետե- ւէդ. բայց, ի՞նչ օգուտ. դուն փախառական եղար ու թափառական: Ուղեցիքդ վրուխ զնեկէք տեղ մը գտնել, որպէսզի շմտնուիք. մահապահով դատա- պարտուած էիք...

Ազամ ջուռին մէջ յիշեց, որ օձին ըսածները իրականութիւն էին ու զար- մացաւ, որ Եւան հեար չէր եւ մտպած էր զինք բոլորովին: Ու նայեցաւ օձին աչքերուն մէջ եւ զլիսպտոյտ ունեցաւ.

— Ուրի՞՞ դիտես, տիրուհի. այդ բոլորը: Ձէ՞ որ զպատնիք են...

Եւ օձը տատանելով, իրրեւ թէ պար դար, ըսաւ.

— Եւան պտտմեց. ու Եւան կ'ըսէր, թէ դուք, երկուքդ շատ էիք թա- փառած ու բեզարած: Օտար համբաները մաշեցուցած էին ձեր մուկանները. մաշած ու քրքրուած էին ձեր շորերը ու զղզուած էին ձեր մազերը. եւ դուք անթիւ-ծարաւ էիք օրերով. ու ոչ ոք ձեռք կը մեկնէր, օգնելու համար ձե- րի. եւ դուք մոռցաք նոյնիսկ ձեր ինքնութիւնը. բայց դուն գիտէիր, որ Ա-

զամ կը կոչուէիր եւ կինդ, որուն հետ առաջաստ չմտար տակաւին, կը կոչուէր Եւա: Սակայն, դուք կը ծածկէիք ձեր անունը, վասնզի, մասնիչ ականջներ կրնային դանուիչ ձեր շուրջը... Եւ այսպէս, թափառելով, օտարական, անօթի ու ծարաւ՝ հասաք Եդեմի պարտէզներուն տակ...

Եւ Ադամ քունին մէջ խօսեցաւ ու ըսաւ.

— Ընչդ են քու ըսածներդ, տիրուհի. այո՞, այդպէս էր. հասանք ծառերու տակ, որոնք ծանրաբեռնուած էին կարմիր խնձորով: Եւան ըսաւ, «Ադամ, սիրտս կարծիր խնձոր քաշեց. քաղէ հատ մը. անօթութենէ կը մարիմ»: Ու ես ծառ բարձրացայ ու կերայ հատ մը եւ հատ մըն ալ դրի ծոցս՝ Եւայի համար...

Ու օձը շարունակեց Ադամին խօսքը, քանզի Ադամ չէր կրնար շատ խօսիլ քունին մէջ.

— ... Երբ օտքդ դրիր հողին, Եհովայի շունքը հաջեցին ու քերովբէները եկան բռնեցին քեզ ու տարին իրենց Տիրոջ առջեւ հանեցին: Եհովա խիստ դէմք առաւ.

— «Կերածիդ համար, օտարական, ներուած ես. իսկ ծոցդ դրած խնձորին համար՝ դատապարտուած ես մէկ տարի տաժանակիր աշխատանքի, իմ հողերուս վրայ, քանզի կը տեսնեմ, որ օտարական ես մեր կողմերուն: Ու աքսորականի երևույթ ունիս»:

Այն ժամ Եհովա հրամայեց, որ տանին դատապարտեալը:

Եւ օձը շարունակեց.

— Դուն, որ Ադամն ես, ինկար Եհովայի ոտքը ու համարեցիր, քանզի մատերեցիր, որ Եւան մնացած էր առանձին եւ եթէ չպաղատէիր Եդեմի Տիրոջ, ու շատանայր իր ներդաստութիւնը, կորսնցուցած պիտի ըլլայիր դինք: Եւ դուն ըսիր.

— «Տէ՛ր. ներող գանուէ. կինս սոված էր. խնձոր մը քաշեց սիրտը. եւ ես ծոցիս խնձորը քաղեցի անոր համար, որ ինձի կը սպասէր ճամբուն տակը...»

Եհովա չբռնեց խտուութիւնը դէմքէն. սակայն ձայնը մեղմ շեշտ առաւ, երբ հարցուց.

— «Կի՛նը, որուն մասին կը խօսիս, ծի՞ն է, թէ՞ անձինք»:

— «Ո՛չ ծի՛ն է եւ ոչ անձին, քանզի դեռ առաջաստ չենք մտած. ան արքայազուտոր է. մեղքեցէք իրեն. ի՞մ ոճիրս ոչինչ է, Տէ՛ր»:

Ու հրամայեց Եհովա քերովբէներէն երկուքին, ու երթան եւ ճամբու տակէն գտնեն կինը ու հանեն իր առջեւ: Ու դացին քերովբէները. մինչ ուրիշ մէկը կ'երթար Տիրոջ աշխատողով հրամանը կատարելու: Ու Ադամ կը մտար ծնկածալ՝ հողին, գլխատման արարողութեան սպասողի մը դրութեան մէջ: Անբարեկամ կը նայէր Ադամ Եհովայի դահին, որ դրուած էր պատուանդամը վրայ եւ կը տեսնէր երկու դայաշուններ, որոնց տեսքը դողահար կ'ընէր իր մարմինը: Իսկ էր, որ Եհովան հրամայէր եւ արդէն ինք բզկտուած էր վայրկեանական: Մինչեւ քերովբէներու դարձը սակայն, ամէն ինչ անցաւ խաղաղ եւ կարծէք Ադամ մտցաւ իր դատապարտութեան վճիռին ահաբեկութիւնը: Երբ երկու դայաշունները բարձրացան թաթերու վրայ եւ պրկեցին իրենց վիզին շղթան, Ադամ լսեց Եւայի լացը իր ետին. ու տեսաւ Եհովային այլեւրեւ, որոնք սքանչացման եւ տենչանքի փայլ մը ստացան ու ձայնը դարձաւ ղամբակաթաւիչ քաղցրութիւն.

— «Կը տեսնե՛մ, մարդ, որ դուն չես ստած քու յայտարարութեան

մէջ. կ'արժէր, որ դուն կարժիր խնձոր մը տանէիր իշխանուհի այս գեղեցիկ կնոջդ: Ե՛լ ստբի եւ շտկէ կոնտկդ, քանդի բեկանեցի վճիռը...

Ու Աղամ բացաւ աչքերը, որոնց վրայ ինկած էր յետմիջօրէի արեւէն ծած շող մը: Գլխավերեւը, ծառի բունին պլլուած ու շլուխը վայրահակ՝ ծանօթ օձը կը Փշշար եւ Աղամ կը զգար անոր գունը իր դէմքին: Ու Աղամ մնաց անշարժ, քանզի արիւնը սառած էր մէջը զգացած վահէն: Իսկ օձը կը սրահէր երազին մէջ խօսուած ձայնին շեշտը, երբ կը շարունակէր բարբառիլ, ըսելով.

— Ու դո՛ւն, Աղամ. եյտր ստբի. շտկեցիր կոնտկդ. Եւան հեռու պահուցաւ զեզմէ. եւ դուք ոչ մէկ խօսք կրցաք փոխանակել: Ե՛նձիման ըսաւ, որ ոտանին Եւան զղեակի, լողանք տան անոր եւ հագուեցնեն իշխանավայել զգևտաներ: Ապա եկաւ երրորդ քերորէն, ձեռքին խնձոր մը, որ սկզբոյն էր. ու Ե՛նձիման առաւ խնձորը ու տուաւ քեզի, թէ՛ կեր, նօթի ես. ու դուն ուրախացար, որ Ե՛նձիման բարի էր ու զթառէր. սակայն ուրախութիւնդ երկար չտեւեց, քանզի խնձորը կարարդուած էր եւ քու մէջէն սրբեց-տարաւ ամէն յիշողութիւն. ու դուն վերածուեցար անբան անասունի. եւ քու մէջ անասնական կիրք, այնպէս, ինչպէս զազոնները ունին — ուսել եւ սերնդագործելու կիրքով բռնուիլ — եւ դուն եղար կատարեալ անասուն. եւ գացիր մտար արջին ու մտար կապիկին եւ դու կ'ուզէիր բռնաբարել այծն ու մաքին, որոնք կը պատկանին ընտանի կենդանիներու ցեղին, բայց հոս անոնք կը մնան կիսավայրի վիճակի մէջ...

Աղամ կը լսէր, բայց շատ բան չէր հասկնար օձի լեզուէն- սակայն, կը զգար, որ աղօտած յիշողութիւնը կը պայծառանայ հետզհետէ: Որովհետեւ կը լսէր, օձը շարունակեց.

— Սակայն, քեզ այս վիճակին մէջ ձգելէ առաջ, հիպոնոսացնելով՝ քեզ դարձուց անշունչ մարմին եւ քու մարմինդ դրաւ Եղեմա դետի ափին, պատեց քեզ կաւով, որպէսզի տեսնողները քեզ կաւէ մարդ կարծէին. ետքէն շունչդ ետ տուաւ ու քեզ հրեց ջուրին մէջ. կաւը թափեցաւ վրայէդ ու դուն մնացիր մերկ, մօրմէզ ծնածի պէս, ինչպէս որ ես այժմ. անբան անասուն մր...

Աղամ նայեցաւ ինքզինքին եւ նոր հասկցաւ, որ մերկ էր ու չէր զգացած իր մերկութիւնը: Օձը քսուելով իրեն՝ իջաւ կանանչին ու դարձաւ նայեցաւ Աղամին. անոր աչքերը կանաչ մարգարիտի փայլ ունէին եւ Աղամ անոր դէմքին վրայ կարծեց յիշել իրեն ծանօթ կնոջ մը դիմերը: Ու հարց տուաւ.

— Ո՞վ ես դուն. այլափոխուած ոգի՞, թէ իրական օձ մը... անցեալ անգամ կ'ըսէիր, թէ Ե՛նձիման իմ կողէս հանուած սկզբէն շինեց Եւան. այժմ, կ'ըսես, որ Եւան իմ կինն էր. բայց... կ'ըսէիր, թէ Ե՛նձիման առաւ իրեն հարձը ըրաւ Եւան. իսկ ո՞ւր է Եւա ըսուածը...

Ու օձը Փշշաց ու պոշը զարկաւ դեպին, որ սաքը դետին գարնելու պէս էր.

— Անմիտ մարդ. չե՞ս ըմբռներ, որ խօսքերն ալ փոփոխական են, մարդոց նկարագրին պէս: Երբ իշխանուհին էի, քու Եւայ քովս եզաւ աղախին. իսկ, երբ Ե՛նձիման զիս այլափոխեց օձի, ուրեմն, Եւայդ եղաւ իշխանին հարձը. ու ես մինչեւ շապիկն չփոխեմ, կարարդանքէ չեմ ազատիր... Եւ ահա հանդոցը. երբ դուն տիրանաւ Եւային, իմ վրայէս կ'իյնայ կարարդանքի շապիկը:

Այն ատեն, Աղամ ծուռնկի եկաւ տիրուհիին առջեւ, քանդի գիտցաւ, որ ան թուռնաւոր իժ մը շէր, այլ փրկիչ մը.

— Քու հրամանիդ տակն եմ, տիրուհի... .

— Հետեւէ ինծի, — ըսաւ Եղեմի իշխանուհին, որ այլակերպուած էր:

Գալար-գալար ցատկոցներով, երբեմն՝ կանանչը պատռող եւ աջ ու աւեակ զինգակելով՝ կը սուրար, ահա օձ-իշխանուհին. ու ամէն ինչ կը քարանար իր անցքին. անոր կը հետեւէր Աղամ, չորքոտանիի վարդով եւ արիւն-քրտինք մտած: Աղամ շղթայ ժամանակը, որ անցաւ՝ մինչեւ հասան Եհովայի զոհակիսն սյարխսպին տակ: Տըշաց օձը. ու կանդ առաւ Աղամ:

— Ե՛լ, Աղամ, այն խնձորի փառին վրայ եւ սպասէ ինծի. ես պիտի սողամ, ահա այն ծակէն ներս. եթէ ուշանամ՝ կը սուշես օձի նման:

Ըսաւ օձը ու անյայտացաւ ծակէն ներս: Աղամ գնաց ելաւ ծառը. եւ զգաց, որ բերանը շոր էր եւ ստամոքսը՝ պարսպ: Փրցուց խնձոր մը ու խաճաւ. թթուահամ էր. ծամեց եւ ծամելով զգաց, որ դուրսը դարձաւ. ու խընձորը ինկաւ ծառէն վար, քանդի Աղամ այլափոխուած էր: Գլխաղբերէր, ճիւղին նոր թառ եկած թռչունը չկրցաւ թեւերը շարժել եւ թռչիլ, քանդի կը տեսնէր ծառին պլուտած եւ իրեն նայող օձը: Ու օձը Աղամն էր, որ սողաց զէպի շմամ թռչունը եւ յանկարծ բռնեց բերնով պայն եւ կուլ տուաւ: Այնուհետեւ, իրբեւ օձ ու սողուն՝ սուշեց, հմայելու պէս էր օձերը: Եւ ահա ծակէն երեւցաւ էգ օձի մը դուրսը, ապա ամբողջ մարմինը, դորշ խարազանի պէս երկարելով զէպի մօտակայ թիռուր: Այն ատեն, ծառէն վար սողալով, արու օձը Փշլալով զնաց էգին ետեւէն: Եւ երբ հասաւ թիւնիին ու բռնեց էգին մէջքը՝ արդէն պլուտած էին իրարու, մէջքէն վար տատանելով: Ու մէջքէն վեր՝ անոնք կը պարէին իրենց կլորքին տատան պարը: Քիչ ետք, երբ ինկան անոնք հողին, թոյլ պարանի պէս, տեսան օձ-իշխանուհին, որ իրենց կը մօտենար: Պրկուեցան անոնք, որ փախուտի դիմեն. օձ-իշխանուհին ըսաւ.

— Դուք Աղամ եւ Եւան էք. ձեզի տուի օձի կերպարանք, քանդի պարխսպին ծակէն Եւան պէտք էր դուրս սողոսկէր օձի նման եւ մարդ-Աղամը կրնար հղմել օձ-Եւային դուրսը: Եւ ահա դուք մտաք ձեր առազաստը՝ երբ ձեր մէջ օձի սաղմ կար. ձեր առաջին ծինը պիտի ունենայ օձային խառնըւածք, մարդու որդի ըլլալով հանդերձ... .

Եւ այս բնկով, օձ-իշխանուհին անյայտացաւ կանանչին ծոցը: Ու նոյն պահուն Աղամ եւ Եւա մարդու կերպարանք առին ու մարդացան: Բոլորովին մերկ էին. ու մտան թուփի մը տակ, քանդի լսեցին Եհովայի ձայնը, որ բարկացայտ էր.

— Եւա. ո՞ւր ես... .

Եւ Եւան, վախով խելով ու կանաչ տերեւով ամօթք ծածկած՝ դուրս ելաւ թուփին ետեւէն. ու Եւան դուրսը կախած էր եւ ամօթ ունէր, քանդի Եհովան իրեն համար օտար մէկն էր այժմ, երբ դտած էր Աղամը:

Ու Եհովան տեսաւ Եւայի մերկութիւնը ու կանաչ տերեւ մը ունէր ամօթին վրայ եւ դուրսը կախ էր, քանդի յիշողութիւնը վերադառնելով՝ ան ահա մարդացած էր: Ու Աղամ ձայն տուաւ եւ ըսաւ.

— Հոս եմ, Տէ՛ր:

— Ո՞վ ձեզ միացուց իրարու, — բարկացաւ Եհովա:

— Օձ-իշխանուհին, Տէ՛ր:

— Անիծուի՛ օձ-իշխանուհին. եւ անիծուիք դո՛ւք եւս, քանդի իմ հրա-

մանկա անսացիք: Ուստի՝ ձեզ կ'արտաքսեմ Եդեմէն. շուտ, կորսուեցէք աչ-
քէս:

Եւ Ենոփան այսպէս զուրս վճռուեց Եդեմէն Աղամն ու Եւան: Ու այդ
օրը Աշնան վերջին օրն էր եւ Ձմրան սկիզբը: Եւ Աղամն ու Եւան մերկ էին
եւ ոչինչ ունէին, այլ միայն իրենց մերկ մարմինները: Ունէին նաեւ քարե-
քախտութիւնը, որ ձմեռը ցուրտ չէր ընէր Եդեմին շուրջ:


Դուրս դալով Եդեմէն, Եւան մարեցաւ ու Աղամ ահի մը շուրով լուաց
անոր երեսը. ու Եւա զգաստացաւ ու գիտցաւ, որ Աղամ գինք կրած էր Եդե-
մի ելքէն մինչեւ շուրին ահը: Այն ատեն արեւը մարը մտաւ. ու ահին շուրջ
սկսաւ մթննալ: Բայց ահին շուրջ պտղատու ծառեր կային՝ միրգերով բեռ-
նաւոր: Ուրախացան եւ Աղամ նայեցաւ ահէն վերեւ ու խորշ մը տեսաւ: Ե-
լաւ մտաւ խորշը, որ քարայր զուրս եկաւ: Աղամ կոտորեց ծառի ճիւղեր ու
փակոց ըրաւ քարայրին: Ու ինք եւ Եւա մտան քարայրը, որ մութ էր եւ հո-
ղով ծածկուած էր. առջ էր ներսը ու լոր: Ու կերան քաղած պտուղը եւ
պառկեցան խոտէ խշտեակին վրայ. ու Աղամ սիրեց Եւան ու մտաւ անոր, որ
յղացաւ...

Մ. ՓԱՆՈՍԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)



Լ Ո Ւ Ս Ա Ր Ձ Ա Կ



Խորախորհուրդ իմ երկինք,
 աստղածաղան ու յարդագող մանապարհ
 դիւթեցիր զիս
 պերճանճովդ բազմերանգ,
 որուն դարձայ ես գերի
 ե՛ւ ակամայ, ե՛ւ ազատ:
 Նագանճներուդ գոհարերու՞ծ ես ուզիկ,
 որ չի մանչնար ոչ մէկ բոււր,
 ոչ մէկ պատնէշ երկրային,
 կու գայ ճուլուիլ ովկիանիդ
 արիւնովը իք կարմիր:

Դուն երկնաւայց
 ու ամենատուրք իմ լինելութիւն,
 այճերուս մէջ; մարմնոյս դէմ
 ու ունգերուս՝ սփռուած տախտակների
 տարածքին վրայ այդ խոսքան՝
 կը ցանես դուն
 օրէ օր եւ ժամէ ժամ, ամէ՛ն ժամ
 ոսկի սեբեթք դիւթակամ...

Օ՛, բանաստեղծութիւն
 դուն սուրբ լուսարձակ...

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ



Իմացական Հարիւր



ՌԱՊՈՐԹ ՄԵՔՆԱՄԱՐԱ

Ի՞ՆՉ Է ՏԱՂԱՆԳԸ

Ա Ռ Ա Ն Յ

ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ

Մ Ի Զ Ո Ց Ի



Ռայրրթ Մեքնամարա, Համաշխարհային Դրամատան այժմու տնօրէնը, կը պատկանի մտաւորականներու այն խմբին, որ ճարտար ֆենետիկ կողմէ պաշտօնի կըստնցաւ եւ մաս կազմեց տարաբախտ ճարտարահին *«Կրէյթ-Քրեմլ»* ինք: Մեքնամարա, օժտուած փայլուն իմացականութեամբ մը, տարիներ շարունակ վարեց Միացեալ Նահանգներու պաշտպանութեան քարտուղարութիւնը: *«Մարդկային Համակարգիչ»* նկատուած պետական այս դէմքը, հեղինակ բազմաթիւ ուսումնասիրութիւններու, լայն հարկոցներու նպաստը կը բերէ ամերիկեան ու քնդհանրապէս համաշխարհային մտածողութեան:

Հետագայ էջերը, որոնք ամփոփումն են սեմինարի մը ընթացքին ներկայացուած ուսումնասիրութեան մը, առնուած են ժամ-ժամ Սերվան Երայտրթի *«Ամերիկեան մարտահրաւէր»* հոշակաւոր գիրքին:

Արդի աշխարհին մէջ, ազգային տարանանց ըմբռնել այս նշմարտութիւնը, որովհետեւ մեր կաղապարուած տեսակէտներով, ունինք ապահովութիւնը միայն զինուորական տեսաչնկերով չա-

փելու սովորութիւնը: Անշուշտ, ապահովութիւնը զինուորական երեսներ ունի: Բայց վտանգաւոր սխալ մը դործած պիտի ըլլայինք, երեւակայելով, որ զինուորական ուժը եւ ապահովութիւնը հոմանիշ պիտի մնան իրարու: Մարդկային պատմութեան մեծագոյն խնթութիւններէն մէկը եղաւ պատերազմներ մղելու համար աւելի ծախսել, քան գանոնք արդիւելու: Այս հաշիւը երբեք շահարեք չեղաւ:

Այս օրերս, շատ կը լսենք այն տաղնապին մասին, որ կը խորանայ աշխարհի մէջ, տնտեսական այն խրամատին պատճառով, որ հետզհետէ կ'աւելնայ զարգացած երկիրներուն եւ Ասիոյ, Արիւիկէի ու Լատին Ամերիկայի երկիրներուն միջեւ:

Աշխարհի աւելի քան քառասուն ազգերուն, թերեւ երկիրներուն մէջ, անձ գլուխ միջին եկամուտը տարին 120 տուրքը շահնցիք այսօր: Միաց. Նահանգներու մէջ, անձ գլուխ միջին եկամուտը 3000 տուրքէն աւելի է: Ասիոյն՝ կայ 2000 առ հարիւրի տարբերութիւն մը: Այս թիւը գաղթած է գուտ տնտեսական նշանակութիւն մը ունենայէ: Այսքան առտապելական թիւ մը հրախային թիւ մըն է, որ վտանգաւոր կերպով կը խրի երկրի մակերեսին մէջ եւ որ չի կրնար պայթուցիկ հետեւանքներ չունենալ: Ընկերարանական պայթումները — որոնք շատ աւելի վտանգաւոր, շատ աւելի մահացու են, քան հրախային բնական պայթումները — կը տարբերին այս վերջիններէն. կրնան նախատեսուիլ: Առ քանի որ կրնան նախատեսուիլ, կարելի է զանոնք արգիլել:

Կեղծաւոր չըլլանք: Եթէ աշխարհի հարուստ ազգերը, երկրապունտի երկու կէտերուն միջեւ բացուող փոսը լեցնելու համար, ներքոր եւ ներքաշնակ ճիգ չթափեն, մեզմէ ո՛ր ոք այսուհետեւ պիտի կրնայ իր երկրին ապահովութիւնը պաշտպանել աղէտներէ, որոնք անխուսափելի են, բռնութեան ախիւներէ, որոնք պիտի քանդեն պաշտպանութեան մեր գիծերը: Տնտեսական քաոսը, զոր

կարելի է նախատեսել նման տարակերպութիւններու առջեւ, Միացեալ Նահանգներու ապահովութեան համար աւելի՛ սպառնական են, քան չինական կորիզային զէնքերը: Հարցը այսքան պարզ է ու նաեւ այսքան ծանրակշիւ:

Բայց, առաջին հերթին, մեզ հետաքրքրողը ուրիշ խրամատ մըն է, ուրիշ «կէփ» մը, որ այս անգամ խորանալու վրայ է նոյնինքն զարգացած ազգերուն, աւելի ճիշդը՝ Արեւմտեան Մերոպայի ճարտարարուեստական ազգերուն եւ Մ. Նահանգներու միջեւ:

Ժամանակէ մը ի վեր, եւրոպացիք այս խրամատը կը կոչին «քեֆմալոնիքը կլիփ»: Անոնց վախը եւ քննադատութիւնը այն է, թէ մենք ճարտարարուեստական զարգացման մարզին մէջ այնքան առաջ երթալու վրայ ենք բազաւտամբ իրենց, որ կը ստեղծենք գաղթատիրութեան նոր ձեւ մը, որ արհեստագիտական գաղթատիրութիւնն է:

Ասիկա մեր ժամանակներու հիմնական հարցն է: Բայց «քեֆմալոնիքը կլիփ» բառը բոլորովին ճիշդ չէ: Այս խրամատը արհեստագիտական չէ այնքան, որքան դործաւարական (gestion): Առ եթէ այնքան մեծ թիւով եւրոպացի դիտնականներ կը դադրեն Միացեալ Նահանգներ, պատճառը գլխաւորաբար այն չէ, որ մենք աւելի առաջացած արհեստագիտութիւն ունինք, այլ մանաւանդ ա՛յն, որ մենք խմբական աշխատանքի — դործաւարութեան — աւելի արդիական եւ աւելի արդիւնաւոր մեթոտներ կը կիրարկենք:

Աստուած ժողովրդավար է: Ան իմացական կարողութիւնը գրեթէ հաւասարապէս բաժնած է համայն աշխարհի մէջ: Սակայն կ'ակնկալէ, որ մենք արդիւնաւորապէս կազմակերպենք այս աղբիւրը, որ երկինք տուած է մեզի: Այս է դործաւարութեան խնդիրը: Գործաւարութիւնը, վերջին հաշուով, բոլոր արուեստներու ամէնէն ստեղծագործն է: Ան արուեստներու արուեստն է. որովհետեւ կը հանդիսանայ տաղանդը կազմակերպելու արուեստը:

Ի՞նչ է մեծերթիւնէն էական դերը: Ա-

նիկա փոփոխութիւնը իմաստուն կերպով դիմակայելն է: Մէնճընթը այն միջոցն է, որուն շնորհիւ ընկերային, անասական, արհեստագիտական եւ քաղաքական փոփոխութիւնները, մարդկային բոլոր փոփոխութիւնները կրնան բանաւորապէս կազմակերպուիլ եւ տարածուիլ ընկերային մարմնի մտքովութեան մէջ:

Արդի կարգ մը քննադատներ կը մտահոգուին մէնճընթի յառաջդիմութեամբ, վահնալով, որ ժողովրդավարական մեր ընկերութիւնները դառնան «գեր-յանձնաձուած»: Ճշմարտութիւնը բոլորովին հակառակն է: Ժողովրդավար ընկերութեան մը համար խնկական սպառնալիքը կու գայ յանձնաձուածի տկարութենէն: Ընկերութիւնը կրնայ ապրիլ ու զարգանալ այն ստան միայն, երբ յանձնաձուածը չզարգիլ յառաջդիմելէ:

Ընկերութեան մը թերի կազմակերպումը եւ թերի յանձնաձուածը ազատութեան հանդէպ յարգանք չեն: Պարզապէս այդ ընթացքով թոյլ կը տրուի, որ բանականութենէն տարբեր ուժեր ձեւակերպեն իրականութիւնը: Այդ ուժերը կըրնան բլլալ յուզումը, ատելութիւնը, բռնութիւնը, սոցիալութիւնը, անդալուութիւնը — որեւէ բան, բայց ոչ բանականութիւնը: Եթէ մարդկային գործունէութիւնը ճշգոյ ուժը բանականութեան ուժը չէ, ինչ ալ բլլայ այդ, մարդը կը մրնայ վար իր միջոցներէն:

Կենսական որոշումները, գործի սաղմավարութեան թէ քաղաքական ռազմավարութեան մարդին մէջ, պէտք է անպայման գան անկէ, որ կը գտնուի գլուխը: Ատոր համար գրուած է հոն: Բայց, իրեն համար, իր որոշումը բանաւոր կերպով տալը ուղղակի կապ ունի յատկացումի այն աշխատանքէն, որ կատարւած է եւ որուն շնորհիւ ան իր առջեւ ունի զանազան ճամբաներ, որոնց միջեւ ընտրութիւն պիտի կատարէ: Մէնճընթը, եթէ լաւ է, ձեռնարկը եւ ընկերութիւնը կը կազմակերպէ այնպիսի ձեւով մը, որ այդ ընթացակերպը կը կատարուի յարմարագոյն եղանակով: Ասիկա այն ընթացակերպն է, որուն միջոցով մար-

դիկ կը յաջողին կարելի արդիւնաւորութեամբ օգտագործել իրենց բանականութիւնը, ստեղծագործական իրենց կարողութիւնները, նախաձեռնութիւնները եւ պատասխանատուութիւնները:

Մեր ժամանակներու մարդկային արկածախնդրութիւնն է ստեղծել որոշումները պատրաստող այս զանազան ուղիներուն յատկ բանաձեւումին անհրաժեշտ եղող կազմակերպութիւնները: Ու Ասիկա խանդարոր արկածախնդրութիւն մըն է: Բոլոր իրականութիւնները կրնան ընթացք տալ բանականութեան կիրարկումէն: Հրաժարիլ չափելէ եւ դասաւորելէ այն՝ ինչ որ կրնայ չափուիլ ու դասաւորուիլ, կը նշանակէ գոհանալ բանականութեան լրիւ գործածութենէն վար եղող բանով մը:

Արդիական գործիքներու, ինչպէս՝ համակարգիչներու գէժ գործուող յարձակումները, վերջին հաշուով, նոյնիման մարդկային բանականութեան դէմ եղած յարձակումներ են: Ո՛չ թէ անոր համար, որ համակարգիչը բանականութեան ձեւ մըն է: Ընդհակառակն, ան պարզապէս արտադրութիւնն է բանականութեան ան պարզապէս գործիք մըն է բանականութեան լուազոյն գործածութեան համար: Բայց եթէ ճիշդ է, որ մարդկային կարգ մը երեւոյթներ ու մարդկային կարգ մը որոշումներ աւելի անդին կ'երթան, քան ինչ որ կրնայ չափուիլ եւ հաշուուիլ ճշգրտորէն, ատիկա որեւէ ձեւով չի կըրնար արդարացնել մեր թերացումը, երբ մենք նախ չենք վերլուծեր այն, ինչ որ վերլուծելի է: Համակարգիչ մը չի կըրնար փոխարինել դատումը, ինչպէս գրիչ մը չի կրնար փոխարինել տաղանդը: Բայց ի՞նչ է տաղանդը առանց արտասայտութեան միջոցի:

Անհուճօրէն բարդ եղող արդիական երեւոյթներու ստեղծագործ մէնճընթը այսուհետեւ բոլորովին անկարելի է առանց այն թեքիք սարքաւորման եւ մարդկային որակաւորումներու, որոնք միզի տրուեցան գիտական յառաջդիմութիւններով: Արհեստագիտական խրամա-

ուր, որ կը գոյանայ Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու միջեւ, գլխաւորաբար կու գայ մեր մատնանշումներէն: Ինչպէ՞ս կարելի է դայն նուազեցնել:

Վերջին հաշուով, դարձանը պէտք է դայ արժատէն. դաստիարակութենէն:

Եւրոպա տկար է, շատ տկար դաստիարակչական մարդի մէջ: Այս տկարութիւնը վնասելու վրայ է իր զարգացումին: Եւրոպա տկար է իր ընդհանուր դաստիարակութեան, տկար՝ թեքնիք դաստիարակութեան ու մանուտրաբար գործազարական եւ յանձանձումի դաստիարակութեան մէջ:

Անգլիոյ, Տրանսայի, Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ, 13-14 տարեկան երիտասարդներու 90%ը դպրոց կ'երթայ: Բայց 15 տարեկանէն ետք, կայ ահաւոր կորուստ մը: Միայն 20%ը կը շարունակէ իր ուսումը:

Միացեալ Նահանգներու մէջ, 13-14 տարեկան տղոց 99 աւ հարիւրը դպրոց կը յաճախէ: Աւ, 15 տարեկանէն վեր, 45 աւ հարիւրը կը շարունակէ իր ուսումը: Միացեալ Նահանգներու մէջ, 4 միլիոն ուսանողներ կան գոյէճներու մէջ, ինչ որ կը ներկայացնէ դպրոցական տարիք ունեցող բնակչութեան 40%ը: Արեւմտեան Եւրոպայի մէջ, այս համեմատութիւնը 6ի եւ 15%օի միջեւ կը տարբերի: Միւս կողմէ, գործազարութեան մէկ-միւրեքի արդիական դաստիարակութիւնը, անհատական թէ հանրային ձեռնարկներու համար, գրեթէ անծանօթ է ճարտարաբուհասական Եւրոպայի մէջ:

Արհեստագիտական յառաջդիմութիւնը, որ ամբողջովին կը յենու ընդհանուր ծանօթութեանց բարձր մակարդակին վրայ, չի կրնար ստեղծուիլ այն պատճառանէն դուրս, որուն վրայ կեցած է ամէն բան: Այդ պատճառանը երիտասարդներու եւ չափահասներու դաստիարակութիւնն է: Եթէ Եւրոպա կ'ուզէ նրազեցնել արհեստագիտական այն խրամատը, որ գինք հեազհետէ կը բաժնէ ամերիկեան աշխարհէն, ամէն բանէ առաջ պէտք է բարելաւէ եւ ընդհանրացնէ իր դաստիարակութիւնը թէ՛ քանակով եւ թէ՛ որակով: Այս խնդրին մօտենալու ուրիշ կերպ չկայ:

Արդի գիտութիւնը, արհեստագիտութիւնը եւ մէքէմընթը անշուշտ դաստիարակութեան հիմնական նպատակները չեն: Դաստիարակութեան վերջնական նպատակը մարդուն կարողութեանց առաւելագոյն զարգացումն է: Կարեւորագոյնը անշուշտ այդ է: Այդ է նաեւ դաստիարակութեան խոր իմաստը: Բայց առանց արդիական արհեստագիտութեան եւ առանց անհրաժեշտ եղող կառոյցին, որեւէ ձեւի ոչ մէկ յառաջդիմութիւն — տնտեսական թէ՛ մարդկային — կրնայ իսկապէս զարգանալ արդի աշխարհին մէջ: Առանց կազմակերպումի արհեստագիտութեան մէջ այս յառաջդիմութեան, այսինքն՝ առանց դաստիարակական յառաջդիմութեան, աշխարհը, որ մեզ կը շրջապատէ, հեազհետէ աւելի ետ պիտի մնայ ու անհաւասարակչութիւն պիտի ստեղծուի:

Ն. ՍԱՐԱՑԵԱՆ

ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՒՆԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Կոստան Զարեան, տեղում մը տեսնելով աշխարհի որդի արուեստագէտներուն մէջ՝ կը յայտարարէ.

«Ամէն մի մեծ արուեստ խոստովանութիւն մըն է»(1):

Այս յայտարարութիւնը կը հնչէ մեր առջեւ նեղուած ոսկի ու կախարհական բանալիի մը պէս: Կը նայինք մեծ ուշադրութեամբ: Ետտ հին, բայց նաեւ շատ այժմէական հարցի մը առջեւ ենք անկասկած: Մարդիկ գգացած են մէջտ խոստովանութեան պահանջը: Այդ պահանջը, շատ աւելի մեծ այսօր՝ յոյսէն ցնցուած ու յոյսի կարօտ մեր դարուն մէջ, ո՛չ միայն դեղագիտական է, այլև ընկերային, քաղաքական՝ անցնելով կրօնական ու հոգեբուժական սահմաններէն անդին:

Այդ պահանջը նկատելի է նաեւ մեր մէջ՝ նորենացիէն, Նարեկացիէն մինչև Ինտրա: Մեր անմիաբանութիւնն ու այլ թերութիւնները խոստովանելու ձգտում մը կայ նոյնիսկ մեր պատմութեան մէջ: Մեծ Եղեռնէն ետք, երեւան եկան բազմաթիւ յուշագրութիւններ՝ դուրս տալու համար ցաւեր, դառնութիւններ, մեր կործանումը, թափուած արիւնը քաջատրոզ սիւններ, ներքին եւ օտար դաւաճանութիւններ, մեղքեր: Անկեղծութիւնը մեծ աւելի մը բռնեց վերջին քառորդ դարու մեր գրականութեան մէջ: Պահանջեց զայն Օշական, որ մեծ կարեւորութիւն մը կու տար յուշագրութիւններուն: Վերջերս, Մ. Պարսամեան ցաւ կը յայտնէր՝ խոստովանութեան պակաս մը տեսնելով հեղինակի մը գործին մէջ:

Կ. Զարեան շահեկան նիւթի մը առջեւ կը դնէ մեզ՝ անտարակոյս:



«Արդի արուեստագէտը խոստովանիլ չի գիտեր»: կը դրէ ան: «Անկեմ»

չէ՛ւ զէպոնիք» ամսագիր, Յունուար 1950:

սագրական է ան», «սպտահակաճութիւններին եւ դէպքերին ենթարկուած, իր կամքից պարպուած մակերեսային մի անճանարութիւն»։ «Ինչպէ՞ս կարող է ճառքիւն բան խոստովանիլ, երբ իր կեանքը իրը չէ. երբ ճառքի մարդկային իրաւունքները փոխանցել է իր վրայ բռնութեամբ տիրող ճիւղական, քաղաքական, գեղարվեստական կամ ուրիշ տարերային հոսանքներին։ Խոստովանելու համար, պէտք է մարդ ինքն իրեն պատասխանատու եւ մեղաւոր զգայ։ Աւար, արդի մարդը ոչ իսկ ի վիճակի է մեղք գործելու։ Մեղքը պահանջում է Աստուծոյ ներկայութիւնը»։

Արդարեւ։ Կը գտնուինք արուեստագէտի իտէպլ պատկերի մը առջեւ։ Մեր ուշադրութիւնը կը դրաւէ մանուսկր «պատասխանատու» բառը։ Արուեստագէտը կանչուած է պատասխանատու դեր մը կատարելու եւ քիչեր միայն կ'ըմբռնեն իրենց այդ դերը։ Շատեր կ'երեւան «պատասխանելի» իրենց շահախնդրութիւններով, շահագործումներով, սայթաքումներով, ժողովուրդը խարոզ ճարտարութիւններով։

Կը սիրենք տրուած պատկերը, սրտբաց, խղճամբոս, վսեմ, գիտակցութեան եւ կամքի տէր արուեստագէտը, որուն քով, անշուշտ մակերեսային, վատ, չոր ու ցամաք կ'երեւայ ան, որ խոստովանութիւն ընել չի գիտեր։ Կը սիրենք արուեստագէտի այն առնական տիպարը, որ ինքզինք կուտայ ամբողջութեամբ, ինչպէս կը պահանջէ արուեստը։

Կ. Զարեան մեծութեան մը առջեւ կը դնէ մեզ։



Բայց շատ համաձայն չենք, երբ ան բնականուր անկում մը կը տեսնէ աշխարհի ամէն կողմ։ Համաձայն չենք նաեւ, երբ ան խոստովանութեան պակաս մը կը գտնէ։ Կ'ապրինք շրջան մը, ուր մարդիկ շատ աւելի կը խոստովանին՝ խորհրդային սահմաններէն անդին եւ ասդին։ Խոստովանական սուտա գրականութիւն մը կը տեսնենք գերիբազալտներէն մինչեւ գոյապաշտները, Փրուստէն մինչեւ Գրաւշէնքո(Չ)։ Ու ճշմարտութեան այս սէրը, այնքան շեշտուած այսօր՝ կեղծիքներու այս քառսին մէջ, կը ներկայանայ. Գրատունէն ի վեր անկարելի, անվստահելի, անբազալտ երեսներով նաեւ։ Տոսթոյեւսկիէն, Թոլսթոյէն ի վեր ծանօթ՝ խոստովանութեան այս հարցը, շատ վիճուած Փրանսական գրականութեան մէջ, Մոնթէյնէն ի վեր, կը պահանջէ աւելի մեծ ուշադրութիւն մը։

Զարեան, դժբախտաբար, սովորութիւն չունի խորանայու։ Պարտաւոր չէ անշուշտ տարածուիլ իր նիւթէն դուրս, որ Հոլանտան է, բայց կրնար թափանցելի դարձնել խոփիչ խորքը հարցին։ Գոհացած է վերոյիշեալ քանի մը տողերով, որ, ի վերջոյ, մտքի անբաւարարութիւն մը կը մատնեն, անարդար են իրենց ընդհանրացումներով եւ յաւակնոտ։

Զարեան մնաց miroir aux alouettes մը՝ հասնելով հանդերձ որոշ ինքնութեան, գեղեցկութեան, թօթափելով հանդերձ Մարինէթիներն ու Յարանեհրը։ Ան բարձրացաւ չքեղ երիվարով մը մինչեւ մեր ցեղին հարազատ նկարագիրը, տուաւ հոյակապ էջեր մեր ողբերգութենէն, ինչպէս «Տատարգովի հարսը» կամ «Արարատեան դաշտը», որուն մէջ՝ Զարեան մեր հողին, հո-

2.— Մեր նիւթէն դուրս են այն խոստովանութիւնները, որ գրականութեան չեն պատկանիր. այսինքն՝ բռնութեամբ կամ զանազան շարժարաններով մարդաց բերնէն իջուած խօսքերը, ինչպէս կը տեսնենք զազանային աշխարհիս անցեալին ու ներկային մէջ։

զինն խորհուրդները կը պարզէ մեզի՝ խոսվիչ գեղեցկութեամբ մը: Բայց եւ այնպէս, զդալի է շարքին տրուած մեծ կարեւորութիւն մը:

Գնահատելի են իր մէջ տակաւին զազափարապաշտութիւնը, խանդավառութիւնն ու թողիքը, բայց կեանքով, մտածումով, իր մեծ արհամարհանքով՝ ամէն բանին վերէն նայելու անկշիռ յոխորտանքով, անպարարութիւններով, կը կտորէ վարկը իր այլ զազափարապաշտութեան, խանդավառութեան եւ թողիքին, անկումներ տեսնող աչքին: Գիտենք, թէ հինէն ի վեր կ'արհամարհէ Արեւելքն ու Արեւմուտքը, Հայրենիքն ու Սփիւռքը: Համապատասխան շնք գտներ զինք իր խօսքերուն հետ: Կը վարանինք խոստովանութեան տրուած այս վարկին առջեւ նաեւ, զանազան պատճառներով ու կը խորհինք, թէ խղճմտութիւն մը պէտք է ամէն բանէ առաջ, զիտակցութիւն մը նաեւ:

* *

Թնճուկ մըն է այս խնդիրը, երբ գիտենք, թէ կան խոստովանութեան բազմաթիւ ձեւեր: Գրողը կը խօսի իր մասին: Կը խոստովանի ուրիշներու մասին ունեցած իր կարծիքները: Ան ինքզինք կը զնէ երբեմն իր հերոսներէն մէկուն մէջ: Ուրիշ անձ մը կը գնէ երբեմն իր անձին մէջ: Կը խոստովանի սուտ խօսելով, հակառակը խօսելով: Ու կայ խոստովանութիւն ընելու կեղծիքը, ճշմարտանման սուտերով՝ ճշմարտութիւն մը տալու կեղծիքը:

Եւ կան խոստովանութեան թեր ու դէմ կարծիքները:

* *

Խոստովանութիւն ըսելով կը հասկնանք նախ անշուշտ պատմութիւնը մեր Հողիին՝ իր թերութիւններով, սկաբութիւններով, ախտերով եւ շար ու բարի արարքներով, առաւելութիւններով նաեւ, որովհետեւ մեր ներքին իրականութիւնը մեր գէշ կողմերուն մէջ չէ միայն: Ոչ ոք կրնայ ընել նման կատարեալ խոստովանութիւն մը:

Գրողը, որուն գործը իր Հողիին հետ է միշտ, նոյնիսկ երբ քարին մասին կը գրէ, կը դտնուի միշտ մեծ զժուարտութեան մը առջեւ: Ուզելով հանդերձ ըլլալ անկեղծ, գիտնալով հանդերձ, թէ շատ մը գեղեցկութիւններ կրնայ տալ այդ անկեղծութեամբ՝ ստիպուած է հրաժարել անկէ յաճախ: Քանի մը կաթիլներ է միայն, որ կու տայ իր Հողիին ովկիանոսէն:

Վ. Թէքէեան կ'ըսէ սեղ մը իր տաղերուն մէջ.

Ունիմ ըսիլիք ծանր ու թեթեւ
Այնչափ բան՝ որ բերնին վրայ կու գան
Երբ լսող մը կայ, հերոս մը նաեւ:

Եւ սեա, ամէն զգացում, խորհուրդ,
Չյայտնուելով կը փսի կարծես,
Ձիտոտղ հողիմ, օ՛հ, այնպէս է ցուրտ... (3)

3.— Նման ծանրաբեւեռ Հողիով է, որ Վ. Թէքէեան խորհեցաւ մարդոց սիրոյն եւ դրեց «Սէր»:

Գրողը ստիպուած է ո՛չ միայն Հրատարել այդ անկեղծութենէն՝ այլևս ծպտուիլ: «Toute apparition de l'être interné au jour est honteuse, c'est-à-dire devant être ravalée, cachée brusquement, camélionnisée», կը գրէ Փօլ Վալէրի:

Առաւել կամ նուազ գեղեցիկ մըն է ամէն արուեստագէտ, ինչպէս ամէն սովորական մարդ: Ամէն մարդ ծածկելիք թերութիւններ ունի:

Գրողը գիտէ, թէ քանի բարձրանայ՝ այնքան աւելի աչքի կը զարնէ: Մարդիկ շատ աւելի խտապահանջ կը դառնան իրեն հանդէպ: Սովորական մարդը ազատ է շատ մը բաներու մէջ, բայց ոչ ինք: Մարդիկ կը ներքին սովորական գոհակիւն, խարերային, վատին, բայց ոչ իրեն:

Մեծ գրողները, ինչպէս գիտել կու տայ ժան Կէօհէննօ, լին կընար մտնալ իրենք զիրենք: Մեծ Հրացումով կը նային իրենց անձին, կ'ուզեն սիրուիլ: Կը խուսափին հետեւարար տղեղ, խեղճ ու մեղաւոր հողիով մը ներկայանալէ: Անձնասիրութիւն մը կայ նոյնիսկ հոն, ուր գրողը կը ստորնացնէ ինքզինք:

Ու խոստովանանքը որոշ իմացականութիւն մը կը պահանջէ գրողէն, ինքնանձնաշում մը՝ հաղուազիւտ շատերուն մէջ: Ձի բուսեր անշուշտ անկեղծ ըլլալ: Պէտք է նաեւ, որ այդ անկեղծութիւնը համապատասխանէ իրականութեան: Քանի՞նք՝ կրնան քալել իրենց հողիին խաւարին մէջէն: Ծառեր ստացական անձնականութեամբ մըն է, որ կ'ապրին ու կը գրեն: Պայծառութիւն չէ շատերուն պայծառութիւնը, որ խաղաղ ու խոր ալ կ'իրեւայ, ըստ ոմանց:

Կայ տակաւին արուեստին պահանջը: Ոմանք դուրս կու տան իրենց ունեցածը: Բայց ընդունում է, որ գեղեցկութիւնը կը պահանջէ որոշ ընտրութիւն մը, Հրատարում մը՝ աւելորդ, տղեղ տարբերէն, որ ծանծաղութեան կը տանին գրողը կամ տղեղութեան:

Փառաւորուած է նաեւ սուտը՝ արուեստին մէջ. «Ստել պիտի արվեցնեմ քեզի, կ'ըսէ Օտթար Ուայլտ, արպէլագի շրթերդ դառնան աւելի գեղեցիկ»: Իլլիւզիոնիսթ մըն է միայն արուեստագէտը, կ'ըսեն ոմանք:

Գրականութեան մէջ անկեղծութիւնը առաջին պայմանն է ուրիշներուն համար: Բայց ո՛ր կը սկսի այդ անկեղծութիւնը եւ ո՛ր կը վերջանայ: Անկեղծութիւն մը կայ նոյնիսկ անպիտակցարար խոսուած սուտին մէջ: Եւ մարդ կրնայ անկեղծ ըլլալ շատ մը բաներու մէջ՝ ըլլալով խորամանկ, նենգ՝ ուրիշ շատ մը կէտերու վրայ: Ոչ ոք կատարելապէս անկեղծ է, ինչպէս ոչ ոք կատարելապէս կեղծ:

Ինչպէս կը տեսնուի, ամէնէն մեծ արուեստներուն մէջ իսկ կարելի չէ հաստատել ինքնախոստովանութիւն մը՝ իր մեծ առումով: Չկայ արմատական խոստովանութիւն:

**

Քլօտ Մօրէաք, որ նկատի առած է խոստովանութեան այս հարցը(4), կը միշտ Սէնթ Օկիւսթինը, Ռուսոն, Մոնթէնյը, Ժիտը՝ իրրեւ խոստովանողներ: Այս հեղինակները ուզած են ըսել ամէն ինչ հասարակութեան: Կը պատկանին այն մարդոց դասակարգին, որ քրիստոնէութեան պատմութեան մէջ կը յիշուին իրրեւ փեմիլիան փիլիպիւնր:

4.— «Jean Cocteau ou la verité du mensonge», Cl. Mauriac:

Անոնք խոստովանած են տարբեր պատճառներով: Սէնթ Օկրևթին թողած է, որ մարդիկ ճանչնան զինք եւ իր արժէքէն աւելի յարգ շտան իրեն՝ դատելով զինք իր շքեղ խօսքերէն ու գրութիւններէն: Խոստովանած է այնպէս, ինչպէս պիտի ներկայանար Աստուծոյ առջեւ: Ու փափաքած է, որ մարդիկ գիտնան, թէ ինչ խղճմտութիւն պէտք է՝ դուրս դալու համար ներքին զիւսէն: Հաւատարմութիւն պատմութիւնն է, որ կ'ընէ:

«Je me suis ordonné d'oser dire tout ce que j'ose faire, գրած է Մոնթէյնը. La pire de mes actions et conditions ne me semble pas si laide comme je trouve laide et lâche de ne l'oser l'avouer» (5).

Նման բան մը ըսած է նաեւ Ժիւս. «Il faut oser dire tout, même les choses les plus funestes»:

Յանդգնութեան ինքիւր է խոստովանութիւնը՝ Մոնթէյնին եւ Ժիւսին համար: Ու ճշմարտութիւնը փնտռելու, գտնելու եւ բռնելու պահանջ մը: Մարդոց է, որ կը զիմեն երկուքն ալ, եւ անհարար:

Աստուծոյ չէ նաեւ, որ կը խոստովանի Ժ. Ժ. Ռուսօ: Կը նստի եւ կը գրէ՝ արդարացեալու համար ինքզինք: Որոշած է ըսել ամէն ինչ: Հաւատացած է, թէ տարով հանդերձ իր բոլոր գէշ կողմերը, ոչ ոք պիտի յանդգնի բռնել իր «նոնֆիւսիոն» կարգալով, «Je suis meilleur que ne fut cet homme-là»: Ու, իր կարգին, Ռուսօ նաեւ կը գործածէ «օգտ» բառը. «... je ne connais jusqu'ici nul autre homme qui ait osé faire ce que je me propose»: Չէր հաւանք Սէնթ Օկրևթինի խոստովանութեան:

Ժան Կլօսէնտ, «Ֆիկարօ» մէջ, նկատելի տարբերութիւն մը կը տեսնէ Սէնթ Օկրևթինի եւ Ժ. Ժ. Ռուսօյի միջեւ: Առաջինը կը խոստովանի՝ զղատապարտելու համար ինքզինք եւ մարդերը: Երկրորդը կը գրէ իր «նոնֆիւսիոն»՝ պաշտպանելու համար ինքզինք եւ մարդերը:

Բայց հակառակ այս բոլորին՝ կատարեալ խոստովանութիւն չկայ եւ որոշ իրաւունքներ ունին անոնք, որ գէժ են իրենց տուրքալը հասարակութեան առջեւ: Բացի իրենց, ինչպէս կ'ըսէ նաեւ մեր Ժողովուրդը, որ կ'ըսէ տակաւին՝ իր երգերէն մէկուն մէջ. «Ամէն ցաւ ամէն մարդու շի պատմութիւն»:

Ք. Մօրէլաք կը յիշէ նաեւ անոնք, որ կը զիմեն խոստովանութեան, կուտայ մասնաւորապէս Ֆլօպէրի անունը: «Je ne veux pas considérer l'art comme un déversoir à passions, eomme un pot de chambre», ըսած է Ֆլօպէր, որ նախընտրած է զիւ մը զիւ բանալ իր սիրտը, չի յնայու համար շատ բացողներուն տգեղութեան եւ անճշտութեան մէջ, ինչպէս հղան Սէյին, Մլլէր եւ ուրիշներ՝ զերթրապաշտներէն եւ գոյապաշտներէն: Միւս կողմէ՝ կասկած չկայ, թէ ամէն ոք իր ուզած ձեւով, շափով եւ մաքին ունեցած կարողութեամբ կու տայ միայն ներքին կամ արտաքին ճշմարտութիւնը: Այս դաստատանէն չեն փրկուիր վերոյիշեալ խոստովանողները նաեւ, նոյնիսկ Սէնթ Օկրևթինը, նոյնիսկ Ժիւսը:

Մոնթէյնը ինք իսկ կը խոստովանի, թէ գծուար, գրեթէ անկարելի է ճշմարտութիւնը տալը: Ժամանակ մը պէտք է, որպէսզի ըմբռնենք մեր գործած սխալը: Երբ կ'ըմբռնենք, փոխուած ենք արդէն ու փոխուած են մեր

5.— Իմաստութիւն կ'ընէ սուր օկրևթին՝ իր սերտը բանալ աւելի: Ետա իւր, ահա որ վերաւերած մը՝ գիտակցութեան բարձրագոյն մակարդակին վրայ, բայց չեղու՝ անձնականէն, ներաշխարհէն:

շուրջինները: Չենք կրնար ըմբռնել մեզ եւ մեր շուրջինները այդ սխալը գործըած շրջանին մէջ, երբ տարիները կ'անցնին:

Քլօտ Մօրէաք կ'ըսէ, թէ ժիտ նոյնիսկ իր վերջին տարիներուն կը գղջար ճշմարտութեան ետեւէն երթալուն համար, ժիտ, որ ազդուելով հանդերձ Քլօտի դատապարտութիւններէն, ընկնուելով հանդերձ շրջապատէն, կը յամառէր ճշմարտախօսութեան մէջ, մեղազրելով ծածկամտութիւնը: Քաջ կը անտարակոյս, Քլօտէն աւելի, Քլօտէն աւելի համակրելի: Եւ սակայն այս վերջինն է, որ իրաւունք կ'ունենայ ի վերջոյ, ըսելով, թէ ամէն ինչ կարելի չէ յայտնել հասարակութեան: Ու շատ քրիստոնեայ, բայց իր փերեզակութեամբ իրրեւ քրիստոնեայ կասկածելի Քլօտ դիտէր, թէ աշխարհը կեղծիքով կը դառնայ: Եւ այդ կեղծիքն ալ գոյութեան իրաւունք ունի, եւ աւելի չիմիչ ու բարեբար է, քան վնասակար ճշմարտութիւնը: Քրիստոնէութիւնն իսկ նկատի առած է այդ պարագան(6): Ու ժիտ, ծերութեան մէջ, զգացած է, թէ մարդը ստիպուած է ենթարկուիլ պատրանքներուն եւ սուտերուն, որ առաւելութիւններ են ընկերային եւ բարոյական դեմնի վրայ:

Ու խոռովիչը այն է, թէ ճշմարտութեան այդքան բնականորէր ժիտ իսկ նկատուած է կեղծ, խարբայ: Գերիբայաջաները նենգութիւն մը կայ հոն, կ'ըսէին, ուր բանականութիւն կայ: Կը մերժէին այդ բանականութիւնը, կը դիմէին նոյնիսկ Հիփոսոսցումին, տայու համար միայն իրենց ենթադրատակցական աշխարհը: Սակայն կը պահանջէին տենչերուն, բնազդներուն ազատ արտայայտութիւնն ու գոհացումը, բաներ, որ կը խեղդուէին բանականութեամբ:

Եւ սակայն ո՞րքան ճշմարիտ է այդ ենթադրատակցական աշխարհը, երբ ներկայ չէ մտածումը, անհրաժեշտ գտումը ընելու, ճշմարտութիւնը տեսնելու համար: Մեր միակ իրականութիւնն է անշուշտ, բնազդներու աշխարհը եւ մեր ուղեղը այնքան ալ վստահելի գործիք մը չէ, ինչպէս կ'ըսէր Պերկսոն: Անտարակոյս, մարդիկ նուազ ծպտուած պիտի ըլլային, եթէ խորհուրդ կարողութիւն չունենային: Բայց վայրենիներու պէս պիտի ըլլային անոնք անտարակոյս: Ասոնք իսկ կը ծպտուին: Անասուններն անգամ: Արարչական է կեղծիքը:

Չարհարելի առեղծուածի մը առջեւ ենք:

«Մարգ ինքզինքն է, որ կը սիրէ ամենէն ատաղ, կը գրէ Փասքալ, կ'ուզէ սիրուիլ եւ յարգուիլ: Կուզէ մեծ երեսիլ եւ պատիկ կը տեսնէ ինքզինք: Կուզէ երջանիկ ըլլալ եւ դժբայտ է՝ իր թերութիւնները տեսնելով: Ճշմարտութիւնը կը տառապեցնէ զինք: Կը ձգտի խուսափիլ անկէ, պահիլ զայն որիչներէն»:

Ահա տրամը մարդկային հոգիին: Մինակ կը զգայ ինքզինք: Պէտքը ունի ուրիշներուն: Կը խուսափի: Ուրիշներն են, որ կը դատապարտեն զինք իր ներքին աքորին համար: Կերտիչ եւ նոյն ատեն քայքայիչ է ընկերութիւնը: Մարդիկ, ստիպուած, կը դառնան եստսէր, անփոյթ, անդամ, նենգ եւ կասկածամիտ, եւ կը խարեն՝ ազրիլ կարենալու համար: Այս բոլորը ճիշդ են արուեստագէտին համար եւս:

«Եւ միայն ցնկեղը չեն, որոնք կը ծպտուին, կ'ըսէ Քլօտ Մօրէաք, այլ անկեղծները եւս: Ու կը խաբէ այն անձը, որ կը խօսի ինքն իր մասին, կը խաբէ նաեւ ան, որ չի խօսիր իր մասին, ինչպէս Փլօպեր»:

6.— Անուրէ ժիտ նկատած է, թէ Յիսուս կեղծ վկայութիւնն է, որ կը դատապարտէ միայն, այն որ վտասակար է: Մնացեալ սուտերը մեղք չեն թուիր:

Ու, ծպտուելով է, որ շատեր կու տան իրենց ճշմարտութիւնը :
 Ըտուածը ճիշդ է Մալարմէին, Վալէրիին եւ ուրիշներու համար նաեւ, որոնք չեն ուզած խօսիլ իրենց անձնական ապրումներուն եւ շրջապատին մասին, եւ հղած են վերապահ : Յոստովանութիւն մը կայ ասոնց տողերուն մէջ՝ հակառակ իրենց վերապահութեան՝ ծպտուածով մը՝ անշուշտ : Խորած են անպայման :

Կ'ըմբռնենք Ռէմպոն, որ լքելով գրականութիւնը, դառնալով վաճառական, մոռնալով գրածները, յաճ է իր «Une saison en enfer»էն ետք : Ինտրա սուսանային կը վերադարձի իր «Ներաշխարհը» :

Ու սրտաց քերթողը, բանաստեղծը մանուսնդ, որ մանուկ է յաճախ հոգիով, հակառակ իր խելքին ու տաղանդին, կը տոտապի տակաւին՝ անտեղի եւ անարդար վերադրումներէն : Կը զգայ, թէ անըմբռնելի ու մեղադրելի է՝ ամէն մէկ քայլին : Սրտաց ծնած է, կ'ուզէ սրտաց մնալ եւ ստիպւած է ծպտուիլ՝ մնալով հանդերձ սրտաց :

Այսպէս, վեհանձնութիւն է խոստովանութիւնը եւ կ'երեւի թշուառ, մեղադրելի, վնասակար . իր ցուցողքած վէրքերով, անկարելի : Ոսօքը ինքնախոստովանութեան մասին է անշուշտ : Ռուս յիշուած է իբրեւ միաժիտ :

Նարեկոյնի, որուն հմտութիւնը վնահասած եմ միշտ, իրաւամբ դիտել կու տար օր մը, թէ անձնական խոստովանութիւններ պէտք չէ նկատել Նարեկացիին բոլոր ըսածները(7) :

Կապակած չկայ, թէ՛ Ատուծոյ աւջեւ կեցած, ինքզինք բզկտող հոգիի մը հետ է մեր գործը : Բայց բանաստեղծի մը հետ առաւելաբար, որ հոգեմիճակ մը կու տայ՝ իր հոգիին պատմութենէն աւելի : Ատիկա կը յատկանայ, երբ կը բաղդատենք զինք Սէնթ Օկիւսթինի հետ, որ կը խօսի իր մանկութեան, աշխարհիկ կեանքին, մտքի կազմաւորումին, Սէնթ Ամպրուազին եւ քնկերներու, ճամբորդութիւններու մասին, թէեւ, ինչպէս ըսինք, ան եւս չի խոստովանի ամէն բան : Հինգ դար յետոյ, Նարեկացի կը խոստովանի նոյն ձեւով : Բայց առարկայական չէ իր խոստովանութիւնը : Իր կեանքը անձանօթ կը մնայ : Անձանօթ՝ իր մեղքերը եւս : Ընդհանրական խօսքեր կ'ընէ միայն : Ու այս է իր յաջողութեան գլխաւոր գաղտնիքներէն մէկը : Երբ ան, նուազ տրամաբանող, նուազ վերլուծող, քան Սէնթ Օկիւսթինը, բայց յուզիչ, կախարդիչ՝ կը բարձրացնէ մեզ իրեն հետ : Աղաչանք ու փառաբանութիւն է յիկ :

Անթերի չէր անշուշտ Նարեկացի, բայց այնքան ալ մեղաւոր չէր, ինչպէս կը ներկայանայ մեզի : Թերի է իբրեւ խոստովանութիւն այն՝ ինչ որ կու տայ մեզի :

Հոս տեղին է յիշել, թէ բլլալով հանդերձ սրտաց, մեր ժողովուրդը շատ չի սիրեր ներկայանալ իր արատներով : Ու մեր եկեղեցին, բոս այնմ, հնարած է խոստովանութեան անանձնական ֆորմիլ մը, օրինակ .

«Մեղայ չարախօսութեամբ լեզուիս, ստախօսութեամբ, ոտս երդմամբ, երդմագանցութեամբ, հակառակութեամբ... բամսարկութեամբ... քառ դատարկարանութեամբ եւ ծաղալ գրախօսութեամբ... բամբաւելով, հայեղելով...» եւայլն :

7. — Կարգուլ իր խորունկ ուսումնասիրութիւնը Նարեկացիի մասին :

— Ըսէ՛ Մեղայ Ատուծոյ . . .

Ու մարզը, որ կ'ընդունի իր մեղքը, առանց պարզելու զայն յաճախ, առանց նոյնիսկ զիտակցելու անոր յաճախ, քահանային ետեւէն կը կրկնէ՛ :

— Մեղայ Ատուծոյ . . .

Եւ խոստովանած է՝ :

Նարեկացի նաեւ, խոստովանելէ աւելի՛ խոստովանելու կը մղէ՛ մեզ, Խոստովանութիւնը աւելի առարկայական ու տրամատական կ'երեւի կաթոլիկ եկեղեցւոյ մէջ: Բայց ո՛չ միայն առաւելութիւն մը շնք տեսներ հոն, այլեւ խոստովանող կիներու միջոցաւ, կղերականներու կողմէ, անմնական ու քողաքական շահագործումներ կը տեսնենք: Ու կ'ըմբռնենք նաեւ, երբ պետութիւնը գէ՛մ է այդ խոստովանութեան:

Շատ աւելի անկեղծ ու տրամտրանական է մերը: Խոստովանողը պէտք չունի իր արարքները թուելու: Ատուած իրմէ լաւ կրնայ տեսնել զանոնք: Իր պարտքն է զղջումներ յայանել միայն, խոնարհիլ, երկնային շնորհն ու փրկութիւնը խնդրել: Այսպէս էր նաեւ Նարեկացի(8):

Մեր մէջ զարտուղութիւններ կան, ինչպէս Բնտրան՝ մասնաւորապէս խենթ նկատուած Բնտրան. իր «Ներաշխարհող» եւ, մա՛նաւանդ, իր նամակներով: Բայց ինքն իսկ իր «Ներաշխարհոյն ծնունդը վերագրեց սատանային, երբ, լքելով գրականութիւն եւ բնտանիք՝ յանձնուեցաւ Ատուծոյ: Այս բարդութիւնը կը պահանջէ մասնաւոր վերլուծում մը, որով կարելի պիտի ըլլայ հաստատել սատանան, այսինքն՝ կեղծիքը, իր խոստովանութիւններուն մէջ ալ եւ դժբախտութիւնը խոստովանութեան:

Խոստովանութիւնը, տարբեր նկատումներով, անշուշտ տղեկութիւն մըն է: Վատութիւն, վախ է ան՝ եթէ քաջութիւն ու յանդգնութիւն կր տեսնեն օմանք անոր մէջ: Խոստովանութիւնը խոնարհութեան արդիւնք չէ՛ միշտ եւ խոնարհութիւնը առաքինութիւն չէ՛ միշտ, այլ նաեւ զոռոպութիւն եւ յաւակնութիւն:

Կայ տակաւին ցաւալի խոստովանութիւնը՝ կամքէ զրկուած, քայքայուած, մեղաւոր, երկաշու գատապարտուած խորհրդային դարձիչներուն, որ պիտի սպաննուին կամ աքսորուին, մեր դարու հրապարակային այս թշուա՛ռ ապաշխարողները . . . Չորեկի շահագործում մըն է այս խոստովանութիւնը:

Կայ խոստովանութիւն մը, որ հիւանդագին է, կը նմանի ծովամոյնի օգնութեան կանչին: Կոտրած են հոգիին զսպանակները, բառերը դուրս կը խուժեն խառնիխուռն: Նման խոստովանող մըն էր Տէմիրճիպաշեան: Կեղծիքը անպակաս է հոս իսկ:

Կայ խոստովանութեան ուրիշ ձեւ մը, որ անձնական չէ: «Արու Լալա Մախարի»ն չի համապատասխաներ իր հեղինակին, որ ծածկած է ինքզինք արաբ բանաստեղծին ետին: «Հեքիմնու երգեր»ը նոյնպէս՝ հեռու են Դանիէլ Վարուժանէն, որ մտած է շատերու կայիին մէջ՝ տալու համար հեթանոսական ու քրիստոնէական, աւտոսպետական ու ընկերվարական, հակասական քերթուածներու հաւաքածոյ մը:

8.— Վարդեա, կորովի զրիչով, յանդգնութեամբ եւ երեւակայութեամբ է, որ Ն. Պէլեկթաշեան կրցած է թիւ եւ ոսկոր օայ Նարեկացիին: Եւ անշուշտ՝ երկիւղաեութեամբ ներշնչուած՝ տուած է առաջնալի հրաշագործի պատկեր մը՝ նկատի չառնելով ինքզինք ստորնայնող Նարեկացին:

*Շնտանիքի պարկեզա հայր էր եւ երգած է տոփանքը, կապելան, պտ-
նիկը, նզովելով յաճախ իր մաքուր սէքը.*

Ո՞ր կնոջ սիրտը կրցաւ համնար մըննել թարեբաստ
.
Ի գուր նապուկ թեւերուն մատնեցի վիզս հըլու,
Ու գլխիկոր պաշտեցի դաւադրութիւնն իր սէրին:
Ի՞ժ մը ծուարած՝ մահուան թռչն ատամներէն կը հեղուր:
Ան կը դրժէր, ու դրժանքն համբոյրը իր կը ծածկէր
Սիրտը՝ գոր ես բացի օր մ'ուրիշ բալիֆ մ'էր կզպած:
.
Եւ օր մ'ապ ես, ո՞վ վայրկեան, հոգեվարքի պէս տխուր,
Երբ լուսարուխ պօրտին վրայ ինկած՝ կասկածս լացի,
Տեսայ, որ փորը խայտաց գաղտ ծիծաղով մը խննէշ...

*Միտլ պիտի բլրայ անձնական ողբերգութիւն մը փնտնել բանաստեղ-
ծին այս տողերուն մէջ, որոնք կ'արտայայտեն՝ մեծ անկեղծութեամբ՝
մարդկային ընդհանրական եւ յաւիտենական տրամներէն մէկը՝ անձնական
խոստովանութեան ձեւով:*

*Միտլ ու եղիկի է առհասարակ շարախինդ նայուածք մը պտտցնել
նման արտայայտութիւններու վրայ, ինչպէս ըրաւ տափակ գրչեղբայր մը՝
պոռնիկազիր մը միայն տեսնելով բանաստեղծին մէջ:
Առիթն է, որ խօսինք դարձեալ Չարեանի մասին:*



*Չկայ անձնական ամբողջական խոստովանութիւն մը: Խոստովանու-
թիւնները աւելի մեծ են հերոսներու բերնով: Գիտենք, թէ աւելի լայնօրէն,
աւելի անկեղծօրէն ներկայ են հեղինակները՝ իրենց վկայերուն մէջ: Կէօթէ,
Տոթոյուսկի, Սթանտալ, Պալլաք կը ճանչցուին իրենց հերոսներուն հտին:
Բայց անուղղակի այս խոստովանութիւնն ալ, ծպտուած արդէն, կը մնայ ա-
ռարկելի:*

*Չարեան շատ աւելի առարկելի է իր ուղղակի կամ անուղղակի խոս-
տովանութիւններով: Իր օրինակը կրնայ լուսաւորել մեզ: Ինչո՞ւ կը պաշտ-
պանէ ինքզինք իրքեւ խոստովանող եւ որչա՞փ արդար է:
Քերթնածի մը մէջ («Լարախաղաց»), ան կ'ըսէ այս մասին.*

Բայց դու՝ վտանգով հարբած պոետ,
Յուռաթ-ուլունի կրող սպիտ,
Մոտի անհուն նուաճած բազէ,
Հրեշտակապետ եւ Քերովբէ՝
Գու, հեշտ, թեթեւ ռաֆերիդ տակ,
Յօրինում ես բարդ մի նուագ,
Գիւնավութիւն յանդգնութեան՝
Յանուն հոգու ազատութեան:

Ա՛հ, թող վարը, թռիչքիդ սակը,
 Գորշ ամբոխի խեղկատակը,
 Սքտի, քծնի, հագնի դիմակ,
 Փոխի օխով լեցուած կատակ
 Եւ, ձեւերով խեղճ հսպիտի,
 Քննադատդ լինել ուզի՛
 Ոչ մի նախանձ, ոչ մի հեղձանք,
 Ոչ թուֆ, ոչ մուր եւ բամբասանք
 Չես կարող քո երգիդ հասնել
 Եւ երագդ ազաւազել՝
 Օ, վէս Արիել:

Հոս՝ բանաստեղծը հպարտ է «քննադատ»ին առջեւ, որ դրական գա-
 տումներէն անդին սուղած է իր շարախինդ նայուածքը: Ինքզինք կը դասէ
 անկէ վեր: Կը թուէ իր առաքինութիւնները, «վտանկով հարբած, բազէ, գի-
 նովութիւն յանդգնութեան, յանուն հոգու ազատութեան, փոթորիկներու մէջ
 թեւածող սգի, Արիէլ, վէս Արիէլ...»: Որանք Հեռու ենք թէքէտանի կոնձակ-
 ներէն եւ բնկրկումներէն:

Զարեան, «քննադատ»ին հետ, կ'արհամարհէ նաեւ «գորշ ամբոխը»:
 Ինք գիտէ, թէ «հրեշտակապետ ու քերոյրէ» է, հակառակ բոլոր բամբա-
 սանքներուն: Զի հերքեր իսկ, իր մասին գրուածն ու խօսուածը: Ընդհակա-
 ուակն, հպարտ է: Որոշած է շարունակել իր երգը, առանց բնկճուելու: Ինք-
 ղինք ատող Ինտրա մը չէ:

Կը սիրենք նման կեցուածք մը: Մխիթարական է իր քերթուածը շատե-
 րուն համար, գեղեցիկ նաեւ, անկասկած, շատերուն համար: Քաջ, հպարտ
 պաշտպանողական մըն է: Կը խորհինք, թէ ամէն հողի ունի իր մէջ արդարա-
 նալի մաս մը: Եւ այս է պատճառը, երբ «զգուշութեամբ կը պարսաւենք»
 մարդերը: Չենք կրնար «զատել զանոնք դուրսէն»: Իրենց արարքներն իսկ
 յաճախ անձանթ են: Իրենց արդարանալի պատճառները ունին: Ու քերթողը
 «հրեշտակապետ ու քերոյրէ» է անշուշտ, իր բերած գեղեցկութիւններով,
 նուիրումով, հողիները լուսաւորելով, բարձրացնելով:

«Քննադատ»ը կ'երեւայ գոհելի ու ճղճիմ, այսպանելի:

Եւ սակայն, Զարեան քակելու տեղ հանդոյցը, կը կտրէ զայն իր ար-
 համարհանքին սուրով: Զուրկ կը տեսնենք ղինք թէքէտանին խղճմտութե-
 նէն, ինքնաճանաչումէն, իրապէս խոստովանող հոգիի մը առաքինութիւն-
 ներէն, տառապանքէն, որուն զարհուրելին ապրեցաւ Ինտրան:

Այս, արուեստագէտը ազդուելու չէ «քննադատ»էն, բայց թուքին ու
 մուրին յանձնառուն կը շփոթուի յաճախ անզգամին, ամբարտաւանին հետ:
 Եւ անկասկած, տառապիլ չի գիտեր Զարեան: Կը ջանայ պանծացնել ինք-
 ղինք: Հպարտ է լարախաղացին մէջ դնելով ինքզինք: Ու սկսածայ խոս-
 տովանութիւն մըն է այս քերթուածը, անպիտակից խոստովանութիւնը
 իր արուեստին ու նկարագրին: Հպարտ է լարախաղացով: Բայց եթէ լարա-
 խաղացը կը յիշեցնէ Մուրր Կարապետը, կը յիշեցնէ նաեւ զուարճացողը
 Փուարին կամ սիրիին, որ թեքիքով մը, կը հերքէ լարախաղացին երկնա-
 յին շնորհին առասպելը: Եթէ շարին գէժ բարի զօրութիւններ են յուսութ-

ուլունքները, են նաև ուշադրութիւն դրաւող զարգեր: Ու ինչ արժէք՝ լա-
րախաղացին խոստովանութիւնը՝ անփասակելի(9):

«Քերթվածն տխուր յիշատակ մը ձգած է մեր մէջ՝ «Հայրենիք»ի է-
ջերուն յանձնելով Հայաստանէն Փարիզ եկած եւ Երեւան վերադառնալու
ստիպուած բռնատեղծ Չարչարեանի գաղտնիքներն ու վախերը: Ծաղրելի
վերջ զայն, արհամարհելի էտք անոր տղեղութիւնն ու տգիտութիւնը,
1933ին, ան չէ խորհած, թէ կասկածելի կը դարձնէ Չարենցը Հայաստանի
վարիչներուն աչքին: Զարեան, չափազանցելով, գռեհկացնելով Չարենցը,
վատ ու վախկոտ ներկայացնելով զայն մեղի, անկեղծ խոստովանութիւն մը
չէ, որ կ'ընէ անկասկած: Ո՛չ ինք եւ ոչ ալ իր գոհը ճշմարտապէս կ'երեւին
մեղի:

Գիւրին է Հոգարտանալ անշուշտ, երբ մարդ իր անձին, իր թերութիւն-
ներուն ու գաղտնիքներուն մասին խօսելէ աւելի՝ կը խօսի ուրիշներու մա-
սին: Բայց կը վրդովէ մեզ նման խոստովանութիւն մը: Անձնական գեանի
յթայ, այլապէս անգնահատելի է՝ երբ Իրերեան կ'երեւայ աստուածային
կերպարանքով մը: Օչական գարձեալ աւելի մօտ է մեր սրտին «Նայիրի»
մէջ երեւոյզ իր սիրալին խոստովանութիւնով՝ ուր, — օրինակէ համար,
— աշգրան ինքնահատան մարդը կը տեսնուի իր խղճմտութեամբ եւ անկեղծ
յուզումով, կարելի տնկեղծութեամբ անշուշտ:

Ի հարկէ, վարպետ դրող մըն է Չարեան, բայց գնահատելի չէ իրրեւ
խոստովանող, արձակելով հանդերձ ազնուական գագսումներու գունազեղ
հրթիռներ:

Շատ հեռացանք վարուժանին պարագայէն, բայց եւ այնպէս կրցանք
կրկնել հոս ալ այն՝ ինչ որ ըսինք չարախինդ նայուածքներու մասին: Զար-
եան եւ Օչական տուին օրինակները ուրիշները նախատելու թշուառ գրակա-
նութեան: Վրդովիչ կը գտնենք զայն՝ անարժան՝ իրենց հեղինակներուն եւ
զոհներուն համար: Եսայեանին «Կեղծ Հանճարներ»ը ուրիշ մոռցուած թշուա-
նութիւն մը:

Այս է պատճառը նաև, երբ չեմ ուզեր պեղել իր ըրած «խոստովա-
նութիւն»ները:



Որոշ է սակայն, թէ Չարեան մեղաւոր չի դատար ինքզինք: Ու մեղքին
հրկիզումէն չէ, որ ծնած են իր քանի մը մանր-մանր խոստովանութիւնները:

9.— Չարեանի այս քերթուածը նաև խոստովանութիւն է եւ չէ: Անկեղծութեան
հետ խառնուած է կեղծիքը: Ծգստուած է հեղինակը:

Հոս, երբ այլքան զեղեցիկ է այս քերթուածը, պատճառը այն է, որ Փաղրիխտօնոմ
մը չէ: Վերաւոր բանաստեղծը ըսելիք մը ունի: Բացած է սքրաք: Այս գիտի է, որ արուեստը
կ'ըլլայ մեծ: Բուսական է, որ ըլլայ անկեղծ, ունենայ յորդուն մաս մը: Ներքի ու նայնիակ
յուսուաթ կը զստան մնացեալ արքիֆիւսներն իսկ: Բայց անկեղծ, յորդուն այդ մտքը ոչտք է
զայ նաև արուեստագէտ հոգիէ մը: (Ըմբռնելի է, թէ արժէք չեն ամէն անկեղծութիւն եւ յոր-
դուն): Ու Չարեան արուեստագէտ է: Սխալ է ամբողջական անկեղծութիւն, հետևաբար եւ
ամբողջական խոստովանութիւն սպասել երկէ մը: Սխալ նաև՝ իր այդ նայիլ ոտնոր: Չենք
ուզեր, որ իրական խոստովանութիւն ըլլայ Չարեանի այս քերթուածը: Արաններն իսկ, ան-
շուշտ, կենսունակութիւն կու տան արուեստին, կը դարձնեն զայն մարդկային, միփթաբա-
կան նոյնիսկ: Կ'ընդունինք: Բայց Չարեան հակասութեան մէջ կ'իջնայ՝ Աստուծոյ սուլեւ
կանգնելու, մեղքերէն վեր զուտ խղճմտանքով ստասպելու իր թելադրանքին հետ:

Նման նկարագրերն էր շեն տառապիր մեղքով: Ու Ջարեան, ըլլալով հանգերձ սրբաց, տարրեր անոնցմէ, որ սէր եւ եղբայրութիւն կ'երգեն եօթը պատնէշներու ետեւէն՝ հեռու է մարդկային ըլլալէ, ըմբռնելէ մարդկային ցաւերն ու առաքինութիւնները, յուզուելէ, սիրելէ:

Աշխարհիկ է ան, սիրելով հանգերձ քնազանցական pirouetteներ ընկէ: Աստուծոյ առջեւ կեցող մարդ չէ անշուշտ: Միայն իր պատկերին դէմ է, որ ան կանգ կ'առնէ: Եւ կանգ կ'առնէ հիանալու համար անոր վրայ: Ուրիշները կարեւորութիւն չունին իրեն համար:

Իր խոստումներ չի համապատասխաններ հետեւարար այն տողերուն, զորս գրած է «Նայրեմի» մէջ: «Պոստովանելու համար՝ պէտք է մարդ ինքզինք պատասխանատու եւ մեղաւոր զգայ...»:

Ջարեան ոչ ոքի առջեւ պատասխանատու կը զգայ ինքզինք: Ոչ իսկ՝ իր արձակած բառերուն առջեւ: Ու ծպտուած է արդէն, երբ խոստովանութեան մասին կը խօսի: Իր սրտբացութիւնը կը դադրի այն ատեն ըլլալէ մեծ առաքինութիւն մը: Կը տեսնենք իր նմանները սովորական մարդոց մէջ ալ:

Le fureur comme un paon me fait parler, messieurs !
(CHANTECLER)

Ըսինք, թէ ամէն գրող գեանատիւն է քիչ թէ շատ: Բայց Ջարեան ամէնէն նարտարներէն մէկն է այդ զգեստաւորներուն:

Ըմբռնելի է, թէ մեծ յաղթանակներ չեն «հոգեկան ազատութիւն»ն ու «յանդգնութիւն»ը այս պայմաններուն մէջ: Ազատութիւնը վատտակ մը չէ յաճախ, երբ խնկարկուներով, ներողամիտներով չըջապատուած են այդ զազառները, երբ չեն տառապիր իրենց արուեստին զոհերով, երբ, մա'նսականը, արանջալու, գիրենք ատելու տեղ, այդ զոհերը պաշտամունքով կը նային իրենց: Խղճմտութիւնը ռազմադաշտ մըն է, ուրիշ քիչեր կ'անցնին, կը վերագառնան իրապէս հոգր, վսեմ: Քաջութիւնը վատտութիւն մըն է յաճախ, երբ «քաջ»ը կը խոստափի ներքին վերլուծումներէն, յուսահատութեան եւ ինքնամերժումին մահացու պայքարէն:

Այսպէս, վարանումով կը նայինք Ջարեանին, երբ ան առաքինութիւններ կը վերագրէ իրեն: Ու կ'ըմբռնենք վերջապէս շարժառիթը խոստովանութեան իր theorieին: Զգացնելու համար, թէ իր արուեստը մեծ է եւ նշանակութեան զուրկ են զինք պարսաւողները:

Մտածումի անբաւարարութիւն մը կը մասնէ Ջարեան, երբ կ'ըսէ օրինակի համար, թէ «Մեղքը պահանջում է Աստուծոյ ներկայութիւնը»: Ուրովհետեւ, կասկածէ դուրս է, թէ մարդ կրնայ մեղաւոր զգալ ինքզինք նաեւ մարդկային ընկերութեան առջեւ՝ առանց Աստուծոյ ներկայութեան, համաձայն ընկերային բարոյականի մը: Մարդիկ կ'ապրին փոխադարձ իրաւունքները յարգելու պարտականութեամբ եւ ոմանք կրնան արելնիլ՝ անզբաղաւանջով չարիքին, զոր գործած են ուրիշի մը ազատութիւնը կամ երջանկութիւնը քանդելով: Ի հարկէ, Աստուծոյ առջեւ է, որ կ'ըլլայ մեղքի մեծագոյն տառապանքը եւ ճշմարիտ խոստովանանքը, ինչպէս կ'ըսէ Քիեբրֆէկարա, Հո'ն՝ ուր վստանգի տակ է մեր հոգիին անմահութիւնը, բայց խղճմբռանքը, շարին ու բարիքին զազաւարը ներկայ է անհաւատին մէջ ալ, երեսային մէջ իսկ:

*

Շահեկան պիտի ըլլար վերլուծել մեղքին դերը արուեստին մէջ: Մեզքը, արդարեւ, արուեստներու մէջ, բարձր շնորհին հասցնող ազդակ մըն է: Բայց իր մենաշնորհը չէ այդ բարձրութիւնը: Մեծ ու գեղեցիկ երկեր կան ի հարկէ նաեւ տանց այդ մեղքին, հիմնուած՝ համամարդկային քաղաքական եւ ընկերային հարցերուն ազատազրական պայքարին ու առօրեայ տառապանքին վրայ: «Qui ne connait pas les régions du mal ne comprend pas grand chose à cet univers... avec lui, l'art fait une œuvre, il en tire des beautés d'une matière morte», կը գրէ Ժիւլ Մարիթէն: Անշուշտ: Բայց այս իսկ ցոյց կու տայ, թէ մեղաւոր ըլլալու պէտք չկայ անպայման: Կը բաւէ տեսնել շարիքը, ճանշնալ գայն: Կարեւորը տառապելն է:

Եւ եթէ արդի մարդը մեղաւոր չզղայ ինքզինք՝ կ'ըմբռնէ այդ շարիքը: Ու Աստուծոյ բացակայութիւնը չէ միայն պատճառը, երբ մարդիկ չեն մտածեր մեղքին, այլ որովհետեւ գիտեն, թէ անփութութեամբ, անտարբերութեամբ, անպիտանութեամբ միայն կարելի է ապրիլ, որովհետեւ քրիստոնէական բարոյականը չէ միայն, որ խախտած է, այլեւ առհասարակ ընկերային կեանքը:

Միւս կողմէ, մեծ արուեստագէտներ չեն ըլլար բոլոր անոնք, որ խորապէս կը զգան իրենց մեղաւոր ըլլալը: Կարեւորը տաղանդն է ամէն բանէ առաջ:

Մեղքի դպացումը չէ միայն նաեւ, որ մարդերը կը մղէ խոստովանութիւններ ընկալու Կան, որ մեղաւոր չեն համարեր իրենք զիրենք, բայց կ'ուզեն երեւիլ իրենց ամբողջական ինքնութեամբ: Այսպէս, հեթանոս Ժիւս մը պիտի այրէ քրիստոնէայ Քրիստէլէ մը աւելի, եւ անկէ աւելի յանդուգն խոստովանութիւններ պիտի ընէ:

Ու Ժիւս Օսքար Ուայլտէն ետք, որ բարոյական չէր ճանշնար արուեստին մէջ, կը խորհէր, թէ լաւ դպացումները չեն, որ լաւ դրականութիւն կու տան: Շիշո էր մտածը: Աստուծոյ ներկայութիւնը խոտոր կը համեմատի արուեստին հետ, որ, ինչպէս Ժիւլ Մարիթէն կ'ըսէ, matière morte՝ մը կ'առնէ իր գեղեցկութիւնը: Այսինքն՝ մեղքին գիտակցութիւնը պիտի հեռացնէր մեզ արուեստէն, որ աշխարհիկ է եւ պատարալի: Եթէ արուեստագէտը այդքան կը տառապի հողեկան իր փրկութեան համար, Աստուծոյ համար, պէտք է, որ հրաժարի իր արուեստէն, որ չի կրնար մխիթարել զինք:

«Au point de vue chrétien, et en dépit de toute l'esthétique, toute existence de poète est péché, le péché de se livrer à des fictions au lieu d'être, de se rapporter au bien et au vrai par l'imagination au lieu d'être ces choses...» (S. KIERKEGAARD):

Բարեբախտաբար, մարդիկ այնքան չեն ենթարկուիր քրիստոնէական այս ըմբռնումին, որ ամբողջական կը տանի: Քրիստոնէայ Քրիստէլ իսկ հետոս է նման ըմբռնումէ մը, որ շատ ալ համոզիչ չէ: Արուեստագէտը չէ միայն, որ fictionին հետեւն կ'երթայ, այլ ամբողջ աշխարհը: Այդ fictionը անհրաժեշտ կը թուի, գլխաւոր լծակն է մարդկային յառաջգիտութիւններուն ու անկէ ձեռքազատուիլ կարծող քրիստոնէական fictionին մէջ է իր կարգին(10): Ինչպէս մէկէն դուրս եկաւ՝ մտնելու համար ուրիշի մը մէջ:

10.— Քրիստոնէութեանը, ինչն իսկ օգտագործեց արուեստն ու արուեստագէտները՝ իր տանջանքուն եւ երգերուն համար:

Քաճքա, Ժիւլիէն Կրին, Պերնանտ, Ժիտ, Եւայն, բաւական փաստեր են ըմբռնելու համար, թէ խղճմտանքի տալանազ մը կ'անցընէ աշխարհի արդի մտաւորականութիւնը: Մարդը այսօր, աւելի քան երբեք, յանցաւոր կը զգայ ինքզինք այս քաղաքակրթութեան առջեւ, եւ կը ձգտի արդարացնել ինքզինք: Անձկոտ է, վար առնելէ ետք շատ մը կեղծիքներ: Մեղքին գիտակցութեան վրայ հիմնուած առատ զրականութիւն մը կայ այսօր:

Այս տալանազը ունեցանք նաեւ մեր մէջ, Եղեռնէն ետք, երբ սխալներն ու յանցաւորները ուղեցինք մատանշել: Բայց ասիկա, անփառունակ ու սըխուր՝ տարբեր նիւթ մըն է:



Ես չեմ կրնար երեւակայել խորանին առջեւ ծունկի եկող Ջարեան մը, ոչ իսկ սենեակի մը մէջ՝ մարդերէն զաւտնի ազօթող Ջարեան մը: Եթէ ծունկի իսկ զայ, եթէ ուզէ իսկ անկեղծօրէն ներկայանալ Արարիչին, իր մէջ՝ իրմէ աւելի զօրաւոր էակ մը կայ, որ կը կոչուի Մեֆիսթոֆէլէս, գերին է անոր:

Ջարեան պէտք է լքէ զրիւք՝ եթէ այդքան մեծ է իր մէջ մեղքին զգացումը: Աստուծոյ կարելի չէ ներկայանալ արուեստով մը, որ մեղք մըն է ինքնին, ինչպէս ըսած է նաեւ Նարեկացին:

«Որ գործով միայն գլխի, եւ ոչ ստեղծագործութեամբ կաշաւիս: Այսինքն՝ Արարիչը քերթողին կեանքին կը նայի եւ ոչ թէ անոր բանաստեղծութեան: Ու Նարեկացի իր խոստովանութիւններուն համար իսկ ներողութիւն կը խնդրէ: Մեծ լուսեամբ է միայն, որ կարելի է կանգնել Արարիչին առջեւ: Ու լուսեամբ մէջ է, որ կ'ըլլայ ամէնէն արդար խոստովանութիւնը, ինքզինքին հետ:

Բայց կարելի է արուեստի դործ մը տալ, քրիստոնէութեամբ՝ ի հաշիւ քրիստոնէութեան, ի նպատակ մարդկութեան: Առաքելական գրականութիւն մը՝ ինչպէս ըրին Թուլթոյ եւ Տոսթոյեւսկի: Բայց ասոնք, ինչպէս եւ Տանթէ, հանճարներ են ամէն քանի առաջ, մեղքին զգացումը ունենալէ առաջ՝ մեծ ու յանդուգն իմացականութիւններ են:

Ջարեան մեղքը իր այս առումով չէ, որ կը յիշէ անկասկած: Կեանքին հետ է իր գործը, կենցաղապաշտ է, սուրբերէն աւելի վար մակարդակի մը վրայ: Մեղք, խոստովանութիւն, Աստուած բառերը, զորս կը գործածէ, կը կորսնցնեն այն ստան շատ մը բան իրենց բովանդակութենէն: Եւ, ի վերջոյ, կը հասնինք միեւնոյն եզրակացութեան: Կ. Ջարեան տառապանք եւ գիտակցութիւն կը պահանջէ միայն արուեստագէտէն: Գիտակցութիւն՝ սխալները ըմբռնելու: Յուսահատութիւն: Եւ յուսահատութենէն վեր գալու, իր ինքնութիւնը ըլլալու եւ իր այդ ինքնութիւնը պարտադրելու թելադրանք մըն է, որ կ'ընէ: Ջարեան չի կրնար խօսիլ «Աստուծոյ ներկայութիւնը» պահանջող մեղքի մը, «Աստուծոյ ներկայութիւնը» պահանջող խոստովանութեան մը մասին, մանաւանդ՝ երբ կը խօսի մարդկային իրաւունքներէն: Բայց ճշմարտութիւն մը կ'ըլլէ անկասկած եւ համաձայն ենք իրեն՝ մեղագրիչէ ետք բառերու իր շուրջ գործածութիւնը, յիշելէ ետք տառապանքին պակասը:

Ջարեան, այսպէս, իրաւունք չ'ունենար ի հարկէ դատաւարտելու աշխարհի արդի մտաւորականութիւնը, երբ ինքիքը կ'առնուի այս ծանձաններուն մէջ: Տառապանքը, յուսահատութիւնը, գիտակցութիւնը ներկայ են ո՛չ միայն աշխարհի զգաւ մասին մէջ, այլեւ անդին:

Ու արդէ աշխարհը, ունենալով հանդերձ շատ մը դատաւարտիւն կէ-

տեր, մեղադրելի յաւակնութիւններ, յուսատու է իր անձկութեամբ, յուսա-
հատութեամբ, սխալներուն դիտակցութեամբ, յառաջդիմութեամբ:

Առատ են խոստովանողները այսօր աշխարհի ամէն կողմը: Բայց այդ-
քան առատ չեն մեծ արուեստագէտները:

Ս. Կան անշուշտ մեծ արժէքներ:

Կ. Չարեան ինք իսկ պիտի տեսնէր, թէ շատ աւելի շատ են այսօր
Ռուսոյի հետեւողները: Սարթը՝ իր ընկերներով, եւ ուրիշներ: Պէճեանոս
յիշողութեան արժանի ուրիշ գէմք մըն է: Ու մակերեսային անձնաւորու-
թիւններ չէ, որ կը տեսնենք միայն, այլ շատ զօրեղ իմացականութիւններ եւ
անհասարկանութիւններ, անձկոտ, մարդկային ճակատադրով, մարդ էակով
զբաղող բազառիկ դէմքեր, որ ճշմարտութիւններ կը փնտնեն եւ կը տոտա-
պին՝ սկսեալ երջանիկ Ամերիկայէն:

Կ. Չարեան սեւեռած է կարծէք իր նայուածքը միայն վիժածներ տես-
նելու համար: Վերջն նայած է միշտ: Բայց վերջն նայիլը մեծութեան ապա-
ցոյց մը չէ, երբ նայողին տեսածը սխալ, անարգար ու մակերեսային է:

Նախ ինք չէ, որ Արեւմուտքը սնանկ կը յայտարարէ: Գերբրապաշտ-
ները ըսած են իրմէ առաջ: Բայց Արեւմուտքը սոքի կենսութեւ եւ նոր թուիչ-
ներ առնելու հնարաւորութիւններ յոյց տուաւ եւ կու տայ՝ հակառակ իր եւ
զերբրապաշտներու կարծիքին:

Ճիշդ է, թէ քառսի մը մէջ է աշխարհը այսօր: Բայց ճիշդ է նաեւ,
թէ Արեւմուտքն է զարձեալ ամէնէն լուսաւոր, ամէնէն ազատ, ամէնէն յու-
սատու մասը:

Կարելի է իրաւունք սալ Չարեանին, երբ նկատի կ'առնենք անոնք, որ
գոյութիւն ունին երկաթէ վարագոյրէն անդին եւ ասդին, անոնք, որ «մարդ-
կային իրաւունքները փոխանցել են իրենց վրայ տիրող միւլթային, քաղաքա-
կան, գիտական կամ ուրիշ տարիքային հասանքներին»:

Ս. սակայն ի՞նչ պէտք ունէր խոստովանութեան հետ կապելու այս
բոլորը: Գիտենք, թէ կան այդ խոստովանութիւնները՝ համայնակարութեան
մէջ ալ, ուր տաղանդները հազուադէպ են: Ու հազուադէպ այդ տաղանդները
կը փաստեն, թէ կարելի է արուեստի մեծ գործեր տալ նաեւ առանց մեղքին
գիտակցութեան, ենթարկուելով «միւլթային, քաղաքական, եւայլն» բռնա-
կարութեան:

Հետեւաբար, խոստովանութեամբ չէ միայն, որ կ'ըլլան արուեստի
մեծ գործերը: Ընդհակառակն, խոստովանութիւններ կան, որ հետու են ար-
ւեստ ըլլալէ, գոհնիկ, տափակ ու զգուշի են: Գլուխ-գործոցները կու գան
նաեւ refoulementներէն, այսինքն՝ ծածկուած, զսպուած ըլլալու տառա-
պանքէն:

Պատկուածքի հարց է ամէնէն առաջ:

Ապա՝ transpositionի:

Պոստովանութեան պահանջը կ'աճի կամ կը նուազի դարէ դար՝ հա-
մաճայն ընկերային պայմաններուն: Կարեւորը տաղանդն է, որ կը պար-
տադրէ ինքզինք այդ պահանջին նուազման մէջ իսկ, վերապահութեան մէջ
անգամ: Այլապէս պէտք է ուրանալ մեծութիւնը դասական դրականութեան:
Արուեստագէտը արուեստագէտ է, խոստովանի կամ ոչ, բաւական է, որ գնէ
իր հոգին կամ ուրիշներու հոգին՝ գրածին մէջ՝ դեզիկութեամբ եւ ազնու-
ւութեամբ:

Խղճմտութեամբ մանաւանդ: Մեծ արուեստագէտները այդ խղճմտու-
թեամբ է, որ կը ճանչցաւին: Անո՞վ է, որ խոստովանութիւնները արժէք մը

կ'առնեն: Անո՛վ է, որ մեծ է Տոսթոյևսկին, ինչպէս կ'ըսէ նաեւ Ա. Միւսարէս.

«Au delà même de la culture et des mœurs, la véritable civilisation consiste dans la conscience, conscience de soi, conscience des autres, et relation des deux»:

Կարեւորը գիտակցութիւնն է նաեւ:

«Il n'y a pas de grand écrivain sans une riche connaissance de la vie et du monde», կ'աւելցնէ Միւսարէս:

**

Զարեան կը մտնայ այս շատ կարեւոր կէտը, թէեւ կը խօսի այդ մասին: Իմացական անաբնութիւններ է, որ կ'ուզէ, երբ կը զանգատի, թէ արդի արուեստագէտը զիամէից պարպուած, պատահականութիւններին ու դէպքերին ենթարկուած, մակերեսային մի անձնաւորութիւն է:

Ըստ իս, աստիճան դժին վրայ պէտք է բերել իմացականութիւնը, մա՛ն նաեւնդ՝ երբ մեր գրողներուն կ'ուղղուինք: Խոստովանութիւնը կու գայ անկէ ետք: Կախում ունի անկէ: Գիտակցութեամբ է, որ կը խոստովանի ա՛մէն մարդ, նոյնիսկ Հաւատացեալը, նոյնիսկ Փրէ՛ճօյտեան բժիշկին առջեւ ելլող հիւանդը: Իսկ անգիտակց, կամագործ մարդու խոստովանութիւնը արժէք մը չէ ո՛չ միայն խորհրդային գեղարարներէն բերնին մէջ, այլեւ տունտարակ ա՛մէն տեղ, ինչպէս կարելի է ենթադրել նաեւ Զարեանի խօսքերէն: Անհրաժեշտ են կամքն ու անձնականութիւնը: Արուեստի վաւերական մը շատացան գերբարդաշունեքու automatique, այսինքն՝ հիփոստացումով եղած խոստովանութիւնները: Անհրաժեշտ է իմացականութեան միջամտութիւնը՝ որքան ալ դժ ըլլան անանք անոր, կամ կեղծիքի աղբիւր նկատեն զայն: Իմացականութեամբ է, որ կեղծիքի, անվստահելի այդ կարողութեամբ է դարձեալ, որ կը հասնինք որոշ ճշմարտութեան մը:

Միւս կողմէ, չթէ մեր ամբողջ պատմութիւնը կը ներկայանայ սրտաբուխ հոգիի մը, սրտի անաբնութիւններով, վստահեցուցիչ է իմացական գեանի վրայ: Անով խաղ կ'երեւան գրականութիւն եւ քաղաքականութիւն, չիշելով տակաւին քաղաքականութիւնը աստուածարանական կամ այլ խոր վերլուծումներու, պատմութեան, ընկերարանութեան, հոգեբանութեան եւ փիլիսոփայութեան:

Պիտի ըստի, թէ իմացականութիւնը գործ չունի արուեստին մէջ: Յիշուած է, թէ վերլուծումները կը սպաննեն բանաստեղծութիւնը: Անշուշտ: Նաբեկացին վեր է Սէնթ Օկիւթինէն իբրեւ բանաստեղծ: Մեր ուզումն այլ այդ է արդէն, այն իմացականութիւնն է, որ, արուեստին մէջ՝ կը ձեռքապահէ ինքզինք ուղեղին շատ ճշգրիտ, բայց նաեւ շատ յարաբերական, վազանցիկ հաստատումներէն, դատողութիւններէն, որ գործ չունին մա՛նսանդ քանաստեղծութեան մէջ: Նման իմացականութիւն մը պէտք է transposer բնուիւ համար տպուած պահր, ապրեցնելու համար անով ընթերցողը: Զուր տեղը չէր, որ Ռէ՛մպօ ալիմիսթ կը կուչէր ինքզինք, Կամաւոր, մտածին, ուղուած աշխատանք մը կայ իր զերթուածներուն ետին: Կամաւոր այլապէս կերպման մը կ'ենթարկուի իր նայուածքը՝ հասնելու համար visionին, ինչպէս գիտէին արդէն կիրարկել իլ Կրէ՛տոյ շրջանի յոյն վանականները, ժա՛մերով մութ սենեակներու մէջ անշարժանալով:

Իմացականութիւն մը պէտք է՝ հոգիէն ընածը անկեղծ, դիտելի ձեւով մը տալու համար: Այլապէս իբրեւ բանաստեղծութիւն պիտի ընդու-

նէինք բոլոր տափակ, պաղ, իմաստակ խոստովանութիւնները, պատմութիւնները հոգիին:

Իմացականութիւն մը պէտք է ազդին, մարդկութեան բարորութեան, հրջանկութեան ի նպատակ առաքելական մեծ գործ մը տալու համար: Իմացականութիւն, գիտակցութիւն եւ խղճմտանք:

Այսպէս, ճակատագրուած է, որ արուեստը անի ճշմարտութեան եւ սուտին, սրբութեան եւ շարին, թեքնիքին եւ ինքնարուխ արտայայտութիւններուն միջեւ:

Կը գոհանանք անով, որ սիրտ եւ միտք կը դնէ զբաժին մէջ, խոստովանի կամ ոչ: Ձեռք պահանջներ անկարելին աշխարհի մը մէջ, ուր յարաբերական ու վիճելի է ամէն ինչ, նոյնիակ մեր ինքնութիւնը:

Եւ artificesները նուազագոյն չափի մը կ'իջնեն անպայման, երբ որակաւոր են այդ սիրտն ու միտքը: Եւ յանդիմութիւնը կը դառնայ առաքելութիւն մը: Գրողը իրապէս լին կու գայ սարկամտութենէն:

Առաքելութիւններ, զորս կը փնտնենք գրողին մէջ: Որովհետեւ, որքան ալ գաղափարուած ըլլանք կեղծիքներու խաթարումին, կը սիրենք անկեղծութիւնն ու ժաբութիւնը: Կը սիրենք անոնք, որ իրենց ճշմարտութիւնը կ'ընեն, կ'ատեն սուտը, կը խարազանեն ամբարիշտները:

Առաքելութիւններ, զորս կը գտնենք տառապանքով հասած մեր կարգ մը ազոց մէջ՝ Սուրբայէն՝ Ամերիկա, որ մաքրութեամբ կու սան թշուառ երդիքներու տակ ապրող հոգիներուն ժաբութիւնը՝ կամ Սփիւռքին ցաւը, հարաւ հայրենասիրութիւնը կը ջանան հասկնել երեւանի եւ Սփիւռքի կոչբերուն եւ խուլիբուն՝ արձակով, տաղերով, polemiqueով, երգիծանքով:



Շատախօսութիւնն եւ սակաւախօսութեան միջեւ կշիռք մը պահելու հարց է արուեստը: Անթ Օկրեսթիէնէն ետք բազմաթիւ օրինակներ պիտի գտնէք, հատորներ, որոնց խոստովանութիւնները հեռու են արուեստէն: Միւս կողմէն Վրայ, ինկեղծութիւններ են տնշուշտ անոնք, որոնք շատախօս չըլլալու համար բնաւ չեն խօսիր: Իրենց ճերթուածները կը մտան տախտակի պէս յոր, մանաւանդ՝ երբ իրենց այդ տափակութեան մէջ՝ տափակ են իրենց հոգիով, չունին խորհուրդի, ապրումի հորիզոն մը բացող տող մը:

Չարեանի խաղերը, հետեւաբար, պիտի չըլլային մեղադրելի, եթէ սիրտ ու միտք ունենային իրենց ետին, ըլլային հաւատարակչուեալ՝ անմեղութեամբ մը, անկեղծութեամբ մը: Այս է մարդկային հոգին, հակասական ծայրայեղութիւններու, մակընթացութեան եւ տեղատուութեան, բարութեան եւ չարի խառնարան մը: Այս բոլորով է, որ կենդանի է արուեստի գործ մը: Կարեւոր է չափը:

Այսպէս, Չարեան, ըլլալով հանդերձ մեծ արուեստագէտ մը, կը ներկայանայ պակասով մը, զոր ունենալ կը ձեւացնէ խօսելով խոստովանութեան մասին: Ան կրնար մեծ ըլլալ, նաեւ չարին պակասով, ինչպէս կը տեսնենք ոմանք մեծ՝ իրենց ծայրայեղութիւններով, չափազանցութիւններով: Բայց անոնք գերծ չեն խղճմտութենէն, անմեղութենէն, անկեղծութենէն նաեւ: Այսպէս է, որ կենդանի են Տոսթոյեւսկիի, Սթանսլի, Պալլաքի հերոսները, որոնք կը պատկերացնեն կեանքը, ցեղը, մարդկային ու ազգային ձգտումները, ցաւերը, կարօտները, մինչ Չարեան կ'արհամարհէր զգոյշ ամբոյսը...

**

Կը յիշեմ բարեկամ մը, որ խոստովանութիւն մը ըրաւ օր մը, երբ մեռնելու վրայ էր:

«Քառորդ դար առաջ, գիշեր մը, կապելէ ետք աչքերս, կար դռնապան մը առաջնորդեց գիս սրահէ մը ներս, նստեցուց աթոռի մը վրայ: Երբ լսեցին մեր ոսնածայները, որ ազգած էին վրաս արձագանգելով լռին ու անհատնում նրբակցի մը մէջ՝ մուրհի մը հրեք հարուածները որոտացին յանկարծ: Ոտքի ելլող բանակի մը ազմուկը լսուեցաւ. հարիւրաւոր սուրեր հնչեցին իսկոյն՝ իրարու զարնուելով:

«Թատերակամ, ծիծաղելի ու նոյն ատեն ահաբեկիչ բան մը կար այս բալոյրին մէջ: Երջապատուած էի կարծես ասպետներով, որ, գիտէի, առևտրակամներ, բժիշկներ, պետական պաշտօնեաներ ու ոսկիի տառածախով զբաղող գայլեր էին առաւելապէս: Անոնք, հրեաներ ու լրվանթեմներ, Փրանսացիներ ու հայեր. իրարու ինչ կէտ, իրարու օգնելով՝ իրարմէ օգտուելու համար միայն, կ'ուզէին հարցաքննութեան ենթարկել գիս: Իրենց շարքերուն մէջ կրնայի մտնել՝ զահացում տալէ ետք միայն իրենց հարցումներուն:

«Հին Եգիպտոսի մէջ ան, որ լոյսին պիտի արժանանար, արժանի ըլլալու համար աշխարհի գազտնիքներուն տիրացած մարդու տիտղոսին, ստիպուած էր անցնելու նեղ, խաւար գետնուղիէ մը, ճահիճներու, մածուցիկ ժայռերու, ցեխերու, կարիճներու, օձերու եւ կոկորդիլոսներու մէջէն: Նման բան մը կը գահաճշդէին կարծես ինչ:

«Աթռառ, որուն վրայ նստած էի՝ կը ֆակուէր օձի մը պէս, կը սահէր տակէս: Սուրերը, որ կը յիշեցնէին իշխանին սպասող մեր Սօսեաց Անուարին խորշակը, ահաբեկիչ էին մերք՝ իրարու հետ կռուող երեշտակներու եւ չար ոգիներու սուրերուն պէս:

«Բարութիւն, գեղեցկութիւն, խորհուրդ կար այս բալոյրին ետին, ուր, գիտէի, մեր ցեղին արեան մէջ իսկ ձեռքը թաթխած՝ միջագային, թուերը ամէն կողմ երկարած՝ դաւեր, տրամներ ստեղծող երէշի մը իշխանութիւնը կը տիրէր: Ու անհանգիստ էք անշուշտ խիղճս: Կ'ուզէին ընդունուիլ եւ ցանկալով հանդերձ քարութիւնն ու խորհուրդը, լոյսը, գերծ չէի անձնական շահախնդրութենէ:

«Լսելի եղաւ մուրհը կրկին: Լսեցին սուրերը: Եւ հետուէն եկազ խիստ ձայն մը հարցուց ինձի.

«Que pensez vous de la conscience humaine ?

«Մնացի շուարած, դէմքս կոյրի մը պէս ձայնին կողմը դարձուցած: Խաւարի մէջ էի եւ հարիւրաւոր աչքերէ եկող անձկաբեր լոյսի մը տակ կը զգայի գիս:

«Պատասխանեցի վերջապէս: Ձեռք յիշեր, թէ ի՞նչ ըսի: Ոչ շատ բան անշուշտ: Բայց, ինչպէս կ'ըլլայ salles des ventesներուն մէջ, մաւրհին հարուածները որոտացին կրկին եւ մէկը հանեց աչքերուս վրայէն կապը, գիս լոյսին նայելու արժանի յայտարարեց:

«Լոյսը չէր անշուշտ: Բայց անով անցուցի կեանքս: Կար ի վերջոյ որոշ լոյս մը, որոշ յոյս մը եւ ձգտեցայ, որ այդ լոյսը ըլլայ աւելի եւ գտայ շուրջըս՝ շատ մը ինձի պէս մտածողներ... Մնացի: Օգտուեցայ՝ արպէսգի օգտակար ըլլամ եւ եզայ...»:

Կը յիշեմ մեր աշխարհէն հեռացողին այս խղճմտութիւնը: Արդարեւ, բարեգործ հոգի մըն էր:

* *

Յուզիչ ու գնահատելի են բոլոր անոնք, որ իրենց հոգին կը ձօնեն մարդկութեան:

Ու ամբողջական նուիրում, անձնութիւն մը կայ ամէն մեծ արւեստագէտի մէջ: Կ'այբի: Մեծ ողբերգութիւն մը նաեւ: Ինչ արամ՝ անելու, մեծնալու, ապրելու եւ ստեղծելու համար: Ինքզինք պարտադրելու եւ աշխարհը յեղաշրջելու համար: Յուզիչ ու գնահատելի են արուեստագէտները:

Դուք հաւատում ամբողջական
Արձակեցիք աղանիներն սպիտակ
— Որոնք իրենց բռնիքին մէջ առաջին
Զարնուեցան մարդերն —
Դուք հաւատում ամբողջական՝
Լուս ու խրախոս՝ արքաներուն առջեւ եզաք
Կալանաւոր ու գերիշխան,
Մերժեցիք լուծն երջանկաւթեան
Եւ վատաբեան ամէն արարք,
Քացիք այնպէ՛ս կուրծքերը ձեր
Ընդդէմ մարդոց կիրքերուն՝
Սիրոյն համար տիեզերքի մ'անասեման...

Մեր լուսպոյն քերթողներէն՝ Բ. Քօփալեանի այս տողերը հողիէս կը խօսին:

* *

Գնահատելի է նաեւ Զարեան սնշուշտ, հակառակ մեր կարգ մը դիտողութիւններուն, ու յուզիչ՝ հակառակ իր տառապանքի պակասին՝ իր թափած ճիւղով, բերած մնայուն զեղեցկութիւններով, հայեցիութեամբ, իրապէս արուեստագէտի խառնուածքով:

Ու ինչպէս կ'ըսէ Քօփալեան՝ իր քերթուածին շարունակութեան մէջ.

Թէեւ ցեխի մէջ ու արեան
Անյայտ ու մութ այդ կեանքի խոր կրկեսին՝
Մենք դէպի ձեզ կ'երկարեմք արտերը մեր
Որովհետեւ կարելի չէ յուսահատիլ
Ձեր մարդկային կամքին առջեւ ու տեսիլին...

(«Ակոս», Ը. տարի, թիւ 1)

Ն. ՍԱՐԱՅԵԱՆ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Նիկողոս Սարաֆեան

Եւ “ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ”ը

Մարդ արարածին ծնած վայրը որ-
քան՞՞վ կ'ազդէ իր ճակատագրի վերի-
վայրուճներուն վրայ: Ահա կենսական
հարց մը, որուն լուծումը կը թողունք
հմուտ հոգեբաններու եւ վաւերական
աստղագուշակներու:

Բանաստեղծ Սարաֆեանի պարագա-
յին կրնանք հաստատել, որ անոր ծնընդ-
եռն վայրը եւ պահը, անպայման որ ո-
րոշ չափով նախասահմանեցին իր կեան-
քին դանազան հանգրուանները:

Նիկողոս Սարաֆեան ծնած է 14
Սեպտեմբեր 1905ին, Պոլսէն Վառնա
մեկնող նաւուն վրայ: Եւ անմիջապէս մեր
միտքը կու գայ ուրիշ գրագէտի մը, Ար-
փիար Արփիարեանի ծննդեան պարագան,
որ նոյնպէս տեղի ունեցաւ Սամսոնէն Պո-
լիս դասող նաւու մը վրայ: Արփիարեա-
նի խռովայոյց ու թափառական կեանքը
ծանօթ է բոլորիս: Անոր յաճախակի ճամ-
բորդութիւնները կարծէք արդիւնքն էին
բնածին պահանջի մը:

Տեղափոխուելու նոյն պահանջը բոյն
դրած է մանուկ Սարաֆեանի հոգիին
մէջ: Մինչեւ տասը տարեկան՝ ան կը յա-
ճախէ Վառնայի ճիւղերէն եւ ազգային
վարժարանները: Համալիսարհային Ա-
ռաջին պատերազմին սկիզբը, մեծ եղբո-
րը հետ կը մեկնի Ռումանիա: Ատեն մը
կը մնան Պուքրէշ, յետոյ կ'անցնին Կա-
լաց: Ռումանիայէն կ'անցնին Ռուսիա:

Նախ կը հաստատուին Օտեսա, յետոյ
Ռոսթով եւ, վերջապէս, Նովորոսիք,
կովկասեան լեռներուն ստորտար: Սա-
րաֆեան 15 տարեկան պատանի մըն է,
երբ կը ծագի Հոկտեմբերեան Յեղափո-
խութիւնը: Պատանին, որ եղբորը դրա-
դումներուն պատճառաւ տոնաձին մնա-
ցած է այս օտար քաղաքին մէջ, կ'որոշէ
ցուրտ ձմեռով վերադառնալ իր ծնողքին
մօտ, Վառնա:

Տակնուվրայութիւնը այնքան մեծ է,
որ ճամբուն մեծ մասը կը կտրէ քաշելով:
Արդէն վերջ գտած էր Համալիսարհային
Առաջին պատերազմը եւ շատ մը հայեր
կը վերադառնային Պոլիս: Նոյնը ըրաւ
Սարաֆեան ընտանիքը: Սարաֆեան, ո-
րուն ուսումը կիսատ մնացած էր, սկսաւ
յաճախել Կեդրոնական վարժարանը, զոր
աւարտեց 1922ին:

1923ին, կրկին կը վերադառնայ Պուլ-
կարիա, կ'անցնի Ռումանիա եւ, վերջա-
պէս, Փարիզ, ուր կ'անցընէ կեանքին
մնացեալ յիսուն տարիները:

Թէ ի՞նչ եղաւ երկտասարդ Սարաֆե-
անի կեանքը այդ լոյսի եւ տառապանքի
մայրաքաղաքին մէջ, այդ պէտք է հար-
ցընել իր եղբրաբախտ գրչեղբորը՝ Վազ-
գէն Շուշանեանին: Սարաֆեան ինչ շատ
քիչ արտայայտուած է այդ մասին՝ իր
ինքնամփոփ խառնուած քին պատճառով,
Փարիզի մէջ, Սարաֆեանի էութիւ-

նը կ'ենթարկուի տեսակ մը երկպառակութեան: Իր հոգին ու մարմինը կը սկըսին զործել անջատ: Օրական ապրուստի հրամայականը կը լղթայէ անոր մարմինը տողաչար մեքենայի մը ստեղծներուն առջեւ, ազատ ձգելով հոգին, որ չէր դադրած թեւածելէ անցեալի ճամբաներուն վրայ:

Սարաֆեան մարդը, ամէն առտու, հազարաւոր աշխատուորներու պէս դուրս կու գար Վենսէնի իր բնակարանէն, կ'իջնէր մեթրո տանող աստիճաններէն վար, մինչ հոգին կը սաւառնէր դէպի հարաւ ու դէպի արեւելք, դէպի Միջերկրականի կապուտ ջուրերը, որոնք օրօրած էին իր ֆինդաւայր նաւը...

Իր մեծագոյն երազը եղած էր բնակիլ իր սիրած ծովուն մօտերը, Քոթ ա'Սզիւրի վրայ, եւ իր արձակուրդները անցընելու համար կ'երթար Իտալիա, Սպանիա: Իսկ միւս եղանակին, Կիրակի առտունները, կը սիրէր ճեմել Վենսէնի անտառին մէջ, քալել անոր արուեստական լիճի կերպը, մինակը, ծառերով շրջապատուած, խոր լուսթեան մէջ, մինչ անդին զեռ կը ննջէր հսկայ քաղաքը:

Իսկ երանութեան պահերը տեղի կ'ունենային գիշերները, երբ թուղթին կը յանձնէր իր հոգիին ապրումները եւ տեսիլքները:

Ու Դեկտեմբերի զինք մը, երբ տողի մը վերջաւորութեան՝ զրիչը բռնած կը սպասէր ներշնչումի, գեղեցիկ ու սեւ մուսան մօտեցաւ իրեն, զրիչը առաւ ձեռքէն, ու զլուխը շոյելով մօտեցուց մայրական կուրծքին, որովհետեւ բանաստեղծներուն համար, մահը եղած է միւս բարի, սեւեր հազած մեղամաղձոս եւ գորովագին մայր մը:

Իբր դրագէտ, ըլլա՛յ արձակ, ըլլա՛յ չափածոյ գրութիւններուն մէջ, Սարաֆեան մեզի կը ներկայանայ իբր բանաստեղծ:

Կանուխէն աշխատակցած է արտա-

սահմանի լաւագոյն պարբերաթերթերուն՝ «Հայրենիք», «Մեմֆ», «Զուարթնոց», «Անահիտ», «Ալտոս», «Նայիրի», «Բագին»:

Իրմէ հրատարակուած են հետեւեալ հատորները.

- «Անջրպետի մը գրասուրբ» (քերթուած), Փարիզ, 1928
- «14» (քերթուած), Փարիզ, 1933
- «Իշխմանուհի» (միպակ), Փարիզ, 1934
- «Տեղատուութիւն եւ Մակրոքացութիւն» Փարիզ, 1939
- «Միջնաբերդ» (քերթուած), Փարիզ, 1946
- «Միջերկրական» (քերթուած), Պէյրութ, 1971

Պարբերաթերթերու մէջ ցրուած իր գրութիւնները կրնան լեցնել բազմաթիւ հատորներ, իսկ անտիպ ձեռագիրներու քանակը անձանօթ կը մնայ մեզի:

Սարաֆեան արուեստագէտ մըն է բառին բուն առումով եւ դիտէ, որ արւեստը կը զարգանայ միայն առանձնութեան ու լուսթեան մէջ, հետու թոհուրտէն եւ ամլացնող ազմուկէն: Ան ազբնցաւ փոքուկրեայ աշխարակին մէջ, առանց սակայն ամբողջովին խզելու իր կապը կեանքէն ու մարդերէն եւ, մա'նաւանդ, իր հայ եղբայրներէն:

«Միջերկրական» հատորը քերթուածներու հաւաքածոյ մըն է՝ տպուած Պէյրութի մէջ, 1971ին, այսինքն՝ բանաստեղծին մահէն տարի մը առաջ:

40 էջերէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ եօթը քերթուածներ, որոնց առաջին երեքը՝ «Տառագարան», «Ալիքներ» եւ «Ժայթփ» կը կազմեն «Միջերկրական»ի բանաստեղծութիւնը, որ անունը տուած է ամբողջ հատորին:

Միւս չորս կտորները կը կոչուին՝ «Լուսածագ՝ ծովային Ալպեաններու», «Անտառին մէջ», «Լուսնի լոյս», «Վերացումի նաւը»:

Թէեւ գրուած տարբեր ժամանակներու մէջ՝ 1957էն մինչեւ 1970, այս եօթը կտորները կը կազմեն ամբողջութիւն մը, ա'յն իմաստով, որ անոնց ներշնչման աղ-

բիւրը նոյնն է՝ մարդը, իսկ մարդը տիեզերքի եւ բնութեան առջեւ:

Իր առաջին գործերուն մէջ, Սարաֆեան ներշնչուած էր արդի կեանքէն եւ ջատագոված էր մարդուն յառաջդիմութիւնը, ինչպէս ցոյց կու տան կարգ մը փերթուածներու վերնադիրները՝ «Սաւառակ», «Կայարափնի Գէմ», եւ այլն: Սակայն բանաստեղծը՝ յուսախաբ արտաքին երեւոյթներէ, ինքզինքը մեկուսացած զգալով օտար մարդոց այդ ուրիշանոսին մէջ, զիմած է ներշնչման մեծագոյն եւ անսպաս աղբիւրին, որ կը կոչուի բնութիւն: Երգած է անտառները, դաշտերը, երկինքը եւ ծովը: Մէկ խօսքով՝ Սարաֆեանը կարեւի է դասել Էնսմիւք, անջրլիտայիմ նիւթերով շահագրգիռ բանաստեղծներու շարքին մէջ:

Այս հաստորին մէջ տիրապետող երեւոյթը ծովն է:

Հայ գրականութիւնը, ընդհանուր առմամբ, չէ զարգացուցած ծովու քեման: Ասոր պատճառը շատ պարզ է: Բան մը երգելու համար պէտք է ընտանի ըլլալ անոր, պէտք է ապրած ըլլալ անոր հետ: Տրուած ըլլալով Հայաստանի աշխարհագրական դիրքն ու կառոյցը, հայ գրագէտները առիթ չեն ունեցած ճանշնալու ծովը: Անոնք ասելի երգած են յեռները, դաշտերը, վաղող ջուրերը: Ծիշող է, որ մեր գրագէտներուն էջերուն մէջ ակնարկութիւններ չեն պակսիր ծովու մասին, բայց ասիկա եղած է պատահականօրէն, ճամբորդութեան մը ընթացքին, կամ դրական պատկեր մը ստեղծելու համար:

Ուրեմն, Սարաֆեանի վերջին գործը նորութիւն մը կը բերէ մեր գրականութեան, եւ իրմով՝ ծովը կը դառնայ ներշնչման աղբիւր եւ գրականութեան նիւթ:

Մովերու մէջ ամէնէն բանաստեղծականը անկասկած որ Միջերկրականն է: Անոր շուրջը շարուած են մէկական մարգարիտներ եւ անոր կապոյտ մետաղին վրայ նստած են մէկական գոհարներ:

Ո՛ր մէկը յիշել այդ թանկարժէք մարգարիտներէն, որոնց անունները կը

պարունակեն յիշատակներու եւ ողբկոչումներու ամբողջ աշխարհ մը. Քաղկեթոն, Սփաքս, Աղեքսանդրիա, Սայրս, Պիպլոս, Սելեւկիա, Փայաս, Մերոսին, Իզմիր, Արկոս, Վենետիկ, Նափոյի, Նիս, Վալանս, Մայակա, Թարակոնա...:

Ո՛ր մէկը յիշել այդ թանկարժէք գոհարներէն, որ կը զարգարեն անոր կապոյտ ջուրերը... Պալէարները, Իսփիա, Քափրի, Քորսիքա, Սիկիլիա, Կըրետէ, Կիպրոս եւ յունական այն հազարաւոր կղզիները, ուր աստուածներ եւ աստուածուհիներ բնակութիւն հաստատեցին:

Ո՛ր մէկը բանաստեղծը, արուեստագէտը կամ վիպասանը չէ ներշնչուած այդ ծովէն, որուն շուրջ զարգացած են աշխարհի մեծագոյն քաղաքակրթութիւնները եւ կրօնքները: Յիշենք միայն քանի մը անուններ. Հոմերոս, Եսթպլորիան, Պայրըն, Ենիի, Լամարթին, Վալէրի, Էւայն...:

Ի՞նչ կը ներկայացնէ Միջերկրականը հայ բանաստեղծին համար:

Ջուրի հսկայ տարածութիւն մը, արեւ ու գոյն, գեղեցկութիւն ու կեանք, ինչպէս օռէէ մահկանացուի համար: Միջերկրականը այն հայելին է, ուր կը պատկերանայ դարերու պատմութիւնը, ուր կը նային Արեւելքն ու Արեւմուտքը՝ գլուխ գլխի տուած: Եթէ Սարաֆեանի կանգնած արեւ օտար է, ասկայն իր ոտքերը լիզող ջուրը այն նոյն ջուրն է, որ կը շոյէր իր մանկութեան եւ անցնալին արեւը:

Ինչպէս անսանձ՝ Սարաֆեան ունեցաւ թափառական երիտասարդութիւն մը: Երջեցաւ քաղաքէ քաղաք, բայց ոչ մէկ ատեն հեռացաւ Միջերկրականէն, եթէ ընդունինք, որ աշխարհագրականօրէն Սեւ ծովն ալ մաս կը կազմէ վերոյիշեալ ծովուն:

1923ին, Սարաֆեան բնակութիւն հաստատեց Փարիզ, ցամաքային քաղաք մը, որ կը գտնուէր իր սիրած ծովէն մօտ 700 քիլոմետր հեռու: Տիւ ու դիւշեր, Սարաֆեան տառապեցաւ այդ հեռուորութենէն, սիրահարի մը պէս, որ

կորսնցուցած է իր սիրուհին: Իր արձա-
կուրդները կ'անցընէ անոր ափին եւ կը
վերադառնայ աւելի ոգեւորուած եւ ա-
ւելի սիրահարած:

«Միջերկրական» հատորը այդ 50
տարուան բաժանումին մեղմադճոտ
երգն է, երիտասարդութեան երազնե-
րուն ոգեկոչումը:

Բանաստեղծը, փախուտ տալով
հրաւիրի ցուրտէն ու մռայլ մշուշներէն,
այդ հաղաբարձ մարդոց պէս, ահա
հասած է իր ուխտատեղին: Մոռցուած
են քաղաքներու միապագա ու գորշ
անձկութիւնները: Շուրջը կը փրէ ու-
րախութիւն, հուռեա, էբք ու ծիծաղ:

Եկեր եւ ծով, կարօտով, եւ կապայտ
ծով է անհուն...
Առաւօտուն, հիշ, խոյտեմէ՛
ծիծառներու, ախաղ:

Բանաստեղծութիւնը, որ քոյրն է Է-
բաժնուրթեան, կ'որդեգրէ յաճախ հա-
մանուազի մը ընթացքը՝ համանուագ մը,
որ կը զարգացնէ յաճախ կեդրոնական
քեմա մը: Այդ քեման նախ կը թելա-
գրուի մեղի քանի մը ձայնակներով,
կ'ընդարձակուի կամաց-կամաց ու կը զը-
րուէ գործին ամբողջութիւնը: Ռավէլի
«Պալեոս» ամէնէն աչքառու օրինակն է,
կեդրոնական քեմայի մը զարգացման:

Սարաֆեան իր գործին կը մօտենայ
նոյն մտադրութեամբ: Երկրորդ տունէն
սկսեալ այդ կեդրոնական քեման կը
դառնայ զգալի:

Միջերկրական, Արեւելք՝
Արեւմուտէի մէջ, երկիր...
Եւ մանկութեան աշխարհիս նման
Ժայռեր եմ կարմիր,
Այդ աշխարհիս չուրերուն նման
Ծովն է իր կոծով:

Այդ քեման բանաստեղծին բառերովն
իսկ՝ յարութիւն է անցեալի, քիչ մը ան-
դին կը շեշտուի գաղափարը:

Այստեղ տեսածս է նման՝
Մանկութեան մէջ տեսածիս,
մաճուր, խաղաղ, անտաճեմն,
Եւ նման է ապագայ աշխարհի
մեր երազին:

«Յարութիւն է անցեալի» քեմային հետ
դուրահեռ կը զարդանայ, երկրորդ Քե-
մա մը, որ քերթուածին ընթացքին հետ
կը դառնայ աւելի եւ աւելի տիրական...

Այս տխուր շեշտին եւ հաստատու-
մին վրայ կը վերջանայ «Միջերկրական»
քերթուածին «Յառաջաբան»ը:

Ու կը սկսի երկրորդ մասը՝ «Ալիք-
ներ», ուր կը զարգանայ այդ երկրորդ
քեման, զոր պիտի կռենք անցեալի ա-
հուար տեսիլները:

Երկրորդ տունին վերջաւորութեան
կը յուսին սրտակեղեք քանի մը ձայնա-
նշիւներ. «Ափէն ողբեր կը յուսին»:

Բայց ծովը չէ զարգած լոյս ու խայ-
տանք բլուլէ: Բնութիւնը կարծես ան-
տարրեր է բանաստեղծին մռայլ հոգեվի-
ճակին: Նոյնիսկ դիշերը անկարող է
զազրեցնելու համայնական եւ մարդկա-
յին խանդավառութիւնը: Գողգոթաներ
կան հետուն. ճիշտ մը չէ ասիկա, այլ գո-
ռում, ազադակ, որ կը թողացնէ ժամա-
նակներու անդատանները:

Եւ յուսալքուած բանաստեղծը կը
չարունակէ իր մռայլ ու տրտում երգը:

Ուրեմն խուսար է եւ յուսահատու-
թիւն հայ բանաստեղծին համար, որուն
ամէնէն դեղեցիկ տեսարաններն իսկ կը
ներկեն վիշտ ու կարօտ: Ուրեմն ամ-
պերու մէջ սաւառող Ալպարթոսը, յու-
սարեկ եւ պարտաուն, հրաժարած է թե-
ւածելէ, ու ինքզինքը պիտի յանձնէ ո-
չընչացումի:

Հետեւեալ շորս տունները կը հաստա-
տեն բանաստեղծին այդ բեկուած հոգե-
վիճակը...

Բանաստեղծը յուսահատած ծովուն
անտարբերութենէն, կը նայի դէպի վեր
— երկինքէն սպասելով Ժպիտի մը, յոյսի
նշույլ մը: Բայց հսկասակ Աստուածա-
վառ յայտերին գոյութեան՝ հոն ալ կը

տիրէ լուս անտարբերութիւն մը, որ իրեն կը յիշեցնէ մահասարսուռ տեսարաններ:

Հոս բանաստեղծին ոճը եւ պատկերները կը դառնան Տանթէակոն...

Ան կը շարունակէ իր մութ խորհրդածութիւնները... մինչ տեսարանը կը դառնայ անդոճական՝ հակառակ տխրեցնելու երգին եւ լուսնի կաթնաթոր լոյսին:

Մղձաւանջը, որ անհատական բնոյթ ունէր, հիմա դարձած է համազգային: Հայ մարդն է, հայ բանաստեղծը, որ կր տառապի, որ կը վերջի՛նէ այն դժոխային եւ սեւ օրերը, որոնք պատեցին իր ամբողջ ազգը, զիականեր եւ կմտխփներ մը դէլով իրենց ետին...

Եւ այս անդունդին մէջէն, այս երգիծականօրէն գեղեցիկ գիշերուան խորերէն, բանաստեղծը կը լսէ անցեալին կանչը, որուն քաղցրութիւնը դառն կ'ընէ ներկան:

«Կան երազներ, կան, սակայն եւ երազել չեմ կրնար, Մի՞նչ հին երգեր, կարտներ եւ ազօրքներ կը յիշեմ, եւ կը յիշեմ ծնունդն այդ եւ կերտումներ հոյաշէն: Անցեալ, գալիք կ'ընեն դառն...»

Այս բոլորը մոռնալու համար, բանաստեղծը կը հեռանայ մարդոցմէ եւ քաղաքներէ, բայց իր հայութիւնը՝ խղճի ձայնին պէս կը հալածէ զինք եւ կը բաժնէ միջավայրէն եւ շրջապատող մարդոցմէ: Եւ ահա այս երկպառակութիւնն է, որ կը ծանրանայ իր ուսերուն վրայ...

Եւ սակայն բանաստեղծութիւնը աղջիկն է արեւածին Ապոլոնի, եւ որքան ալ անիկա կարողութիւնը ունենայ սուղակու խաւարի եւ յուսահատութեան բնորոշութիւններուն մէջ, չի կրնար բնակութիւն հաստատել հոն, որովհետեւ լոյսը, խորհրդաւոր մագնիսի պէս զինք միշտ վեր կը քաշէ, եւ ան՝ մոխիրներէն վերածնող փրկիչին պէս կը խոյանայ զէպի վեր,

զէպի անհունը, զէպի յաւիտենականը, զէպի ուրախութիւնը:

«Միջերկրակամ» բանաստեղծութիւնը կը վերջանայ երրորդ մասով մը, որ կը կոչուի «Փայթ»:

Գիշերը կը սկսի կամաց-կամաց տեղի տալ լուսարացին: Խաւարային մղձաւանջը կը փարատի եւ, հեռաւոր աստղի մը պէս, յոյսը կը ծագի բանաստեղծին հոգիին մէջ: Ան կը մոռնայ իր մեղադրանքները մարդկութեան եւ կեանքին հանդէպ եւ կ'ապաւինի մարդկային վստածութեան, ա'յն մարդկութեան, որ կը տառապի, կը կերտէ: կ'ապաւինի մանաւանդ իր հայութեան, որ անբաժան մասն է այդ տառապող եւ ստեղծագործ մարդկութեան, որ ցուերով կու գայ վեր...

Հատորին մէջ տեղ գտած է «Լուսածագ՝ ծովային Ալպեաններու» երկարաչունը քերթուածը, որուն կը յաջորդեն երեք ուրիշ կտորներ՝ «Լուսնի լոյս», «Անտառին մէջ», «Վերացումի նար»:

Հոգեմիճակի նոյնութիւն՝ ուրախութիւն, յուսալքում, բայց յոյս, եւ հաւատք մարդկութեան եւ հայութեան արժանիքներուն վրայ...

«Լուսածագ՝ ծովային Ալպեաններու» քերթուածը, գրուած է 1970ին, այսինքն՝ «Միջերկրակամ»էն 10 տարի ետք, բայց բանաստեղծին հոգեմիճակը կը մընայ նոյնը: Միայն հոս շեշտը դրուած է հայութեան ճակատագրին վրայ: Մոյն ալ անշուշտ բացակայ չէ այս բոլորէն, եւ ան ալ կու գայ իր գոռ ձայնը խառնելու բնութեան համանուագին: Ալպեան լեռները՝ բանաստեղծին կը յիշեցնեն ուրիշ լեռներ, ուրիշ օրեր, ուրիշ ապրումներ:

Յաջորդ երեք քերթուածները ունին աւելի քնարերգական եւ աւելի զգացական բնոյթ: Հոն տողերուն ներդաշնակութիւնը աւելի զգալի է...

Սարաֆեան բծախնդիր ու խստապահանջ գրագէտ մըն է: Անոր քերթուածները եւ նոյնիսկ արձակը կը նմանին կարծր կեղեւով ընկալչներու, որոնք միջու-

կը կարելի է երեւան հանել մեծ պրպրատումներով: Ան ինքզինք չի յայտնէր անփորձ ու մակերեսային ընթերցողին, այլ անոնց, որ կը սիրեն պեղել ու խորասուզուիլ:

Սարաֆեանի տողերը չեն շոյել մեր դպանութիւնները, չեն քնացներ մեր հոգին թմբոցուցիչ օբօրներով: Անոնք ունին ժայռերու կարծրութիւնը եւ պողպատին ճկունութիւնը: Անոնք կը վիրաւորեն, կը խոցեն, անհանգիստ կ'ընեն մեզ:

Սարաֆեան քնարերգակ բանաստեղծ մըն է, դիւցազներգական շէշտով: Ունի խոր երեւակայութիւն ու բարձր թոխչք, եւ զգայուն է ծայր աստիճան, բայց միշտ կը զսպէ իր զգացումները, սրովհետեւ անոր մտքին թռիչքները կը գերազանցեն սրտին տրոփները: Մէկ խօսքով՝ կարելի է գայն գասել փիլիսոփայ բանաստեղծներու շարքին:

Ընդհանրապէս բանաստեղծներու արտայայտութիւնը կ'ըլլայ մէկ աստիճանով՝ այսինքն՝ անոնց զգացումները եւ դադափարները կ'որդեգրեն իրենց սրտին տրոփները: Սարաֆեան կ'արտայայտուի երկու հանգրուանով, եթէ կարելի է այս բառը գործածել ստեղծագործութեան առընչութեամբ: Զգացումներուն նախ կուտայ իր սրտին տրոփները, յետոյ գանոնք կը յանձնէ իր մտքի դասարանին, ուր տնոնք կ'ենթարկուին աւելի բարդ եւ աւելի մանրազնին այլափոխութեան: Եւ կը ծնին բիւրեղացած, գրեթէ մերկ տողեր, կառուցուած մեծ ճարտարութեամբ, որոնց բարդ շարահետութիւնը մեզի կը յիշեցնէ անձանթ ժոյրակներու տարաշխարհիկ տեսարանները...

Սարաֆեան յաջողած է խորքին եւ ձեւին տալ համերաչի ընթացք մը, առանց դժուար մէկը միւսին:

Բանաստեղծութիւնը պէտք է ունենայ աւելի ճոխ կառոյց մը, քան արձա-

կը: Անոր տողերուն մէջ հիւտուած պէտք է ըլլան նմանութիւններ, շրջումներ, պատկերներ, այլաբանութիւններ:


Սարաֆեան այս հարստութիւնները չի մսխեր, այլ կը գործածէ մեծ ճարտարութեամբ ու ժուժկալութեամբ: Ի պահանջել հարկին ան կը ստեղծէ վաւերական եւ ինքնուրոյն պատկերներ, որոնցմէ ահա քանի մը նմոյշ.

Ջուրիք, կանաչ, գերբնայիմ ձեռքերու
կու տան լայս:
Ջուրիք կը խուժեն յայտերու պէս...
Ալիք է մեքք, փայլալուզ, նման հնձող
նմանգալիմ...

Բանաստեղծութիւնը ներդաշնակութիւն է եւ կշռոյթ: Եթէ ընդհանուր ուսմամբ տնոնք մեծ ճիգով կը զգացուին իր երկար օտանաւորներուն մէջ, բայց դիւրաւ երեւան կու գան միւս կարճ քերթըւածներուն եւ, մանաւանդ, ՎԵՆԵՐԻ լայսնային մէջ, որուն բնութիւնը աւելի քնարերգական է:

Մեր գրականութիւնը վերջին տարիներուն տուած է գործեր, որոնք կը հասնին միջազգային յափանիւի, եւ ՎԻճԻՆԻՐԱԿԱՆԻ Հատորը կընայ պատիւ բերել ոեւէ մեծ ազգի պատկանող բանաստեղծի: Հայ միաքը այսօր աւելի արթուն է, քան երբեք, ան վերագտած է իր երբեմնի բարձրութիւնը եւ ստեղծագործական ստղանդը: Եթէ աւիթ արուի եւ մթնոյրտ ստեղծուի, մեր դրապէսները եւ բանաստեղծները կընան արտադրել արժէքաւոր գործեր եւ իրենց ձայնը լրանելի դարձնել գրականութեան եւ արուտի համամարդկային տանարին մէջ: Պէտք է հպարտանանք անոնցմով եւ հըպարտօրէն նայինք դէպի ապագան եւ աշխատինք, որպէսզի մեր ազգը ծնունդ տայ նոր Սարաֆեաններու, նոր Մեակներու եւ նոր Պէլիթաշիաններու:

Ն. Զ.



ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԷԹ

ԱՆՁԻՆ ՓՆՏՈՏՈՒՔԸ

Հ Ա Յ Ա Յ Ո Ւ Ց

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Երբ ամերիկացի հրատարակիչ Հէր-
պլըթ Պլո կը ղրուչացնէր Պէքէթը, թէ
հրատարակող անգլերէնէն եւ ընտրելով
Ֆրանսերէնը, ան որոշ բան մը պակե-
ցուցած կ'ըլլայ զրոյի իր անհատակա-
նութենէն, Պէքէթ կը պատասխանէր. «Կը
հաւատամ. որ ամհատակամութեանս եւ
խառնուածքիս մէջ կան որոշ մասեր,
գորս ֆրանսերէն լեզուս իրաւումք ունի
տկարացնելու եւ, ի հարկին, բոլորովին
զննելու»: Այսուհանդերձ, երբ մենք ու-
սումնասիրենք Պէքէթի իսկ գրչով կա-
տարուած իր գրութիւններուն անգլերէն
Քարգմանութիւնները, կը տեսնենք, որ
ան մեծապէս օգտագործած է Ֆրանսե-
րէնի կարգ մը արտայայտութեանց նրբե-
րանգային կերպերը:

Պէքէթի գրականութեան նման գրա-
կանութիւն մը, որ կը բխի ուղեղի ամե-
նախոր խաւերէն եւ կը ներգործէ անձ-
կութեան ամէնէն մթին վիճերէն ներս,
ենթակայ է խորտակումի՝ զէպի զիրու-
թիւն եւ լարծունութիւն ձգտող ամէնէն
չնչին մէկ փորձին իսկ պարագային. այդ
գրականութիւնը պէտք է ըլլայ պարզա-

պէս ծնունդը ցաւագին պայքարներու,
արտայայտում՝ իրենց համար յատկա-
նշական եղող ոճով եւ միջոցներով: Պէ-
քէթի մասին գրած իր մէկ ուսումնասի-
րութեան մէջ, Քլոտ Մօրիաք կը նշէ.
«Այն՝ որ կը խօսի, ինքնաբերաբար եւ-
թակայ կ'ըլլայ խօսած լեզուին տրամա-
բանութեան եւ հնչարանութեան: Հետե-
ւաբար, գրագետը, որ ինքզինք կը գտնէ
անարտայայտելի մտածումի մը դէմ յան-
դիման, պարտաւոր է գործածելու իր
ամբողջ կարողութիւնը, որպէսզի կարե-
նայ գրել ա՛յն՝ որ իր մտքին մէջն է եւ
ոչ թէ գրէ բաներ, որոնք իրեն կը պար-
տադրուին ակամայ, լեզուին բռնաբան
միջոցաւ: Գրողը պէտք է կարենայ բա-
ռերուն տալ բնութեան կողմէ իրենց սան-
մանուած առաջնութիւնը՝ արտայայտե-
լու համար անորոշը: Հակասականն ու
անմտածելին»: Լեզուին տրամաբանու-
թեան ենթակայ ըլլալու վտանգը շատ ա-
ւելի առկայ է, երբ գրողը կը փորձէ ար-
տայայտուիլ իր մայրենի լեզուով. ու-
րովհետեւ այս պարագային շատ աւելի
ազդեցիկ է լեզուի իմաստներուն եւ զու-

գորգութիւններուն ենթադրականութեան վրայ ունեցած ներգործութիւնը: Գրելով օտար լեզուով՝ Պէքէթ վստահ է, որ դժբեղու արարքը իրեն համար կը շարունակէ ըլլալ յարատեւ պայքար մը, տառապազին մենամարտ մը նոյնինքն լեզուի ոգիին հետ: Ահա թէ ինչու ձայնասփռուի յայտադիրներուն տրուելիք թատերգութիւններ եւ այլ մանր-մունր գործեր ան նախնարած է գրել անգլերէնով՝ պարզապէս դադար մը տալու համար լեզուական իր պայքարին: Հետեւաբար, Պէքէթ նուազ արժէք կու տայ այս վերջիններուն, նկատի ունենալով, որ անոնց ծնունդը եղած է դիւրին եւ հանգստաւէտ Պայմաններու տակ:

«Մըֆի» պատմութեան ֆրանսերէն թարգմանութիւնը, որ լոյս տեսաւ 1947ին, մեծ ուշադրութեան շարժանացաւ, սակայն 1951ին լոյս տեսած «Մոլոյ» գործը աւաջացուց մեծ յուզում մը: Ամէն պարագայի, Պէքէթ իր գրականութեան մեծագոյն յաղթանակը տարաւ, երբ 3 Յունուար 1953ին, Պուլըվար Բասփայի փոքր թատրոնին՝ Պապիլոնի (ներկայիս քանդուած) մէջ բեմադրուեցաւ «Սպասելով Կոստյին» (Waiting for God) թատերգութիւնը: 1952ին, այդ թատերգութիւնը դրքի ձեւով Հրատարակուած էր արդէն եւ կը դանուէր Հրատարակի վրայ: Մէկ տարի ետք, սակայն, ֆրանսական յառաջապահ թատրոնի առաջնորդ Բոսէ Պլէն ձեռնարկեց զայն բեմադրելու աշխատանքին, անձամբ վերցրնելով Հերոսներէն մէկուն՝ Փոզոյի գերը: Եւ հակառակ բոլոր ակնկալութիւններուն եւ թատերգութեան անբեմադրելի ըլլալուն մասին ասարժուած շուկաներուն, այդ տարօրինակ եղբարգանչը, ուր ոչ մէկ դէպքի արձանագրութիւն կայ, պարտադրեց ինքզինք եւ դարձաւ յետպատերազմեան թատերական արուեստին շքեղ մէկ յաջողութիւնը: Պապիլոն թատրոնին մէջ անիկա ներկայացուեցաւ 400 անգամ եւ այնուհետեւ փոխադրուեցաւ փարիզեան այլ թատրոն մը: «Սպասելով Կոստյին» թատերգութիւնը թարգմանուած է ակելի քան 20

տարբեր լեզուներու եւ Փարիզէն դուրս ներկայացուած է Եռեւի, Զուիցերիոյ, Ֆինլանտայի, Իտալիոյ, Նորվեգիոյ, Ճանրմարքայի, Հոլանտայի, Սպանիոյ, Պելճիքայի, Թուրքիոյ, Եուկոսլաւիոյ, Իսրայէլի, Զեյթոնովաքիոյ, Փոլանտայի, Ճափոնի, Արեւմտեան Գերմանիոյ, Մեծն Բրիտանիոյ, Միացեալ Նահանգներու եւ նոյնիսկ Տուպիկի մէջ: Փարիզի մէջ, անոր առաջին ներկայացման հանդիսատես մարդիկ, յաջողող Հինգ տարիներուն, չվարանեցան ձաբորդի նաեւ այլ երկիրներ, կրկին անգամ ըմբոշանելու համար այդ առեղծուածային, գրգռիչ, ծայրայեղօրէն բարդ եւ յեղափոխական թատերգութիւնը, որ կը մերժէր եթերակուիլ թատրոնի դասականացած ըմբռնումներուն եւ կառուցման ձեւերուն:

Տեղին չէ այստեղ թուել այն բոլոր մանրամասնութիւնները, որոնցմէ անցաւ այդ աննախընթաց թատերգութիւնը իր սկզբնական բեմադրութիւններուն ընթացքին: Կը բաւէ մատնանշել, որ անիկա գրուեց թատրոնի ա՛նպամ խիստ եւ վերապահ կարծուած քննադատներուն համակրանքը եւ մեծ զնահատաններու արժանացաւ, ինչպէս, օրինակ, Ժան Անուլի կողմէ (որ Պապիլոն թատրոնին մէջ անոր բեմադրութիւնը համազօր ներկայացուած Փիրանտէլլոյի գործին բեմադրութեան եւ անոր յարուցած աղմուկին): Իրենց զնահատանքն ու համարումը փութացուցին նաեւ Թորնթոն Ուայլտոր, Թէնիսի Ուիլիամս եւ Ուիլիամ Մաքրոյիան (որ ըսաւ. «Այդ թատերգութիւնը անլիքի եւս պիտի դիրացնէ մեր բոլորին գործը՝ անլիքի ազատօրէն թատերգութիւններ գրելու համար»): Այսպէս, «Սպասելով Կոստյին» թատերգութիւնը 1955ի Օգոստոսին բեմ հանուեցաւ նաեւ Լոնտոնի մէջ, ուր ան հանդիպեցաւ Պէքէթի քննադատութեան: Հակառակ ատոր, սակայն, յիշեալ բեմադրութիւնը ա՛յնքան յաջող էր, որ անիկա Արուեստներու թատրոն ակումբ թատրոնէն փոխադրուեցաւ Արիւմոնան ծայրամաս

անունն թատրոնը, ուր խաղցուեցաւ երկար ժամանակ: Այնուհետեւ, 3 Յունուար 1956ին, անիկա առաջին անգամ բեմադրուեցաւ Միացեալ Նահանգներու Միամի Փլէյխաուս թատրոնին մէջ, ուր ստացաւ «երկու աշխարհամասերու խնդրալի յախում» որակումը, եւ դառնորէն յուսախարութեան մասինց հանդիսատեսները, պարզ ա՛յն պատճառով, որ Պէրթ Լաւր եւ Թոմ Էուէլ կը խաղային թափառաշրթիկներու դերերը: Բայց վերջապէս անիկա բեմադրուեցաւ Պրոտուէյի մէջ՝ միայն Պէրթ Լաւրի խաղարկութեամբ եւ ողջունուեցաւ զննադատներու կողմէ:

Պէթթի երկրորդ թատերգութիւնը՝ «Աւարտախաղ» (Endgame) դարձեալ Ռոմէ Գլէնի բեմադրութեամբ, առաջին անգամ պիտի ներկայացուէր Փարիզի մէջ, սակայն վերջին ժամուն անիկա հանդիպեցաւ թէքնիք արդիւններու եւ փոխադրուեցաւ Լոնտոնի Ռալֆ Քոքս թատրոնը եւ ներկայացուեցաւ Փրանսերէն լեզուով 3 Ապրիլ 1957ին: Այս ձեւով, Լոնտոն խլեց համաշխարհային հռչակ վայելող դրագէտի մը թատերգութեան առաջին բեմադրութիւնը ի՛ր բեմերուն վրայ ուսննայու պատիւը: Աւելի ուշ, «Աւարտախաղ» թատերգութեան տեղ տրուեցաւ Փարիզի թատրոններէն մէկուն մէջ, եւ այնուհետեւ երկար ժամանակի մը համար խաղցուեցաւ Սփիտիոյ Շան գ'էլիզաբէի մէջ: «Աւարտախաղ»ին դարձեալ Լոնտոնի մէջ, յետոյ՝ Նիւ Եորքի եւ Սան Ծրանսիսքոյի մէջ անդրերէն լեզուով տեղի ունեցող բեմադրութիւնները գտան յայն յաջողութիւններ:

Թերեւս կ'արժէ յիշել, որ «Աւարտախաղ» թատերգութեան առաջին ներկայացման ընթացքին միաժամանակ կը ներկայացուէր այլ թատերադրութիւն մը՝ «Տաղարկութիւն» առանց ես բառիմ» (Act without words I) թատերախաղը, Տէրթ Մէնտէլի բեմադրութեամբ, իսկ Պէթթի կայացուէր այլ թատերգութիւն մը՝ յորինած էր այդ երկու թատերգութիւններուն համար: 28 Օգոստոս 1958ին, երբ «Աւարտախաղ» կը ներկայացուէր անգլերէն լեզուով, անոր կ'ընկերակցէր

«Բրէյի վերջին երկը» (Krepp's last tape) անուն թատերգութիւնը, գրուած նոյնպէս Պէթթի կողմէ, անգլերէն լեզուով, որ նախապէս արդէն բեմադրուած էր Փարիզի (Պէթթի Փրանսերէն թատրգութեամբ) եւ Նիւ Եորքի մէջ:

«Բրէյի վերջին երկը» ներկայացուեցաւ ձայնասփիւռի նշանաւոր խօսնակ Տոնըլտ Մըլիկինի կողմէ, որ զործնական գտնուեցաւ, Պէթթի զբէլ տալու համար երկու այլ թատերգութիւններ, ժամանաւորաբար Պի. Պի. Սի. Բերրոզ Յայտագրին համար: Այդ երկու թատերգութիւններն էին «Աւելի բան, որ կ'իյնայ» (All that fall) առաջին անգամ ձայնասփուռում 13 Յունուար 1957ին, եւ «Պահ» (Embers) թատերգութիւնը, որ առաջին անգամ ձայնասփուռուեցաւ 28 Հոկտեմբեր 1959ին: Այնքան անշարք է Պէթթի թատերական գործերուն եւ պատճառով զնորուն միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնը, որ այդ վերջիններէն եւս հատուածներ ձայնասփուռուած են թատերական մեծախօսութիւններու ոճով: Այսպէս, Պի. Պի. Սի. Բերրոզ Յայտագիրը ներկայացուցած է «Մալլոյ» (10 'Իեկտեմբեր 1957ին), «Լքուած գործ մը» (From an abandoned work) (14 'Իեկտեմբեր 1957ին), «Մալոն կը մեռնի» (Malone dies) (18 Յունիս 1958ին) եւ «Անոմալիան» (The unnamable), (19 Յունուար 1959ին):

1961ին, «Ենչպէս է» (Comment C'Est) պատճառով, Պէթթի կը հասնէր գառնադոյնը զեղեցկացնելու արուեստի նոր մակարդակի մը: Այդ վէպին մէջ կը ներկայացուի խորհրդաւոր աշխարհ մը, ուր միայնակ արարածներ իրենց փորին վերայ անդադար սողալով կը յառաջանան եւ ատենը հեղ մը կը հանդիպին իրենց նմաններուն, կը կենան եւ այլանդակ շարժումներով կը փորձեն խօսակցիլ, ապա՝ դարձեալ կը շարունակեն սողալ, անվերջ: «Ուրախ օրեր» (Happy days) անուն թատերախաղը առաջին անգամ ներկայացուեցաւ Նիւ Եորքի Չերի Դէյն Թէաթր թատրոնին մէջ, 17 Սեպտեմբեր 1961ին, Ալան Շնայտլըի բեմադրու-

Թեամբ հւ Բուժ Ուսմանը գլխավոր խա-
 զարկուժեամբ: Յետոյ՝ ներկայացուեցաւ
 Լոնտոնի Բուլը Գործ Թատրոնին մէջ,
 Ճորճ Տիվայի բեմադրութեամբ, 1 Նո-
 յեմբեր 1961ին: Այնուհետեւ, 1963ի Հոկ-
 տեմբերէն ետք, մեծ յաջողութեամբ սկը-
 սաւ բեմադրուիլ Օտէնի մէջ: Նոյն կար-
 գի Թատրոնին մըն է շուրջը (Play),
 որուն առաջին բեմադրութիւնը տեղի ու-
 նեցաւ գերմաներէն լեզուով՝ Ուլմի մէջ,
 14 Յունիս 1963ին: Այնուհետեւ անկա-
 ներկայացուեցաւ անգլերէն՝ Նիւ Եորքի
 (4 Յունուար 1964ին) եւ աւելի ետք Լոն-
 տոնի մէջ, զարմեալ 1964ին: Թէ՛ «Ու-
 յայն օրեր» եւ Թէ՛ շուրջը Թատրոնու-
 թիւններուն մէջ տիրակա՛ն էր այն տա-
 րորինակ եւ խորհրդաւոր մթնոլորտը,
 զոր Պէքէթ ստեղծած էր իր «Ինչպէս է»
 վէպով:

Մանրանկար Թատրոնութիւն մըն է,
 Լեթ կարելի է այդպէս որակել, «Եկուք
 եւ գնա՛ք» (Come and go) անուն Թատրո-
 դութիւնը, որ առաջին անգամ ներկա-
 ցուցուած է գերմաներէն Թատրոնու-
 թեամբ, Արեւմտեան Պերլինի Երկր
 Թատրոնին մէջ, 14 Յունուար 1966ին:
 Անիկա կը ներկայացնէ Պէքէթի գրական
 մէկ նոր փորձ-գալը զէպի խտութիւն եւ
 մանրանկարացում:

Պէքէթ, որ միշտ խանդավառ եղած
 է ձայնասփռումի թեքնիք յաջողութիւն-
 ներով, նորանոր գրութիւններ կը տրա-
 մազրէ ձայնասփռումին, ախտաբերով իր
 գործին մէջ միաձուլուած ներկայացնել
 գրականութեան եւ երաժշտութեան ար-
 ւեստները: «Քառեր եւ կրօնաբանութիւն»
 (Words and music) անուն ներկայացու-
 մը, որուն իր կարեւոր մասնակցութիւնը
 բերած է նաեւ Պէքէթի երաժիշտ ազգա-
 կանը՝ Ճոն Պէքէթ, առաջին անգամ ձայ-
 նասփռուեցաւ Լոնտոնի Պի. Պի. Սի. կա-
 յանին Երրորդ Յայտարարէն, 13 Նոյեմ-
 բեր 1962ին: Փրանսական ձայնասփռուէն
 առաջին անգամ ձայնասփռուեցաւ Փրան-
 սերէն լեզուով գրուած «Քառեր» խա-
 ղը, 13 Հոկտեմբեր 1963ին: Նոյն այդ
 յայտարարը կրկնուեցաւ Գերմանիոյ
 ԵՄուսկարտի կայանէն, 16 Հոկտեմբեր

1963ին: Իսկ 28 Հոկտեմբեր 1963ին,
 «Քառեր» անգլերէնով ներկայաց-
 ւեցաւ Պի. Պի. Սի. քն:

Ճիւղաշարահի մարզէն ներս Պէքէթի
 մուտքը տեղի ունեցաւ այն օրերուն, երբ
 Նիւ Եորքի մէջ ամերիկացի բեմադրիչ-
 ներ ծրագրեցին պատրաստել Ֆիլմ մը,
 սր պիտի ընդգրկէր երեք կարճ գրու-
 թիւններ, գրուած՝ Պէքէթի, Իոնեսքոյի
 եւ Փինթրի կողմէ: Յարգ, Ալէն Ենայ-
 աբրի բեմադրութեամբ, կարելի եղած է
 իրագործել Պէքէթի պատկանող բաժինը
 միայն: Անիկա ներկայացուած է 1965ի
 Օգոստոսին, Վիեննա Պիլմալ Թատրոնին
 մէջ: Ճիւղին գլխավոր դերակատարու-
 թիւնը ստանձնած էր Համր սինեմայի
 Համբաւաւոր կատակերգակը՝ Պասթըր
 Ֆիթըն, որուն հանդէպ ինքը՝ Պէքէթ,
 մեծ հիացում ունէր: Այս դերը եղած է
 Ֆիթընի մահը կանխող վերջին մեծ յա-
 ղողութիւնը:

Պատկերասփռուի Համար պատրաստ-
 «Էի, Ճօ» Թատրոնութիւնը 1965ին կը
 ներկայացուի Գերմանիոյ մէջ եւ Հեղի-
 նակին Համար կը բանայ աշխատանքի
 նոր մարզ մը: Այս բոլորը կը հաստա-
 տեն, որ Պէքէթ մտալով հանդերձ ծա-
 բայեղօրէն պարզ, միաժամանակ կրնայ
 պեղել եւ գրուել արուեստի զանազան
 ասպարէզներ:

Սամուէլ Պէքէթի Համարի բարձրա-
 ցումը զարմանալի պատմութիւն մըն է
 Համեստութեան, ծայրայեղ զոհարերու-
 մի եւ խտապահանջ սկզբունքներու, ու-
 բոնք, սակայն, սահմանուած են պսակ-
 ւելու անպատում Համակրտնքով եւ Հա-
 մաշխարհային յաջողութեամբ:

Անցեալի բարձրահասակ ու վայելուչ
 երիտասարդը՝ Պէքէթ, շատոնց թեւակո-
 խած է իր վաթսուն տարիքը, սակայն կը
 մնայ նոյն պարզ, ազնիւ եւ նոյնիսկ
 ամչկոտ անձը: Ինքնավստահութիւն ներ-
 չնչոյ իր Համբաւն ու մեծութիւնը ո՛չ
 մէկ ազդեցութիւն ձգած են Պէքէթ մար-
 դուն եւ անոր վարուելակերպին վրայ:
 Եւ ինչ որ ամէնէն զարմանալին է Պէքէ-
 թի պարագային, այնքան տարորինակ

գիւտերով եւ այլանդակ կերպարներով յորդող գրականութեան մը հեղինակը ըլլալով հանդերձ՝ ան թիրեւս աշխարհի ամէնէն խաղող եւ հաւասարակշռուած մարդոցմէ մէկն է: Պէջէթ ամուսնացած է, եւ զրական աշխատանքներէ դուրս իր ժամերը կ'անցընէ Փարիզի եւ շրջակայ գիւղերուն մէջ: Ան կը խուսափի գրական հաւաքոյթներէ եւ կը նախընտրէ ըլլալ տան մէջ՝ գծագրիչներով շքուղի ստուար: Պէջէթ կը շարունակէ մարդկային կացութիւններ պեղող իր հետախուզութիւնը եւ ամէնուրեք կը փրկուէ պատասխանը հետեւեալ հիմնական հարցումներուն. «Ո՞վ եմ ես: Ի՞նչ ըսել կ'ուզեմ, երբ կ'ըսեմ ես»: Պէջէթ հիմա կը գրէ տեւի դանդաղ եւ աւելի մեծ դժուարութեամբ, քան այն ատեն, երբ կը մտանէր ստեղծագործական մեծ տարերջ մը:

«Սպասելով կտառի» թատերգութիւնը Ամերիկայի մէջ առաջին անգամ բեմադրողը՝ Այան Շնայտը, երբ հարց տուաւ Պէջէթի, թէ ի՞նչ կ'ուզէր ըսել ան կոտո անուր տղով, ստացաւ հետեւեալ պատասխանը. «Սքէ գիտնայի, պիտի ըսէի առիկա թատերգութեան մէջ»:

Այս մէկը անհրաժեշտ նախազուշացում մըն է բոլոր անոնց, որոնք Պէջէթի թատերգութիւններուն կը ժողովան ի մտի ունենալով յայտնաբերել քանալի բառը, եւ կամ՝ ուղեւոր բացատրել ճիշդ գրիտ բառերով այն, ինչ որ հեղինակը ուզած է ըսել: Նման ժողովում մը արտօնելի է միայն այնպիսի՝ հեղինակներու պարագային, որոնք ճամբայ կ'ելլեն փիլիսոփայական կամ բարոյական բացորոշ մէկ ըմբռնումով եւ կը ջանան առարկայական յաւելիալ բացատրութիւններ եւ լուսաբանութիւններ տալ ատոր շուրջ, ստեղծելով պատմութիւն եւ սիւպարներ: Բայց նոյնիսկ նման գործերու պարագային, եթէ հեղինակը յաջողած է գործածել ստեղծագործ երեւակայութիւն՝ բառացի բացատրութիւնները դասապարտուած են ձախուղութեան եւ գործը կը շարունակէ մնալ տեւի հարուստ

եւ բարդ, հետեւաբար՝ աւելի ենթակայ տարբեր մեկնաբանութիւններու: Որովհետեւ, ինչպէս Պէջէթ ինքը կը մատնանչէ ձոյսի գիտը յառաջդիմութեամ մէջ» անուն գրութեան մասին գրած յոդուածին մէջ, արուեստի ծնունդ եղող գրութեան մը մէջ անկարելի է իրարմէ անջատել ձեւը, կառուցը, մթնոլորտն ու վերլուծական պարունակութիւնը, պարզապէս որովհետեւ արուեստի գործը ամբողջութեամբ այն է՝ ինչ որ կը թեւադրէ իր իմաստը, եւ ինչ որ այդտեղ ըսուած է՝ անքակտելիորէն կապուած է այն ոճին, որով ստիկա ըսուած է, եւ այդ բոլորը չեն կրնար ըստիկ ուրիշ որեւէ ձեւով: Գրադարան մը լեցնող գիրքեր հրատարակ հանուած են, որոնք բոլորն ալ կը փորձեն շարունակել նման թատերգութիւն մը պարզօրէն բացատրել քանի մը կարճ նախադասութիւններով եւ բառերով, այդ բոլորով հանդերձ թատերգութիւնը ինքը կը շարունակէ մնալ ամէնէն տեւի պարզ եւ իր նշանակութիւնն ու պատգամը բացատրող գրութիւնը, որովհետեւ երկրորդական նկատուող կարգ մը աստիճանութիւններ եւ հակադրութիւններ իրականութեան մէջ անհրաժեշտ են մարդկական ձեւով մը բացատրելու համար թատերգութիւնն ու անոր բերած ամբողջական պատգամը:

Այս նկատողութիւնները զանազան շափանիչներով կիրարկելի են արուեստի բոլոր գործերուն պարագային, բայց մասնաւորաբար ի զօրու են եւ հիմնականորէն կ'աւրելին այն գրութիւններուն, որոնց հեղինակը կապէս տարուած է ստեղծելու խորհրդաւոր մթնոլորտ մը, աշխատելով փոխանցել մարդկային կացութեան առջեւ իր ապրած շփոթն ու անձկութիւնը, միաժամանակ խոստովանելով այն յուսախարութիւնը, որ կ'ուրեւնայ՝ անկարող ըլլալով իմաստ մը գտնել իր գոյութեան: «Սպասելով կտառի» թատերգութիւնը կը ստեղծէ անորոշութեան մթնոլորտը, այդ տարատարութիւնն ու կասկածը կ'ենթարկուին սեղատուութեան եւ մակընթացութեան — երբ ընթերցողը յաճախ կը յուսայ գտած

ըլլալ Կոտոյին ինքնութիւնը, սակայն միշտ ալ կը դատապարտուի ձախողութեան — անաւասիկ այս բոլորը կը կազմեն թատերգութեան էութիւնը: Քննադատական մտեցումի որեւէ փորձ, որ կը միտի յայտարարել Կոտոյին ինքնութիւնը, պիտի նմանի ճիշդ ու ճիշդ այն արարքին, երբ մարդ կը փորձէ Րէմպրանտի մէկ պատաստին վրայ արուեստապէսին ըրած ստուերախաղը ջնջելով՝ դառնել պատաստը գունաւորող ներկը:

Այսուհանդերձ, բնական է, որ մասնաւորաբար անսովոր եւ շփոթեցրնող ձեւերով գրուած թատերգութիւնները պէտք ունին յատուկ բացատրութիւններու, որոնք պիտի յայտնակերպեն անոնց թաքուն իմաստը եւ զանոնք պիտի թարգմանեն ամէնօրեայ եւ հասկնալի լեզուին: Յամենայնդէպս, այս կարգի ենթադրութիւններու հիմնական աղբիւրը այն սխալ հասկացողութեան մէջ է, իրաւորում՝ կարելի է վերոյիշեալ թատերգութիւնները վերածել «բնական» թատերգութիւններու շարքի մը, օժտելով զանոնք պատմելի ձեւով ամփոփուող կասկածով մը: Ընթերցողներու որոշ մէկ մասը ունի այն կարծիքը, որ երբ կարելի ըլլայ գտնել թատերգութիւնը լուսարանող բանալի բացատրութիւն մը, այլեւս գտնուած կը նկատուի անոր ետին խորհրդաւորապէս ծածկուած գաղտնիքը: Նման փորձեր պարզապէս դատապարտուած են ձախողութեան: Պէթթի թատերախաղերուն մէջ կատոյցը կը պահուի աւելի շեշտուած ձեւով, քան անհեթեթ թատերակի պատկանող ուրիշ որեւէ գործի մը մէջ: Փոխանակ հորիզոնական զարգացման, այդ գրութիւնները կը ներկայացնեն չնդիմակի մարդկային կացութեան հանդէպ ունեցած ըմբռնում մը (intuition) հապէս կարեւոր բազմաձայնութեան մէկ եզանակով: անոնք բոլորն ալ իրենց հանդիսատեսները դէմ յանդիման կը հասնեն կազմակերպուած եւ վերաբ խառնաձեւ պատկերներու եւ կացութիւններու, զորս հարկ է ըմբռնել միմիայն իրենց ամբողջութեան մէջ, յար եւ նման համանուագային այն երե-

ւոյթին, ուր ձայնային նրբերանգները պէտք է համախմբուին՝ կազմելու համար համանուագին ամբողջական գեղեցկութիւնը:

Բայց եթէ կ'ուզենք զոյժ ըլլալ Պէթթի խաղերուն մեր մտեցումին մէջ, փորձելով խուսափիլ զանոնք պարզապէս իրաւոր փորձէն, մենք կրնանք ուսումնասիրել Պէթթի՝ անջատելով անոր գրական պատկերները եւ մանրամասն ուսումնասիրելով այդ պատկերները նոյն առանձինն եւ ապա դիտուած ամբողջին լոյսով: Քննարկումի նման կերպ մը կըրնայ մեծապէս դիւրացնել ոչ անպայման պատասխաններ գտնելու արարքը, այլ մանաւանդ լուսարանելու այն խարցումները, զորս հեղինակը կ'ուզէ ինքզինքին եւ բոլորին:

«Սպասելով Կատոյին» թատերգութիւնը պատմութիւն մը չի հայթայթեր մեզի, այլ կը հետախուզէ կայուն կացութիւն մը: «Ոչ մէկ բան կը պատահի, ոչ ոք կու գայ, ոչ ոք կ'երթայ, անաւար է»: Գիւղի մը ճամբուն վրայ, ծառի մը ծոց, երկու թափառաչողիկներ՝ Վլասիմիրն ու Էսթրակոնը, կը սպասեն: Ասիկա ներկայացման առաջին արարին ժուռի տեսարանն է: Առաջին արարի վերջաւորութեան, անոնք կ'իմանան, որ պարոն Կոտոն, որուն հետ ժամադրութիւն ունէին, պիտի յարեանայ զալ... ամէն պարագայի, զիբենք կը վստահեցնեն, որ պարոն Կոտոն անպայմանօրէն պիտի գայ յաջորդ օր: Երկրորդ արարին մէջ կը կրկնուի միեւնոյնը: Նոյն տղան կը հասնի եւ կը բերէ նոյն լուրը: Առաջին արարը կ'աւարտի հետեւեալ ձեւով.

ԷՍՏՐԱԿՈՆ — Լաւ, երթա՞մք մենք: ՎԼԱՍԻՄԻՐ — Այո՛, երթա՞մք:

(Անոնք չեն շարժիր իրենց տեղերէն):

Երկրորդ արարը կ'աւարտի նոյն երկախօսութեամբ, այն միակ տարբերութեամբ, որ առաջին խօսակիցը կ'արտասանէ երկրորդին խօսքերը, իսկ երկրորդը կ'ըսէ այն, ինչ որ առաջինը ըսած է:

Իւրաքանչիւր արարին մէջ գէպքերու յաջորդականութիւնն ու երկախօսութիւնը տարբեր են: Ամէն անգամ, տար-

բեր հանգամանքներու մէջ, երկու թափառականները կը հանդիպին ուրիշ գորգի մը, Փոզգոյին եւ Լաքիին, — տէր եւ սարուկ: Ամէն անգամ Վլատիմիր եւ Էսթրակոն անձնասպանութիւն կը փորձեն եւ կը ձախողին՝ տարբեր պատճառներու բերումով: Եւս տարբերութիւնները, սակայն, մտցուած են կանխամտածուած ձեւով մը, թերեւս շեշտելու համար իսկ ղէպքերու էական նորոգութիւնն ու կոչութեան անփոփոխութիւնը — Քորճան ատիկա փոխուի, այնքան նայը կը մընայ»:

Վլատիմիր եւ Էսթրակոն — որոնք զիւար կը կոչեն Տիտի եւ Կոկո, թէեւ Վլատիմիր լրաբեր տղուն կողմէ կ'անւանուի պարոն Ալպէր, և Էսթրակոն, երբ անունը հարցուի, անվարան կը պատասխանէ, թէ Քաթիլլիւս կը կոչուի — երկու տիպարներ են՝ պարզօրէն սանուած միւզիք-հնչիւրու կատակերգակ դերասաններու օրինակին հետեւողութեամբ: Անոնց երկախօսութիւնը յուսակօրէն կը ցուցնէ յիշեալ կատակերգակ դերասաններու խօսելածէն, եւ շատ յաճախ կրկնութիւններով արտայայտուելու յատկանշական ոճը:

Էսթրակոն.— Այնքան երկար, որքան մէկը գիտէ:

Վլատիմիր.— Մարդ կրնայ սպասել իր ժամանակին:

Էսթրակոն.— Մարդ գիտէ, թէ ինչ պէտք է ակնկալէ:

Վլատիմիր.— Ոչ մէկ պատճառ այլեւս մտախոզուելու:

Եւ ահաւասիկ աւելի յատկանշական հատուած մը՝ միւզիք-հնչիւրու կրկնութիւններու ցուցնող.

Վլատիմիր.— Մե՞նք կ'ունենանք հանելի երեկոյ մը:

Էսթրակոն.— Ամուսնացա՞յի:

Վլատիմիր.— Եւ տակաւին ատիկա վերջացած չէ:

Էսթրակոն.— Երեւութապէս՝ ոչ տակաւին:

Վլատիմիր.— Ասիկա տակաւին միայն սկիզբն է:

Էսթրակոն.— Սարսափելի է:

Վլատիմիր.— Աւելի գէշ է, քան թատրոնի մէջ ըլլալը:

Էսթրակոն.— Կրկնէ:

Վլատիմիր.— Երաժշտութեամ սրա-

նը:

Էսթրակոն.— Կրկնէ:

Աւելի եւս հարագատ մնալու համար կրկնային աւանդութեանց՝ կայ նաեւ մարմնական բիրտ հիւժոթի բաժինը. Էսթրակոն կը կորսնցնէ իր տարատը, նաեւ երկու թափառաշրջիկները իրենց ձեռքերուն մէջ ունին երեք զլխարկներ, զորս իրարու կը փոխանցեն անընդհատ եւ կը տրորին անհանդիսա եւ շխաթած շարժումներով: Նիջուս կէսերը անուն դրագէտ մը, որ թեղ մը պատրաստած է Պէլլի մասին, իր դրութեան մէջ խնդրոյ առարկայ այս թատերգութեան համար յատկացուցած է քառասունը՛հնգ բեմական ցուցմունքներ, որոնցմէ մէկուն մէջ կը պնդէ, թէ այդ երկու թափառաշրջիկներէն մէկը պէտք է գլխիվայր մնայ, խորհրդանշելու համար մարդուն արժանատութեան գրացումը:

Դէ՞մ յանգիման խօսակցութեան մը իրրեւ անդամներ՝ Վլատիմիր եւ Էսթրակոն կը մնան իրարու լրացուցիչ անձնաւորութիւններ: Վլատիմիր աւելի գործնական է, քան իր ընկերը, մինչ Էսթրակոն կ'անդրադառնայ, որ ո՛րքան աւելի ուտէ, ա՛յնքան թիւ կը սիրէ ստեպղինը, մինչդեռ Վլատիմիրի անդրադարձը հակառակ ուղղութեամբ կ'ընթանայ. ան որեւէ բան կը սիրէ ա՛յնքան աւելի, որքան որ ժամանակի ընթացքին վարժուի տար: Էսթրակոն թէթեւ է, Վլատիմիր՝ ծանր: Էսթրակոն կ'երազէ, Վլատիմիր չի կրնար հանդուրժել երազներու մասին լսել անգամ: Վլատիմիրի շուշը կը հոտի, Էսթրակոն գարշահոտ ուտքեր ունի: Վլատիմիր կը շարունակէ վերջիչի անցեալի պատահարները, Էսթրակոն կը ջանայ մոռնալ որեւէ ղէպք անմիջապէս որ անիկա պատահի: Էսթրակոն կը սիրէ պատմել զուարթ պատմութիւններ, Վլատիմիր յուսախաբութեան կը մատնուի՝ մտիկ ընելով դանդաղ: Մասնաւորաբար

Վլատիմիրն է, որ անընդհատ կը կրկնէ, թէ Կոտոն պիտի գայ, եւ անոր զալուստը շատ բան պիտի փոխէ իրենց կացութենէն, մինչ իսթրական բողոքովին անտարբեր է եւ երբեմն նոյնիսկ կը մոռնայ Կոտոյի անունը: Դարձեալ Վլատիմիրն է, որ կը խօսի եւ կը հարցաքննէ Կոտոյի լրարբեր տղան եւ անոր է, որ սղան կ'ուզէ իր խօսքը: Իսթրական ֆիզիքապէս աւելի տկար է. ամէն գիշեր խորհրդաւոր անծանօթներ կը շարժարեն դիմք, նման ատիթներով, Վլատիմիր պաշտպան կը կանդնի անոր, որոր կ'երգէ՝ քնացնելու համար զայն, եւ երբ քնանայ՝ կը ծածկէ իր վերաբերումը: Նկարագրի այս ծայրայեղ հակադրութիւնը անվերջանալի վէճերու առթիւ կը ստեղծէ անոնց միջեւ, եւ հանդիսատեսը յաճախ կը տրամադրուի եւ կը համոզուի այն զազափարին, որ շուտով երկու ընկերները պէտք է բաժնարին իրարմէ: Բայց միաժամանակ, ըլլալով լրացուցիչ խառնուածքներու տէք անձեր, անոնք երբեք անկախ չեն իրարմէ եւ ստիպուած են մնալ միասին:

Փողօք եւ Լաքի նոյնքան լրացուցիչ նկարագրներ ունին, սակայն, անոնց փոխյարաբերութիւնները կը մնան աւելի նախնական մակարդակի մը վրայ. Փողօքն սատիք գործատէրն է, զորաւոր եւ ինքնապատահ. ան կը ներկայացնէ աշխարհիկ մարդը՝ իր բալոր գիւրին եւ անհեռատես լաւատեսութեամբ եւ ուժի ու յաւիտենականութեան մասին ունեցած պատրանքով: Լաքին ո՛չ միայն ստիպուած է կրելու ճամբորդական ծանր պայուսակը, այլեւ իր ձեռքին ունի նոյնիսկ այն պուստակը, որով իր տէրը կը ծեծէ զինք: Լաքին պարտաւոր է նաեւ պարել եւ հոգ տանիլ իր տիրոջ: Իրականութեան մէջ, Լաքին կը կարծէ, որ Փողօք ունի կեանքի բոլոր բարձր յատկութիւնները. «գեղեցկութիւն, շնորհք, ճշմարտութիւն» իր ակէն իսկ»: Փողօք եւ Լաքի կը ներկայացնեն մարմինն եւ մտքին միջեւ գոյութիւն ունեցող փոխյարաբերութիւնը, մարդուն նիւթական եւ հոգեկան երեսները, միշտ շնչառելով մարմնական ախորժակներուն հանդէպ մարդուն ունեցած

ենթակայութիւնը: Հիմա, որ Լաքիի ուժերը կը սկսին դաւաճանել իրեն, Փողօք կը զանգատի իրեն պատճառուած անասելի ցուերու մասին: Ան կը փափաքի ձերբազատուիլ Լաքիէն, եւ զայն ծախել սոնալմանտի ընթացքին: Բայց թատերգութեան երկրորդ արարին մէջ, երբ անոնք կը վերերեւին՝ տակաւին կապուած կը մնան իրարու: Փողօքն կուրցած է, իսկ Լաքին՝ համրացած: Երբ Փողօք կը ստիպէ Լաքին աննպատակ ճամբորդել, անդին Վլատիմիր կը պարտադրէ իսթրական սպասել Կոտոյին:

Մեծ ճիգ սպառած է անուաղն հայթաթելու համար ստուգարանութիւն մը Կոտո անունին, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլայ վեր հանել Պէքէթի գիտակցական կամ ենթագիտակցական այն նըպատակը, զոր ունեցած է զայն բնորակով իբրեւ առարկայ Վլատիմիրի եւ իսթրականի սպասուածին: Կը կարծուի, թէ Կոտո անունը պարզացուած եւ տկարացուած ձեւն է Աստուած բառին — անգլերէնով՝ «God» —: Կը կարծուի նաեւ, որ Պէքէթ իր գրքին խորագրերը ընտրած է հետեւելով Միմոն Ուէյլլի եւ անոր գրքին՝ «Ապստիլով Աստուծոյ»: Այսուհանդերձ, Կոտո անունը կրնայ նաեւ ըլլալ պարզապէս դրական խորհրդանիշ մը. ինչպէս իրիք Պէքէթ Լի կը մատնանշէ Պալպաքի թատերգութիւններէն «Արարողը» («Le Faiseur»), կամ «Մարքատէ» կոչուող կատակերգութիւնը, ուր գոյութիւն ունի Հերոս մը, որ կը կոչուի Կոտո, եւ որուն մասին կը խօսուի յաճախ, հակառակ անոր, որ Կոտոն երբեք չ'երեւար բեմին վրայ: Մարքատէ լուսաբանութիւնն է, որ սովորութիւն ունի իր նիւթական գործարարութիւններուն մասին խորհրդակցելու իր նախկին գործընկերոջ՝ Կոտոյին հետ, որ տարիներ առաջ բաժնեկից կը անոր գրաժանգութիւնն. «Եւ կը կրնմ Կոտոյի անիլին ծանրութիւնը»: Միւս կողմէ, Կոտոյի զիպուածով վերադառնալուն եւ պարտքերու վճարումին սպասուածք աստիճանաբար կը զարգանայ Մարքատէի մէջ, բազմաթիւ վարկ բացողներու աչքին առջեւ: «Եւրաբանչիւր ո՞վ ունի իր

կտան, կեղծ ֆրիստափոր Գոյամկուս մը: Բոլոր կտտներէն ետք... կը կարծեմ տակալին, որ առ ինձմէ առածէն աւելի դրամ հայրապարտ է ինձի»:


Այս ձեւով «Մարտառ» կատակերգութեան նիւթը կը կարծուի Հիմնուած ըլլալ ամուլ եւ ցնորական սպասուածի մը վրայ: Բայց կեղծիքը կը զողագրծուի: Մարքատէ վերջնականապէս խորտակուած ըլլալ կը թուի: Այդ վարկեանին, կը յայտարարուի ճշմարիտ Կոտոյին ժամանուածը, որ կը վերադառնայ Հնդկաստանէն, Հսկայ Հարստութեան մը տէր դարձած: Թատերախաղը կ'աւարտի Մարքատէի բացադանութեամբ: «Ես այնքան անգամներ ցոյց տուի կտտն, որքան իրաւունք ունէի զայն տեսնելու: Երբանք տեսնեմ կտտն»:

Պէտք թի եւ Պալլաքի այս թատերախաղերուն միջեւ գտնուող այս դուզանեականները ա՛յնքան ակներեւ են, որ կարելի չ'ըլլար այդ բոլորը վերադրել պարզ գուշադիրպութեան մը: Պէտք թի եւ Պալլաքի երկերուն մէջ սոցալումը անձկանքին վիճակ մը կը ստեղծէ, որ պիտի փարատի Կոտո անուն անձին երեւումով տակալին՝ Պէտք թի այնքան խանդավառ է դրական ակնարկներու գործածութեամբ, որքան ձոյսը:

Յամենայնդէպս, ինչ որ այ խորհրդանշէ Կոտոն, գերմարդկային արարած մը, կամ մարդկային միտքի էակ մը, որուն ժամանուածը կացութիւններ կը փրկէ, երկրորդական է ճշդել անոր Ֆիլիքական էութիւնը: Թատերգութեան նիւթը Կոտոն ինքը չէ, այլ սպասուածը, սպասուածի արարքը իրեն Հիմնական եւ յատկանշական մէկ երեւոյթ մարդկային կացութեան: Մեր կեանքի ամբողջ տեսողութեան մենք կը սպասենք բանի մը, եւ Կոտոն պարզապէս կը ներկայացնէ մեր սպասուածին առարկաները — դէպք մը,

բան մը, անձ մը, մահը: Աւելին. սպասուածի կացութեան մէջ է, որ մենք փորձառութեան ու ըմբռնումը կ'ունենանք ժամանակին՝ իր բիրեղային եւ բացայայտ ձեւին մէջ: Եթէ մենք գործընթացքի մէջ ըլլանք, կը մոռնանք, թէ ինչպէս կ'անցնի ժամանակը, մենք է, որ կ'անցընենք զայն, սակայն եթէ պարզապէս կրաւորական ձեւով մը կը սպասենք, այն ատեն մենք զէ՛մ յանդիման կը դրուինք ժամանակի արարքին հետ: Ինչպէս Պէտք թի ինք կը մատնանէ Փրուտի նուիրած իր վերլուծումին մէջ. «Փախուստ չկայ օրերէն եւ ժամերէն: Ոչ վաղուքն է եւ ոչ այ երեկուքն է, որակետեւ երէկը ճիւղաւոր է մեզի եւ կամ ճիւղաւոր է մեզմով: Երէկը տարածութիւն մը չէ, գոր կարած ու անցած ենք, այլ ժամանակի չափ մըն է՝ կարած տարինքու գումարէն, որ մաս կազմած է մեզի, մեր մէջ է. ծանր եւ վտանգաւոր: Մեզ հասուն չենք միայն անգարման լիթով այն պատճառով, որ երէկը հասունացած է մեզ, այլ մեզ պարզապէս ուրիշ ենք, տարբեր, քան այն, ինչ որ էինք երէկուան նախորդակին»: Ժամանակի սահմանը մեզ զէ՛մ յանդիման կը դնէ լինելութեան Հիմնական խնդրին — էութեան բնութեան խնդրին, որ ենթակայ է ժամանակի անընդմէջ փոփոխութեան եւ հետեւարար միշտ ենթակայ՝ մեր հասողութեան սահմաններէն դուրս մտալու — «ամենատիպաբան, որուն յուսերական իրաւութիւնը կարելի կ'ըլլայ միայն հասկնալ յետահայնաց տրուելով մը: Անհատը ենթակայ է տարբարադարձումի անընդհատ գործողութեան մը, թայլ, դալուկ եւ միազոյն, որ կը դուրս անցնալ ժամանակը պարունակող շիշի մը մէջ եւ հետեւարար կը գումարարուի անոր ժամանակներու երեւոյթով»:

(Շար. 2)



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԿՈՊ ԴԱՆԷԼ (Յուշագրություն) Անտիս Պալուզեան, Թեհ-
րան, 1972

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՈՎ (Հեփաթներ ու աւանդութիւն-
ներ) Կ. Մեհեան, Պէյրութ, 1973

ՆԻՔՈՒԱ ԵՈՐՔԱՅԻ ՀԵՑ (Ուսումնասիրություն) Յ. Ճ. Սի-
րունի, Երասրակություն Հայկ Սէրէնկիլեան Գրա-
կան Մրցանակի — թիւ 3

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿՇ ՏԵՍԷ

Ս Ա Ր Գ Ի Ս Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Ա Յ Ս Է Ա Ր Ի Ի Ն Ի Մ

(Բանաստեղծություններ)



ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱԶԱՌ 2.50 Լ. ՈՍԿԻ



باکین
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك فزانجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆՈՒ ԱՐԹԻՏԻԿԻ

ՎԱՐՈՋ ԽՄԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ -
ԽՄԱԳԻՐ
Գ. ՍՆԱԳՆԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունը հասցե

G. SASSOUNI

Rue Sélim Boustani
Beyrouth - Liban